

2373

Worrell

9(47)

9 - 49



革命

W

045 - 19/1328

30 MAY 2011

24 JAN 2006

9(47)  
9-49

ՅԵ. ԳԵՐԱՍԻՄՈՎ ՅԵԿ Մ. ԵՐԼԻՒ

ՄՎ

ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ

ՇԶՈՐՄ

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

ԲԺՇ  
ԲԺ

19 MAR 2013


2323

ՅԵՐԱՄԻՄՈՎ ՅԵՎ Մ. ԵՐԼԻԽ—ՆԻԿՈՂՅՅ  
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ՇԶՈՐՄ

Գրքույկը տալիս ե «Ուկրաինական Զապայեվ» Ն. Ա. ՇԶՈՐՄԻ  
կյանքի ու մարտական ուղու համառոտ նկարագրաւր-յունքը:  
Գրքույկը նկատի ունի մասսայական ընթերցողին:



7909  
38



Ն. Ա. ՇԶՈՐՄ

## ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ՎՈՐՈՒՆ

1918 թվականի ձմբան մի որ Զերնիդովի նահանգի Սնովսկայա կայտարանում գնացքից մի մարդ իջավ, վորին անմիջապես ձայն տվեց կայտարանի՝ կառամատուցում կանգնած հերթապահը.

— Կոլյա Շչորս, այդ դո՞ւ յես:

— Հենց յի՞ս եմ, — պատասխանեց կեղտոտ, հնամաշ շինել հազար մարդը:

Շչորսի դեմքը նիհար եր, հյուծված, վաղուց չածիլված: Թուխ մեծ աչքերը տենդագին փայլում ելին:

— Յես կարծում եյի, թե ինձ չեն ճանաչի:

— Քեզ չճանաչել չե լինի: Բայց պատերազմը քեզ լա՞վ եկել, հա՞:

— Կոխի բացինեմ, 10-ից մինչև 20 հատ, մանրադիտակի տեսադաշտում, — ասաց Շչորսը:

— Թոքա՞խտ ես:

— Այո՛, հյուծվելուց հե վիրավորվելուց:

Գնացքը դեռ չմեկնած՝ դեպոյում, արհեստանոցում արդեն խոսում ելին.

— Շչորսը ճակատից վերապարձել ե:

— Կոլիա՞ն, Փելլչե՞րը:

— Հենց նա ինքը: Միայն թե, ասում են, նրա Փելլչերությունը յերկար չի տեել, հետո նա սպա յե դարձել:

— Հա՞, այդպիսի լուր եր տարածվել: Վիրավորված չի՞:

— Թոքախտավոր ե: Յերեսին գույն չկա:

Սնովսկում յերկաթուղային չկար, վոր չճանաչեր մեքենավար Շչորսի ավագ վորդուն:



\*\*\*

Նիկոլայ Ալեքսանդրովիչ Շչորսը ծնվել է 1895 թ. մայիսի 25-ին Սնովսկ ավանում, վորը գտնվում է Սնով գետի ափին, վոչ հեռու այն տեղից, վորտեղ Սնովը թափվում է Դեսնայի մեջ։ Ն. Ա. Շչորսի ծնունդից մի քանի տարի առաջ Սնովսկը դեռ փոքրիկ գյուղակ էր։ Բայց այդ գյուղակի մոտից անցավ Լիբավա-մունիշ յերկաթուղին, և գյուղակը դարձավ յերկաթուղային ավան։ Նախկին գյուղակի հողագուրի դարձած գյուղացիներից ու կազակներից շատ շատերը պրոլետար-յերկաթուղայիններ գարձան։ Մրանց թվումն էր նաև Շչորսի հայր Ալեքսանդրը, վորը պաշտոնաթող զինվոր էր, պահեստի ռազմիկ։ Ալեքսանդրը նախ աշխատում էր վորպես գետպյի փականագործ, ապա վորպես մեքենավարի ոգնական և վերջապես վորպես ապրանքատար գընացքների մեքենավար։

Նիկոլայի մանկության տարիներին Սնովսկն արդեն ուներ այն ժամանակված համար սովորական յերկաթուղային ավանի տեսք։

Կիրակի որերն ամբողջ ավանը հավաքվում էր շուկայի հրապարակը։ Յեկեղեցու մոտ, ցանկափակի հետեւ վայր էյին ընկած հարբածները։ Լի որերը հրապարակը դատարկ էր։ Այստեղ, թափառում էյին խողերը, հավերը, բաղերը, սովորական յերկին թղթե փուռաններ էյին բաց թողնում։

Փողոցների վերջին տնակները գտնվում էյին սոճու անտառի համարյա ծայրին, սոճուտ, վորը մուլթ պարապի պես կիպ մոտենում էր ավանին։ Սնով գետի մյուս ափից սկսվում էյին պամեշչիկական կալվածները։ 1905 թ. հեղափոխությունից հետո այդ կալվածները պահպանվում էյին զինված պահպորի միջոցով։

Նիկոլայը յերկաթուղային մեքենավարի ընտանիքում ավագ վորդին էր։ Սպիտակ ճակատին թափվող՝ քիչ գանդուր շաղանակադույն մաղեր, մեծ խելացի կապույտ աչքեր, գեմքի կանոնավոր գծեր— ահա փոքրիկ Շչորսի այն պատկերը, վոր պահպանվել է նրա կրտսեր յեղբայրների հիշողության մեջ։ Նրա մանկությունը, ինչուս և Սնովի յերկաթուղային բանվորների բոլոր վորդիների մանկությունը, անց եւ կացել փողոցում, անտառում,

գետի վրա։ Իր հասակակիցների մեջ Շչորսն աչքի չի ընկել առանձին կայտառությամբ։ Նա, հավասարակշռված, խոհուն և շատ հարցասեր տղա յեւ յեղել։

Ժամանակը յեկալ, հայրը նրան տարապ յերկաթուղային վաղբոց։ Այդ դպրոցը բացել էյին ավանի ծայրին, սոճու անտառի մոտ, մեծ անհրապույր մի շենքում՝ տիֆով հիվանդների մի նախկին բարակում։

Յերկաթուղային դպրոցում Շչորսը համարվում էր լավագույն աշակերտներից մեկը։ Նրա աշակերտական այն վկայականներում, վոր տրված եյին դասարանից դասարան փոխադրվելու ժամանակ, միայն չորս ու հինգ էր, վոր կար։ Դպրոցական ուսումից ազատ ժամանակ նրա սիրած զբաղմունքը ռազմական խաղերն եյին։

Ամառվա որերին համարյա բոլոր աշակերտները հավաքվում եյին նրա հրամանատարության տակ։ Յերեմն, յերե Շչորսի ջոկատը, զինվորակոն յերգեր յերգելով, քայլում եր Սնովսկի փողոցներում, շարքում հաշվվում էյին 100 յերեխա։ Նիկոլայը խողին լուրջ էր վերաբերվում։ Նա իր հասակակիցներին շարք էր սովորեցնում և շատ պահանջուու հրամանատար էր։ Անտառում, գերեզմանոցի հետեւ, յերեխաներն ամրոցի նման մի բան էյին կառուցել։ Պատնեշի վրա ժամապահներ էյին կանգնած։ Դպրոցականների ջոկատն ուներ նաև իր շտաբը։ Այդ շտաբը գտնվում էր Նիկոլայի քուի շոգեքարչի մեքենավար կոլբասկոյի տանը։ Հենց այստեղ եւ պահվում էյին «զենքի» պահուստները։ Այդ զենքը պատրաստվում էր այն քծաղբերի համաձայն, վոր Շչորսը պատվիրում էր իր պապին, շոգեքարշային դեպոյի գործիքագործ Տարելչուկին։ Մի խոսքով՝ գործը պատկառելի հիմքի վրա յեր դրված

Հաճախ ջոկատն արշավանք էր գործում գետի ձկներով ու բաղերով վիստացող կալվածատիրական լճերը։ Մի անդամ հարեվան կարվածատիրուհու, պառավ իշխանուհու՝ յերեխաներից քնաթաթախ վախեցած պահակը նրան զեկուցեց, թե շրջակայքում ավագակներ են յերեացել։ Կալվածատիրուհին անմիջապես սուրհանդակ ուղարկեց պրիստավի հետեւից։ Պրիստավը հենց նույն որը հայտնվեց մեքենավար կոլբասկոյի մոտ։

— Վո՞րտեղ են յերեխաները:

— Ո՞վ ե իմանում, յերեի վորհե տեղ վազում են: Գուցե  
զինվո՞ր են խաղում:

— Հապա մի գտի՛ր դրանց: Յես դրանց կաշին կքերթեմ  
այդ խաղերի համար: Իշխանուհուն մահու չափ վախեցրել են:  
Քրում ե, թէ զորք պետք ե կանչել, ավազակներ են յերևացել:

«Ավազակներին» գտան և հարցաքննության կանչեցին: Նրանք  
յերեքով ներկայացան՝ Կոլյա Շչորսը և նրա քեռորդիներ Վանյա  
և Տիմա Կոլբասկոն: Այդ մի անրաժան ընկերություն եր, Մնովս-  
կի դպրոցականների պարագլուխները:

— Այդ դո՞ւք եք, ավազակնե՛ր, վախեցրել իշխանուհու ամ-  
բողջ պահակին, — հարցնում ե պրիստավլը:

— Մենք պատերազմ ենք խաղում, — բոլորի փոխարեն պա-  
տասխանում ե Կոլյա Շչորսը:

— Եղ ո՞ւմ դեմ եք դուք պատերազմում:

— Մենք ճապոնացիների դեմ ենք պատերազմում:

— Սուտ եք ասում, ավազակնե՛ր:

— Յես յերեք չեմ ստում: Յեթե ինձ մոտ մեկն ու մեկը  
սուտ խոսի, յես ինքս եմ միշտ նրա դունչը ջարդում, — խստո-  
րեն ստում ե Կոլյա Շչորսը:

— Իսկ դու ո՞վ ես:

— Յես հրամանատարն եմ:

— Հրամանատարո՞րը: Հապա մի մոտ յե՛կ:

Պրիստավլը բանում ե հրամանատարի ականջից:

— Քեռի, ցավում ե, բա՛ց թող, թէ չե կկծեմ, — կամացուկ  
ասում ե Կոլյան:

Պրիստավլը ձեռքը շտապ յետ ե քաշում և հարցնում ե Կոլ-  
բասկոյին.

— Սա քո՞նն ե:

— Քո՞նց աղան ե: Մեքենավար Շչորս Ալեքսանդրի վոր-

դին ե:

— Այս ավազակին մի լավ կծեծես:

— Իսկ ինչի՞ համար եք հրամայում ինձ ծեծել, քեռի:

— Քո հրոսակներին մեկ ել չտանես դեպի իշխանական  
լները:



Այն տունը, վորտեղ ծնվել և Ն. Շչորսը

— Բայց չե, վոր քեռի՛, մենք պատերազմ ենք ինազում:  
Միթե չի՞ կարելի:

— Պատերազմ խաղալ կարելի յե, բայց դուք հեղափոխու-  
թյուն եք սարքում:

— Ամենախն վոչ, — բոլորում ե Կոլյան: — Հեղափոխություն-  
միայն մեծերն են սարքում, իսկ յերեխաններին բանտ չեն նստեց-  
նում:

— Սատանան տանի քեզ... Մի լավ ծեծել դրան, — հրա-  
մայում ե պրիստավլը և դրանով հարցաքննությունը վերջաց-  
նում ե:

Շչորսին վոչվոք չծեծեց: Նա ապրում եր ազատ, սուանց  
վորեե մեկի խնամակալության, վորակե վորբ: Նա 12 տարեկան  
եր, յերբ թոքախորից մեռալ նրա մայրը և մի կույտ մեկը մյու-  
սից վորքը յերեխաններով մնացած հայրը յերկրորդ անդամ ամուս-  
նացավ: Նիկոլայը ժամանակի մեծ մասն անց եր կացնում մոք

կողմի ազգականների մոտ՝ կոլբասկո քեռու, Տարելչուկներ տատի ու պապի մոտ։ Հաճախ նա նրանց մոտ նաև դիշերում եր։ Խորթ մորը կոլյան սառը վերաբերմունք եր ցույց տալիս, նրան անունով ու հայրանունով եր կոչում։ Այս հանգամանքը փչացրեց նաև նրա հարաբերություններն իր հոր հետ, վորը պահանջում եր, վոր բոլոր յերեխանները խորթ մորը «մայրիկ» կոչեն։ Կոլյային կոտրել չկարողացան։ Նա հաստատակամ և տարիքին չհամապատասխանող կայուն բնավորության տեր եր։

— Չեմ կարող, հայրիկ։ Վոր սպանես եւ, չեմ կարող։ Յես իմ մորս հիշում եմ, — համառ կերպով պնդում եր նա իր հորը։

Ռազմական խաղերի հետ միասին նիկոլայի սիրած զրադաւունքն եր ընթերցանությունը։ Վոտանավորներ նա սիրում եր կարդալ բարձրածայն, ընթերցանությունն ուղեկցելով արտահայտիչ միմիկայով և աչքի զարնող շարժ ու ձեռվ։ Նա առանձնապես սիրում եր կարդալ Տարաս Շեվչենկոյի «Հայդամակներ»-ը և «Կատերինա»-ն։ Այդ վոտանավորները նա ամենից ավելի հաճախ եր արտասանում, յերբ յերեկոները հավաքվում եր ամբողջ ընտանիքը և նրան, վորպես միակ զրագետ մարդուն, իննդրում եյին վորեւե բան կարդալ։ Նիկոլայի հաջողություններն ու դիտելիքները զարմացնում եյին նրա հորը, վորը դժվարությամբ եր սովորել նկարել իր կարճ ազգանվան տառերը։ Ծանը կյանքից ձեշված, միշտ տխուր մտքերի մեջ ընկդմված այդ խստաբարո, լուակյաց մարդու սովորաբար անփայլ աչքերում աշխույժ փայլ եր յերեսում, յերբ վորդին սկսում եր վողելորդած կարդալ իր սիրած պուեմները։ Այդ պուեմները նիկոլայը բերանացի գիտեր։ Նա հիանալի հիշողություն ուներ։

Այդպիսի յերեկոները հուղված հայրը խոստանում եր վորդուն չմուշկներ գնել։ Զմուշկները նիկոլայի վազուցված յերազանքն եր, վոր հայրը տանը յեղած մշտական կարիքի պատճառով վոչ մի կերպ չեր կարողանում իրավործել։

Մեքենավարի ընտանիքն աճում էր։ Յերեխաներ ծննդեցին նաև յերկրորդ կնոջից։ Պետք յեղավ մտածել, թե վո՞րտեղ պետք է տեղավորել մեծ յերեխաներին։ Նրանց կերակրելու հնարավությունն չկար։

Նիկոլայի 14 տարին արդեն լրացել եր։ Դեմքը յերկարել եր,

նիհարել, դիմադերն ավելի սուր եյին դարձել, մազերը սեացել եյին։ Խոչոր աչքերը խոհուն կերպով, տարիքը պահանջածից ավելի խիստ եյին նայում։

1909 թվականին նա յերկաթուղային դպրոցն ավարտեց։ Նրան գովասանագիր տվին։ Գովասանագիրը տուն բերելով՝ նա հորն ասաց։

— Այժմ պետք է մտածել, թե այսուհետեւ վո՞րտեղ պիտի սովորեմ։

Այդ Փիտազը հորն ապշեցրեց։ Այդ այնպիսի տոնով առվեց, վոր հայրը դեռ վորդուց չեր լսել։ Նրան ապշեցրեց, վոր տասնուշորս տարեկան նիկոլայն այսուհետեւ ևս սովորելու իր ցանկության մասին այնպես վորոշակի ու հաստատուն և խոսում, վոր կարծես թե այդ ցանկությունն իրոք կարելի յե կատարել։ Ծանը կյանքը ծերունու ուժերը հյուծել եր, նա արդեն այդ կյանքի դեմ չեր կարողանում պայքարել։

— Մտածել կարելի յե, — ասաց նա, — այդ մեզ չի արգելվում։ Բայց, որինակի համար, դու վո՞րտեղ ես մտածում ընդունվել սովորելու։

— Ուր վոր կընդունեն, — հաստատուն կերպով հայտարարեց նիկոլայը, վորն այդ մասին շատ եր մտածել։

Հայրը քմծիծաղ տվեց։

— Դարբնի աշակերտ։

Սակայն վորդու հաստատակամությունը մեքենավարի վրա աղդեց։ Նա վորոշեց գնալ խորհուրդ հարցնել դեպոյի պետից, բայց, մտնելով նրա կարինեալ, չփոթվեց, մոռացավ գլխարկը համել։ Դեպոյի պետը, վորը պաշտոնաթող փոխ-դնդապետ եր, նրան դուրս վոնդեց։

— Ախր ո՞ւր ենք մենք կոսներս մեր քիթը խոթում, — ասաց հայրը՝ տուն վերադառնալով։

Սակայն նիկոլայը չեր մտածում բաժանվել կրթության վերաբերյալ իր յերազանքից։ Նա հարց ու փորձ եր անում բոլոր ծանոթներին, թե վո՞րտեղ և ի՞նչ դպրոցներ կան՝ ուր բանվորների յերեխաները կարող են սովորել։ Այդ հարցին նրան վոչվոք չեր կարողանում պատասխանել։ Վերջապես նիկոլայի բախտը բանեց։ Ինչ-վոր մեկը նրան ցույց տվեց կիելի ուղմա-փելուց-բանեց։

բական դպրոցի ծրագիրը: Այդ ծրագրի ծանոթագրությունների մեջ ասլած եր, թե վորք յերեխաներին ընդունելության ժամանակ առավելություն և տրվում:

**Շչորսը վորոշեց փորձել:** Ուսման այլ ուղի նա չուներ: Հայրը, իմանալով, վոր ուղմա-ֆելդշերական դպրոցում աշակերտները պահպում են արքունի հաշվով, վորդու հետ կիեվ ուղեսրովելու դեմ չեր առարկում:

Փոքրիկ կապոցները ձեռքներին՝ նրանք յերկար ժամանակ թափառում եյին կիեվի անծանոթ վորոցներով, մինչև վոր դպրոցը դաշնանում էր սիրա չեր անում մտնել ծանր յերկաթե դռներով, մեծ և մոայլ արքունի շենքը: Վորդին նրա թերք քաշեց: Թրասենյակում սպայի ուսադիրներով ուղմական աստիճանավորը դիմումը, փաստաթղթերը վերցրեց և չոր կերպով ասաց, թե պատասխանը կուղարկվի փոստով:


Նրանք վերադարձան Սնովսկ, իսկ մի ամիս հետո նորից յեկան կիեվ: Նիկոլայն այդ պնդում եր, վորովհետեւ խոստացած ծանուցումն ինչ-վոր յերկար ժամանակ չեր ստացվում:

Դպրոցի գրասենյակում նրանց կարծ հաղորդեցին, վոր Նիկոլայ Շչորսին մերժված և ընդունել ազատ տեղեր չլինելու պատճառով:

— Ե՞նչ արած, — ասաց Նիկոլայը, փողոց գուրս գտնվ, — յեկող տարի կղանք:

Անհաջողություններն այնքան ել չեյին շփոթեցնում Շչորսին: Վերջապես 1910 թ. Նիկոլային հաջողվեց իր նպատակին հասնել: Դպրոցի պետը համաձայնեց նրան ընդունել զինվորների յերեխաների համար սահմանված նորմայի հաշվին:

Ուղմա-ֆելդշերական դպրոցը չեր կարող տալ այն գիտելիքը, վորոնց ծարակի յեր Շչորսը: Նա գնում եր սովորելու, բայց ընկալ մի դորանոց, վորտեղ աշխույժ պատանիներին դարձնում եյին լուռ արձաններ, վորոնք ընդունակ են միայն զինվորների հիվանդությունները բժշկելու առավելասիր յողով և կանոնարկայով: Շչորսը թույլ չտվեց իրեն կոտրել: Նա խորը թագցրեց վերափորվանքը, դամանացալ, թեև արտաքուստ այդ վոչնչով չեր արտահայտում: Նա պետերի առաջ միշտ չափազանց կարգապահ և զուսպ-հարդարից եր: Միայն ամենավատահելի ըն-



Ն. Ա. Շչորսը 1910 թ. Ուղմա-ֆելդշերական դպրոց.

կերների հետ ունեցած խոսակցությունների ժամանակ նա իրեն թույլ եր տալիս ավելի անկեղծորեն արտահայտել իր զգացմունքները: Նրա ընկերների մեծ մասը բարձր դասարաններից եյին:

Ամառը, արձակուրդի ժամանակ ուղմա-ֆելդշերական դպրոցի համազգեստ հաղած՝ տուն վերադառնալով, նա զարմացրեց իր հասակակիցներին: Զորանոցային ոեժիմը նրա վրա դրել եր իր ծանր կնիքը: 16 տարեկան հասակում նա արդեն բոլորովին հասուն մարդ եր: Վերևի խիստ զծագրված շրթունքի վրա հազիվ-հազ յերեսում եյին սև բեխիկները, աչքերում արդեն զգացվում եր արտասովոր կամք: Նրա շաբաթ ու ձեռերը խիստ ցայտուն, յեռանդուն եյին: Նա զգույշ և քիչ եր խոսում, լավ կըուագատելով ամեն մի խոսքը: Հաճախ յերկար ժամանակ կորչում եր անտառում՝ վորս անելով: Ամբողջ որերով գիրքը ձեռքին նստում եր գետափում, ժամերով չիոխելով իր դերքը:


Նոր բարեկամներ յերեան յեկան։ Շչորսն առանձնապես մոտիկացավ այժմ Կաղիմիր Տարելչուկի հետ, վորը նրան քեռի յեր գալիս, բայց տարիքով նրանից մի փոքր մեծ եր։ Կաղիմիր Տարելչուկը Սնովսկում վայելում եր ինքնուս կենդանագրի հոչակ։ Յերիտասարդների մեջ նա աչքի յեր ընկնում նաև իր քաղաքական զարգացումով։ Մի անգամ Տարելչուկն իր մորաքրոջ վորդուն հրավիրեց գրական այն ժողովներից մեկին, վոր տեղի ելն ունենում Սնովսկում հայտնի հացիուխի և կալբասագործի մոտ։

Մի նեղմիկ չենքում, վորի մեծ մասը բռնում եր մեծ, տաքաք բոցավառվող վառարանը, կալբասի կաթսան, այն սեղանները, վորոնց վրա միսը պատրաստվում եր աղիքները լցնելու համար, տարբեր տեսակի խմորով և ալյուրով լի արկղները, հավաքվում եր Սնովսկի առաջավոր յերիտասարդությունը, բանվոր-յերկաթուղայինները։ Բոլորը նստոտում եյին անկյուններում, վորպեսզի տանտիրով չխանդարեն աշխատելու։ Մեկն ու մեկն սկսում եր կարդալ։ Այդ յուրահատուկ յերեկույթների ժամանակ ծանոթանում եյին թե՛ Գորկու, Չեխովի, Տալատոյի պատմվածքներին, թե՛ Պուշկինի, Նեկրասովի, Շեվչենկոյի պոեմներին, բայց հաճախ կարդում եյին, նախաղես դռան կեռը գցելով, նաև եժանագին թղթի վրա տպված բարակ բրոշյուրներ, վորոնք միշտ քաղաքական թեմաների վերաբերյալ աշխույժ վեճեր եյին առաջ բերում։

Բոլոր ներկա յեղողներն իրենց սոցիալիստներ եյին կոչում, թեև, կարծես թե, նրանցից վոչ վոք վոչ մի կուսակցության չեր պատկանում։

Նիկոլայը վեճի չեր բռնվում։ Նա միշտ լուս նստած եր լինում և ուշադրությամբ լուս եր։ Փոռում հավաքվածների մեջ նա ամենայերիտասարդն եր։ Զնայած դրան, վոստիկանությունն արդեն հետեւում եր նրան։ Մի քանի անգամ նրա մոտ խուզարկություններ եյին յեղել։ Սակայն Շչորսի մոտ վոչ մի դատապարտելի բան հայտնաբերել չհաջողվեց։

1912 թ. ամառը Շչորսն ավարտեց կիեվի ռազմա-Փելչերական դպրոցը և ստացավ մեղիցինայի Փելչերի դիմում և 2-րդ կարգի կամավոր զինվորի իրավունքներ։ Ֆելչերական ժողովությունն նրան սովորում եր միշտ մի հեռանկար չտեսնելով, նա տարվել եր Ամերիկա տեղափոխվելու մտքով։ Նա հույս ուներ, թե այնուեղ իր յեռանդի գործադրման ասպարեզ կդանի։ Իմպերիալիստական պատերազմը նրան ստիպեց այդ մտքից հրաժարվելու։ Նա ընդունվեց վորպես Փելչեր Յ-րդ հրեանային դիվիդոնում, վորը մեկնում եր գերմանական ճակատ։ 1915 թ. նա



1909  
1910  
1911

Ն. Ա. Շչորսը 1915 թ.

նակում, իսկ առայժմ նա կարող եր անել՝ ինչ ուզում է։ Շչորսը յերազում եր համարական մտնելու։ Բայց այդ միանդամայն անիրազործելի յերազ դուրս յեկավ։ Նրան հաջողվեց տեղափոխվել միայն Պոլտավայի ուսուցչական սեմինարիայում։ Հիմք կա յենթագրելու, վոր այդ ժամանակ նա արդեն կապված եր բոլշևիկյան կազմակերպության հետ, Պոլտավայում հեղափոխական աշխատանք եր կատարում։ Հնարավոր ե , վոր այդ կապակցությամբ ել նա ստիպված եր չուտով հեռանալ ուսուցչական սեմինարիայից։ Սակայն նա դեռ կուսակցության անդամ չեր, քաղաքականություն դեռ հաստատապես չեր կողմնորոշվել։ Յարական Ռուսաստանի պայմաններում իր համար վոչ մի հեռանկար չտեսնելով, նա տարվել եր Ամերիկա տեղափոխվելու մտքով։ Նա հույս ուներ, թե այնուեղ իր յեռանդի գործադրման ասպարեզ կդանի։ Իմպերիալիստական պատերազմը նրան ստիպեց այդ մտքից հրաժարվելու։ Նա ընդունվեց վորպես Փելչեր Յ-րդ հրեանային դիվիդոնում, վորը մեկնում եր գերմանական ճակատ։ 1915 թ. նա

վերադարձակ Մնովակ և հայտնեց, վոր այլես վորպես Փերշեր  
ծառայել չի ցանկանում և մտածում է, ոգտվելով 2-րդ կարգի  
կամավոր զինվորի իր իրավունքներից, մտնել պրապորչիկների  
գպրոցը։ Մնովակում մի քանի որ մնալուց հետո նա մեկնեց Պոլ-  
տավաւ։

Մինչեւ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը ազգական-  
ները նրանից միայն մի քանի նամակ ստացան— նախ Պոլտավայի  
պրապորչիկների գպրոցից, մի քանի ամիս անց՝ Գալիցիայից և  
մեկն ել հիվանդանոցից, արդեն ինքնակալության տապալումից  
հետո։ Բոլոր նամակները կարճառոտ եյին, զուսպ և հաղորդում  
եյին միայն փաստեր՝ «պրապորչիկի աստիճան ստացա», «ըն-  
դունվեցի 355-րդ հետեակ գունդը», «լուսքից վիրավորվեցի»։

### ՊԱԴԱՅԻ ԴԱՎԱՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորթ մայրը, գիմալորելով Փրոնտից վերադարձած Շչոր-  
սին, վախից ճչաց։

— Մի՛ վախենա։ Այդ յես եմ, Նիկոլայը, տուն եմ վերադար-  
ձել, — ասաց Շչորսը։

Հարազատները դժվարությամբ ճանաչեցին նրան։ Նա կա-  
զում եր, փայտի վրա յեր հենվում, խիստ հազում եր։

Մոայլ հայրը դժվարությամբ եր պահում արցունքները, նա-  
յելով վորդուն, վորը նրան շարքից վերջնականապես դուրս յե-  
կած մարդ եր թվում։

Սոված, փորներն ուռած յերեխաները ձեռքները պարզեցին  
գեղի ավագ յեղբոր պայուսակը, կարծելով, թե այնտեղ հաց  
կա։ Խորթ մայրը պայուսակին նայելով հարցրեց։

— Այդ ի՞նչ ե այնտեղ, Նիկոլայ։

— Այդ մեր զինվորական կարտոշկան ե, — ժպտալով ասաց  
Շչորսը։

Փայուսակում Միլսի նոնակներ եյին դրած։ Հայրն այդ նըո-  
նակներից մեկը վերցրեց և յետ դնելով՝ հարցրեց։

— Հաշմանդամի ինչի՞ն ե հարկավոր այս թե՞ դեռ չես կը-  
տացել պատերազմից։

— Տեսնենք, — լրջորեն ասաց Շչորսը։ — Գուցե զեռ պետք  
գան։

Յեկ իսկապես վոր այս նոնակները Շչորսին շուտով պետք  
յեկան, ինչպես վոր Ռեկրախնայի տասնյակ հազարավոր բանվոր-  
ներին և գյուղացիներին պետք յեկան այն զենքերը, վոր նրանք  
իրենց հետ վերցրել բերել եյին, այս ձմեռ իմպերիալիստական  
պատերազմի ճակատներից վերադառնալիս։

Եչորսի Սնավակ վերադառնալուց հետո հենց առաջին որերը նրա շուրջն ականջքին համախմբվել դպրոցական իր նախկին ընկերները:

Ուկրաինայում արդեն սկսվում եր քաղաքացիական պատերազմը: Ուկրաինական հակածեղափոխական բուրժուազիայի կառավարությանը՝ կենտրոնական ռադան, վորը մի շարք քաղաքներում իշխանությունը դավավել եր, զինաթափի եր անում հեղափոխական գնդերը և կազմակերպում եր հայդամակների գնդեր, մորոնք ցրում եյին Խորհուրդները: Խորհուրդներին պաշտպանելու համար վոտքի եյին յելում բանվորներն ու ճակատային հեղափոխական զինվորները, վորոնք մտնում եյին կարմիր-դվարդիական ջոկատները:

Եչորսի իր ընկերներից, վորոնց մեծամասնությունն աշխատում եր յերկաթուղում, իմացավ, վոր Սնովսկի յերկաթուղայինների հիմնական մասսան համակրում եր բոլցելիներին, բայց ժողովներում բոլորը չեն համարձակվում խոսել իրենց դարդ ու ցավի մասին, այն մասին, ինչի վերաբերյալ անկեղծ խոսք ու զրույց և լինում գեպոյում, արհեստանոցում: Բուրժուազիան վախեցնում եր, թե այսոր-վաղը գերմանացիները կդան և բոլոր բոլցելիներին կկախեն:

Եչորսը պատասխ եր ճակատի դրության և ցարական բանակի քայլաթյան մասին: Նա խոսում եր այն վտանգի մասին, վոր այժմ պատասխում ե Ուկրաինայի աշխատավոր ժողովրդին իմպերիալիստական Գերմանիայի կողմից: Այն, ինչ նա ասում եր, իսկույժ ցրեց այն կասկածները, վոր առաջ եյին յեկել ընկերների մոտ՝ Եչորսի ստացած սպայական աստիճանի կապակցությամբ: Նա աշխատավոր մասսաների, ժողովրդի ծոցից յելած պատերազմական ժամանակի այն պրապորչիներից մեկն եր, վորոնց իմպերիալիստական պատերազմը բոլցելի դարձեց: Այժմ նրա քաղաքական համոզումներն արդեն հաստատուն կերպով ձեւակներպված եյին: Ընկերների հետ զրուցելիս Եչորսը համշտակած խոսում եր Լենինի մասին, միշտ հենվում նրա առացքած քնների վրա, քաղվածքներ եր կարդում լենինի հոդվածներից ու ճառերից:

Հակամմթերին իշխանությունը վերցնելով, բոլցելիներն ա-

քին այն ամենը, ինչ հնարավոր եր՝ իմպերիալիստական պատերազմն արագ դադարեցնելու համար: Լենինը պինդոքներին գրում եր.

«Հաշտության դործը ձեր ձեռքումն ե...

Թող դիրքերում գտնվող գնդերն իսկույն լիազորներ ընտրեն հակառակորդի հետ ձևականորեն հաշտության բանակցությունները սկսելու համար:

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը այդ իրավանքը ձեզ առաջի ե»<sup>1)</sup>:

Գերմանական կառավարությունը համաձայնվել: Եթ քանակ-ցություններ վարելու, բայց նրա առաջարկած պայմանները չառ ծանր եյին: Կարո՞ղ եր աբդյոք Խորհրդային Ռուսաստանը հրաժարվել այդ պայմաններից: Զին բանակը քայլայվել եր, իսկ հեղափոխական ջոկատները դեռ սակավաթիվ եյին և վաս կազմակերպված:

Լենինն ասում եր.

«Ամենալիտի հաշտության տակ ստորագրելուց հրաժարվելը, յեթե բանակ չունես, արկածախնդրություն ե, վորի համար ժողովուրդն իրավացի կլինի մեղադրել այն իշխանությանը, վորը կդիմի այդպիսի մերժման»<sup>2)</sup>:

Լենինն առաջարկեց գերմանացիների հետ բանակցություններն սկսած խորհրդային պատգամավորությանը՝ հաշտություն ստորագրել: Բայց դավաճան Տրոցկին, վորը հաշտության դելեզացիայի կազմում եր, հրաժարվեց այդ առաջարկությունը կատարելուց, ոգտվելով այդ բանից՝ վետրվարի 18-ին գերմանական իմպերիալիստները հարձակման անցան՝ Բելոռության և Ուկրաինան գրավելու նպատակով:

Բելոռության հարձակումը հարձակումը դադարեցվեց Բրետան-Լիտովկի հաշտությամբ, վորը լենինի ու Ստալինի պահանջմամբ, հապաւակ Տրոցկու հանցագործ դիմադրությանը, առորագրվեց մարտի 3-ին:

Իսկ Ուկրաինայում ավստրո-գերմանական գորքերի համբշտակական ներխուժումը շարունակվում եր: Իմպերիալիստանե-

1) Վ. Ի. Լենին, Յերկեր, հ. XXII, եջ 73.

2) Վ. Ի. Լենին, Յերկեր, հ. XXII, եջ 303:

րին այդ ներխուժման համար ձեւական առիթ եր ընձեռնում կենտրոնական ռադայի ձևված դավաճանությունը։ Կիեվից կարմիր գվարդիական ջոկատների կողմից վոնդված այդ ռադանշտապեց ավարտել գերմանական ու ավստրո-հունգարական կառավարությունների հետ վաղուց արդեն սկսված գաղտնի բանակցությունները։

Բոլցեկիների դեմ ուղղված ողնության փոխարեն, գերմանական սլվինների միջոցով կալվածատերերի ու ֆարբիկանտների տիրապետությունը վերականգնելու փոխարեն կենտրոնական ռադայի՝ իրենց «բոցիալիստներ» անլանող մինիստրները վրոշել եյին ուկրաինական ժողովուրդը ծախել ոտարերկրացիներին ի ստրկություն։ Կենտրոնական ռադայի՝ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի պետությունների հետ կնքած պայմանագրի համաձայն Ուկրաինան փաստորեն վերածվում եր գերմանական դաղութի։ Կենտրոնական ռադան պարտավորվել եր Գերմանիային ու Ավստրիային պարեն և հումք մատակարարել։ Մի քանի ամսվա ընթացքում ուկրաինական ժողովուրդն իմակերիալիստներին սկսութ և հայթայթեր 60 միլիոն փութ հաց, 2,740 հազար փութ կենդանի քաշ ունեցող անասուն, 400 միլիոն ձու և 37,5 միլիոն փութ յերկաթահանք։

Այս հարուստ յերկիրը գերմանական իմակերիալիստներին հեշտ ավար եր թվում։ Կարմիր գվարդիայի բաժան-բաժան յեղած, վատ զինված, շտապ կերպով հավաքված ջոկատները չեյին կարող դիմադրել ոկուպանտների լավ վարժված, ռազմական նորագույն տեխնիկայով զինված կանոնավոր դնդերին։ Բայց ոկուպանտները վորքան ավելի եյին ներխուժում յերկրի ներսը, այնքան ավելի յեր աճում դիմադրությունը։ Բոլցեկիների դեկալարությամբ ուկրաինական բանվորներն ու գյուղացիները հափշտակիչներին ժողովրդական պատերազմ եյին հայտարարել։

Ուկրաինայի խորհրդային կառավարությունը կոչ եր հրապարակել։ «Այս ծանր ժամին, յերբ բանվորա-գյուղացիական Ուկրաինան կոխկոտվում է գերմանական դահճճների և հայդամական բանտապահների կրունկի տակ, յերբ կարծես արդեն աղատագրված ժողովուրդը նորից խայտառակ ստրկության լծի տակ է քշվում... այս ծանր ժամին մենք, Ուկրաինայի որինա-

կան, ժողովրդի դրած և ժողովրդի կողմից հաստատված կառավարությունը, մեր պարտաքն ենք համարում ազդարարել մեք անշեղ կամքը՝ մաքառելու մինչև վերջին մարդը, արյան մինչև վերջին կաթիլը ժողովրդի թշնամիների, Ուկրաինայի բանվորների ու գյուղացիների թշնամիների դեմ»։

Փականագործ կլիմ Վորոշիլովը, վորն անցել եր Լուգանսկի բոլցեկիյան կազմակերպության գլուխը, կոչ ուղղեց բանվորներին.

«Ահեղ ժամը հասել ե... մեր հեղափոխությանը, մեր նվաճումներին մահացու վտանգ և սպառնում... Մենք ենք մեր բախտը վորոշողը։ Մեզնից ե կախված մեր սոցիալիստական հայրենիքի փրկությունը... բոլորս մինչև վերջին մարդը—դեպի զենք»։

Մի քանի որ անց Լուգանսկի բանվորների ջոկատը Վորոշիլովի հրամանատարությամբ ոկուպանտների դեմ դուրս յեկավ։

Խերսոնում բանվոր բնակչությունը գերմանացիներին ու հայդամակներին այնպես դիմավորեց, վոր նրանք ստիպված յեղան յերեսուն կիլոմետր առանց հետ նայելու հետ փախչել։ Բոլոր փողոցներում նրանց դիմավորում եյին դնդացրային կրակով։ Տների պատուհաններից ձեռքի նորակներ, քարեր, աղյուսներ եր, վոր թափվում եյին։ Բանվորական թաղերում թշնամու զեմ եյին դուրս գալիս նույնիսկ տնային տնտեսուհիները, վորոնք զինված եյին անթրոցներով, կրակիմառնիշներով, կացիններով։ Մի քանի որ անցկացավ, մինչև վոր ոկուպանտները, ոժանդակ ուժեր ստանալով, նորից համարձակվեցին քաղաքին մոտենալու։ Նիկոլայեվում ոկուպացիայի հենց յերկրորդ որն ապստամբություն սկսեց։ Փողոց գուրս յեկան զինված բանվորներն ու նախկին ճակատային զինվորները։ Մարտը տևեց յերկու որ։ Գերմանական հրետանին խփում եր բանվորական թաղերին։ Տասնյակ տներ ավերակների վերածվեցին։

Բանվորների հետ միասին ոկուպանտների դեմ պայքարի յեր դուրս գալիս նաև աշխատավոր գյուղացիությունը։ Գերմանական հափշտակիչների ամբողջ գնդեր վոչնչացվում եյին դարան մտած գյուղացի-պարտիզանների գնդացիներով։ գյուղում գիշերած հեծյալ հետախույզների ամբողջ խմբեր առավոտյան

անհետ կորչում եյին, իսկ գյուղացիները դուրս եյին գալիս գերմանական հրացաններով զինված։ Կատաղի կռիվներից հետո գյուղ մտած գերմանացի սպաները, թագնված կարմիրներին գտնելու համար, խուղարկում եյին բոլոր նկուղները, պահեստները, մառանները, խոտանոցները, բայց կարմիրներին բռնել չեր լինում։

Հազարավոր գյուղացիներ փախչում եյին անտառները՝ իրենց հետ տանելով իմպերիալիստական պատերազմից մնացած զենքը, միանում եյին գործարաններն ու ֆարբիկաները լքած բանվորների հետ և պարտիզանական ապստամբական ջոկատներ եյին կազմում։ Որորի վրա նրանց թիվն աճում եր։ Բոլշևիկներն անցնելով ընդհատակի, շարունակում եյին զեկավարել ուկրաինական ժողովրդի զինված պայքարը, կապ եյին հաստատում առանձին ապստամբ ջոկատների միջև, առանձնացնելով ապրատամբ դեկատինը կադրեր։

Այդ որերին ուկրաինական ժողովուրդը վորքա՛ն հերոսներ առաջադրեց—պրոլետարական հեղափոխությանը հավատարիմ, նվիրված իր վորդիներին։ Դրանց թվում եր նաև Շչորսը, վորը Սնովսկում սկսեց իր պանծալի մարտական ուղին։

## ՍԵՄՅՈՆՈՎԿԱՅԻ ԶՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Մարտի կեսերին Սնովսկայա կայարանին մոտեցավ գերմանական մի զրահագնացք։ Այն իսկույն և եթ գնդակոծման յենթարկվեց։ Բայց մի քանի ժամ անց, յերբ գերմանական հետևազոր գրավեց ավանը, նա այստեղ վոչ մի զինված մարդ չգտավ։ Եչորսի հավաքած փոքրիկ ջոկատն արդեն մոտենում եր Զեպելյովկա գյուղին, վորը գտնվում եր Սնովսկից դեպի Սեմյոնովկա տանող ճանապարհին։

Խոշոր արդյունաբերական Սեմյոնովկա գյուղը, վորը գտնվում եր Նովոզիբկով-Նովկորոդ-Սևկերսկ յերկաթուղու վրա, հոչակվել եր իր անայնագործական արհեստներով, ձիթհան արդյունաբերությամբ։ Կոչկակարները, կաշեգործները, մուշտակադործները, բրուտները, գարբինները, ձիթհանները վաղուց ի վեր կազմում եյին այդ կայարանամերձ գյուղի աշխատավոր բնակչության մեծամասնությունը, մի գյուղ, վորը փովել եր մի քանի կիլոմետր տարածության վրա նովոզիբկովի գավառի անդամուղ, մոխրագույն ավագից ու կալից կազմված դաշտերում։

Անխնա կերպով արդյունաբերողների, մեծագնորդների, առևտրականների կողմից չահագործվող՝ Սեմյոնովկայի չքավորությունն արդեն իր հեղափոխական տրադիցիաներն ուներ։ Դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, 1917 թ. ամառի իշխանությունն այստեղ փաստորեն պատկանում եր բոլշևիկներին, վորոնց մեջ 1905 թ. հեղափոխությունից հետո բանտում, աքսորում, տաժանքում յեղածների թիվը քիչ չեր։ 1917 թ. աշնանը Սեմյոնովկայի բոլշևիկյան կազմակերպությունը կարծիր-գվարդիական մի խոշոր ջոկատ ստեղծեց, վորը մասնակցեց

այդ ժամանակ Ուկրաինայում Խորհուրդների ու կենտրոնական ռադայի միջև սկսված պայքարին։ Այդ ջոկատի մարտական ուղին սկսվեց Կիեվի վրա ուկրաինական կարմիր-գլարդիական մյուս ջոկատների հետ միասին կատարած հարձակումով։ Փետրվարին, Կիեվից կենտրոնական ռազան վրնդելուց հետո, Սեմյոնվկայի ջոկատն առաջիններից մեկն եր, վոր գերմանական ոկուպանտների դեմ դուրս յեկալ՝ նրանց դեմ կալինկովիչի, Ռեշիցի, Գոմելի մոտ կոխիներ մղելու։ Մարտ ամսի կեսերին, յերբ ջոկատում մնացել եր ընդամենը մոտ 40 մարտիկ, ջոկատը Գոմելում գնացք նոտեց և վերադարձավ Սեմյոնվկա՝ համալրվելու համար։ Զոկատը Սեմյոնվկա վերադառնալուց միքանի որ հետո Միովսկից իր մի խումբ ընկերների հետ յեկալ Շչորսը։ Նա իր հետ բերել եր կուսակցական կոմիտեյի նամակը, վորը սնովցիներին ոգնության եր ուղարկում սեմյոնվցիներին։ Հենց նույն որը ջոկատի շտաբում հավաքվեց Սեմյոնվկայի կազմակերպության ամբողջ ակտիվը։

Հավաքածների մեծ մասը զինվորականներ չեյին։ Միայն մեկն եր իր վրա ուշադրություն դարձնել տալիս իր խիստ կեցվածքով— մի յերիտասարդ սեահոն տղա իր չափսով կարած շինելով և սպայական գոտի կապած։ Նա մոտեցավ Շչորսին, կրունկները շրիկացնելով իրար կպցրեց և, ներկայանալով, կարգ կերպով ասաց։

— Զուրով։

Շչորսը նրան հարցրեց, թե հին բանակում ծառայել ե արդյոք և վո՞ր գնդում։

— Այո՛, վորպես կամավոր, —պատասխանեց Զուրովը և անվանեց գունդը։

Շչորսը ծիծաղեց։

— Ուրեմն մենք ձեզ հետ միասին այստեղ վորպես ռազմական մասնագետներ կլինենք։

Սկսվեց ընդհանուր գործարար խոսակցություն։

Շչորսը նստել եր մի կողմում, վորպես կողմնակի մարդ։ Նրա վրա նույնպես վոչվոք ուշադրություն չեր դարձնում։ Հավաքածների մեծ մասը տարիքով զգալի կերպով նրանից մեծ եյին, Այդ կարծես թե նրան մի փոքր ճնշում եր։ Նա գրապանից հանեց

բլոկ-նոտը և խոսակցությանն ականջ դնելով, բլոկ-նոտի մեջ ինչ-վոր դիտողություններ եր գրում։ Խոսակցությունը Սեմյոնովկայի նորերս կազմված ջոկատի ծանր գրության մասին եր։ Զոկատում կարգապահություն չեր զգացվում, այն վերածվել եր քարվանսարայի։ Զգացվում եր զենքի, հանդերձանքի, պարենի պակասություն։ Զոկատի գանձարկը դատարկ եր։

Վերջապես հարց ծաղեց, թե ի՞նչ պետք ե անել այսուհետեւ։ Այն ժամանակ խոսեց Շչորսը։ Բոլորն իսկույն իրենց ուշադրությունը լարեցին։ Շչորսն առաջարկեց ջոկատում շարային պարագմունքներ մտցնել։ Սկսվեց վիճաբանություն։ Շչորսին ասում եյին՝ «Գործիր պարապմունքներ մտցնել— մնացածներն ել կիմախչեն»։ — «Լավ ե հիմա, քան կովի ժամանակ»։ — պատասխանում եր Շչորսը։

Շչորսն առաջարկեց մշակել ներքին կարգի խիստ կանոններ։ և այդ կանոնները կետ առ կետ կարդում եր իր բլոկ-նոտից։ ԱՄարտից առանց իր հրամանատարի թույլտվության դուրս յեկած մարտիկը գնդակահարվում ե վորպես դավաճան»։ Նրան առարկում եյին, թե «չատ խստից ես բռնեցնում», իսկ նա պատասխանում եր՝ «Այդ ե պահանջում հեղափոխությունը»։ Առհասարակ Շչորսի առաջարկություններից շատերը մի քանիսին շատ խիստ, թունդ, վտանգավոր, անիրազործելի եյին թվում, իսկ վլունք ել վճռապես դեմ դուրս յեկան այդ առաջարկություններին, գտնելով, վոր Շչորսի պահանջած կարգապահությունը նշանակում ե վերադարձ դեպի հին բանակի կարգերը։ Սակայն վերջի վերջո նրանք ստիպված եյին լրել։ Մեծամասնությունը Շչորսի հետ համաձայնվեց։ Նրա բոլոր առաջարկություններին հավանություն տվեցին։ Հավանության արժանացան նաև վարժական պարապմունքներ մտցնելու և մարտից ինքնակլութ հեռացողներին գնդակահարելու առաջարկությունները։ Զոկատի գանձարկը լրացնելու համար վորոշվեց Սեմյոնովկայի կուլակներին ու առետրականներին հարկել 200 հազար ոուրելու արտակարգ հարկով։

Հետևյալ որը Շչորսին առաջարկեցին ընդունել ջոկատի հրամանատարություն։ Շչորսը համաձայնեց։

Իսկույն և եթ կուսակցական կազմակերպության ամբողջ ակ-

տիվն անձնական առաջադրանքներ ստացալ: Ամբողջ Սեմյոնովկան վոտքի հանվեց: Մի քանի ընկերներ մեկնեցին շրջակա գյուղերը զենք հավաքելու և ապստամբներ հավաքադրելու համար:

Ռուկրափինայի՝ գերմանական ոկուպանտների գեմ պայքարի յենող բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն սկսեցին հավաքվել Սեմյոնովկա: Չոկատը համարելով և վերակազմելով՝ Շչորսը հանդիսատ չուներ:

Չնայած հիվանդությանը և իրեն գեռ զգալ տվող վերքին, նա առույգ տեսք ուներ: Թէթեակի կաղալով՝ նա մեկ այստեղ եր յերեսում, մեկ այստեղ: Մարդիկ իրենց համար անհկատելի կերպով յենթարկվում եյին նրան:

Չուրովը, վորը Շչորսից վարժական պլան կազմելու առաջարանք եր ստացել, մի քանի ժամից հետո գեկուցեց.

— Հրամանը կատարված է:

Շչորսն աչքի անցկացնելով պլանը, վորը նկատի յեր առնված ժի ամսվա պարագմունքի համար, այն հետ դարձեց և ասաց.

— Պլանն անպետք է: Նորից կազմի՞ր: Հիշե՞ր, վոր մեր տրամադրության տակ վոչ թե մի տմիս կա, այլ մի քանի որ: Դանդաղելը հանցագործություն է:

Շչորսը բոլորին շտապեցնում եր: Նա ասում եր, թե չի կարելի սպասել՝ մինչև դերմանացիները Սեմյոնովկա դան, այլ պետք ե նրանց գեմ դնալ: Նա ասում եր, թե գերմանացիները կոնոսոպի մոտ արդեն ուժեղ հարված են ստացել կլիմ վորոշիւովի՝ կուգանսկի ջոկատից, և թե թշնամիներին վոչ մի բոպե դադար չպետք ե տալ:

Կամավորները Շչորսի մոտ եյին դալիս ջոկ-ջոկ և խմբերով: Նրանց տեղափորում եյին ապրանքատար վագոններում, վորոնք կանգնած եյին կայարանի պահեստի ուղիներում և սարքավորված եյին տախտամածներով և յերկաթե վառարաններով: Հենց այստեղ վաղոնում տեղափորված եր ջոկատի շտարը: Կամավորներ ընդունող ընկերներն աշխատում եյին ամբողջ որը:

Յերբեմն Շչորսը, մի կողմում կանգնած, լուս ականջ եր պնում խոսակցությանը և հանկարծ արագորեն, հստակ քայլե-

րով մոտենում եր կամավորին և իր մհջ, թուխ, վառ աչքերով ծակելով նրան՝ հարցնում եր

— Մահից չե՞ս վախենում:

Յեկ յեթե կամավորի վեմքին յերկուուղ եր տեսնում, արհամարհանքով ասում եր.

— Մեզ վախկուներ հարկավոր չեն: Խուճապ կտարածես:

Ապա հրաման եր տալիս.

— Յետ-դարձ: Դեպի առուն քայլո՞վ-մարձ:

Մի քանիսը գալիս եյին տրեխներով: Շչորսը նրանց ասում էր.

— Յեթե կոչեկներդ տանն ևս թողել, գնա բե՛ր: Մենք կոչեկչունենք:

Վոմանք գնում եյին և այլես չեյին վերագառնում:

— Շա՞տ լավ է, — ասում եր Շչորսը, — այդպիսիները մեզ հարկավոր չեն:

Չոկատ գալիս եյին նաև շատ նախկին զինվոր-ճակատայիններ: Նրանց կարելի յեր մի անդամից ճանաչել հին դեղնած փափախներից, պոկլած ուսուղիների հետքերով շինկեներից, ջրամաններից, կաթսաններից: Մի քանիսն ել գալիս եյին հրացաններով: Շչորսը, վորը մտահոգված եր հրամանատարական կազմի ընտրությամբ, ճակատայիններին դիմավորում եր առանձին ուշադրությամբ:

Հավաքելով ջոկատ մտնող ապստամբների խմբերը, Շչորսը նրանց ծանոթացնում եր առաջեկա խնդիրներին և կետ առ կետ թվում եր ներքին կարգուկանոնը:

Մի շաբաթ չանցած՝ ջոկատում արդեն հաշվվում եր ավելի քան 300 մարդ: Շչորսը նրանց հետ մի քանի շաբաթին պարապ-մունք անցկացրեց և հրամայեց ջոկատի ամբողջ գույքը բարձել և եշելոն կազմել:

Մեկնելուց առաջ վագոնները շրջապատեցին կանայք: Մարտիկներին յեկել եյին հրաժեշտ տալու նրանց կանայք, հարս-նացուները, մայրերը, քույրերը: Շչորսը կանչեց հարմոնիստներին և հրամայեց նրանց ուրախ յերգեր ու պարեր նվազել: Պլատ-ֆորմի վրա, վորը հենց նոր յեկած ձյունից դեռ թաց եր, մարտիկները ճարպկորեն ուլրախնական հոպակ, չեչուկա, մոսկով-

յան բարինյա, կոմարինսկի ելին պարում: Ընդհանուր պարի ամենատաք միջոցին, մի պար, վորին մասնակցում ելին նաև թագուն արցունքները սրբող կանայք, Շչորսը մեկնելու ազդանշան տվեց:

Յերբ ջոկատը ժամանեց Նովոդիվեկով այդ կայարանի բուր պահեստի ուղիները զբաղված ելին ասլրանքատար գնացքներով, վորոնք բարձված ելին Ուկրաինայից տեղափոխվող դույքով: Գերմանացիներն արդեն զբավել ելին Գոմելը և յերկաթուղու յերկայնքով շարժվում ելին դեպի Նովոդիվեկով:

## ԱՐԴԻՆ ՄԱՐՏԵՐԸ

Ավստրո-գերմանական զորքերի հարձակումն Ուկրաինայում կատարվում եր հզոր զորասյուներով՝ յերկաթուղային մագիստրալների յերկայնությամբ, վորոնք գնում ելին արեմուտքից գեղի արևելք: Ամենահյուսիսային զորասյունը հարձակվում եր Բրեստ-Լիտովսկից յերկաթուղով Գոմելի վրայով դեպի Նովոդիվեկով: Այս զորասյունը բաղկացած եր գերմանական 41-ըդկուպուսից, վորի մեջ մտնում եր չորս լանդվերային դիվիզիա:

Ուկրաինական կարմիր-գվարդիական և պարտիզանական ջոկատների մեծ մասն ոկուպանտների հետ այսպես կոչված եւելունային պատերազմ եր մզում: Իրենց եշելոններով կաշկանդված՝ նրանք սիրտ չելին անում պոկվել յերկաթուղիներից և մարա Ելին մզում գլխավորապես յերկաթուղային հանգույցների համար: Կարմիր-գվարդիական և պարտիզանական ջոկատների այսպիսի առաջիկան թույլ եր տալիս գերմանական հրամանատարությանը չբացատել իր դորքերը, ցրիսլ չտալ այդ զորքերն իրենց թշնամի բնակչություն ունեցող լայն տերըիտորիայի վրա: Համակենտրոնացած հարվածներ հասցնելով, դործի դնելով զրահապատկնացքներ, գերմանացիք համեմատաբար հեշտ կերպով հաղթարում ելին այն կարմիր ջոկատներին, վորոնք փորձում ելին նրանց կասեցնել:

Շչորսն առաջիններից մեկն եր, վոր հասկացավ եշելոնային պատերազմի անձեռնտու լինելը պարտիզանների համար: Նրա ջոկատի ամբողջ հրետանին բաղկացած եր մի զենիթային թնդանոթից, վորը նա ուղում եր ողտագործել նաև վերերկրյա նշանների վրա կրակելու համար: Այսպիսի «տեխնիկայի» պայմաններում հաջողություն ձեռք բերել կարելի յեր միայն համարձակ,

անսպասելի հարձակումների միջոցով։ Այս պատճառով Շչորսը հասուն ուշադրություն դարձրեց հեծելազորի վրա։ Այս տեսակետից նա արակ այն ամենը, ինչ թույլ է յին տալիս ժամանակն ու միջոցները։ Զոկատին կից ստեղծվեց մի քանի տասնյակ թրերից բաղկացած հեծյալ հետախուզություն։ Շուտով Շչորսին հաջողվեց սրանց դինել գերմանացիներից խլած ավտոմատիկ հրացաներով և ձեռքի դնդացիրներով։ Նովոզիրկովում ջոկատը վագոններից հանելով և եշելոնը թողնելով, վորպես թիկունքային, տնտեսական բաղա, Շչորսը շարժվեց Գոմելի կողմից հարձակվող գերմանացիների դեմ-հանդիման և նրանց թիկունքի վրա կտրաբված հենց առաջին համարձակ պարտիզանական հարձակումներից հետո ստիպեց նրանց բացազատվել, խորանալ անտառի մեջ, վորանդ նրանց ավելի դժվար եր սուտագործել իրենց տակտիկայի առավելությունը։

Ոկուպանտների հարձակումն իսկույն դանդաղեց։ Այն ժամանակ Շչորսը փորձ արակ այդ հարձակումը կանգնեցնել, գերմանացիներին կասեցնել Զլինկա ավանի մոտ, մինչև վոր քաղաքից համանեն կարմիր-դվարդիկական նոր ջոկատներ։

Հեծյալ հետախույզները Շչորսի գլխավորությամբ լուսարացին Զլինկա ներխուժելով հայտնաբերեցին, վոր գերմանացիները, վորոնք նախորդ որը գրավել է յին ավանը, պատրաստվում են նովոզիրկով տանող ճանապարհով հարձակվելու։ Շչորսն իսկույն այսուղ կույի համար դիրքեր գրավեց։

Գերմանական հրամանատարությունը Շչորսի հանդուզն հարձակումներից դայրացած, վորոշեց մի ջախջախիչ հարվածով վոչնչացնել նրա ջոկատը։ Մի փոքրիկ, թույլ զինված պարտիզանական ջոկատի դեմ դուրս հանեցին խոշոր հետեակ և հեծյալ զորամասեր, վորոնց ոժանդակում եր հրետանին։ Գերմանացիներն իրենց համար անսպասելիորեն ուժեղ հակահարված ստացան։ Անտառում համառ կոխվ տեղի ունեցավ։ Ահա թե ի՞նչ ե պատճում այդ կոխի մասին Շչորսի Սեմյոնովկայի ջոկատի շարքային մարտիկներից մեկը՝ Ֆ. Մ. Ժիվոտովը։

«Հետախուզությունը Զլինկայից վերադարձավ լավ ավարով, ձեռք գցելով բաղմաթիկ ավտոմատ հրացաներ, ձեռքի նոնակներ և այլ գենք ու զինամթերք, վորի կարիքը մենք շատ

ելինք զգում։ Մեր ջոկատը չլիւա կազմեց գետափի յերկայնքով, իսկ հետախուզությունը Շչորսի ղլխավորությամբ սրարշավ յետ դարձավ և անտառում ծածկվեց։ Ապա լսվեց, թե ինչպես անտառում ճարմատում են չոր ծառերը գերմանական հետեակը հարձակվում եր մեկ վրա զորացուներով անտառի միջով։ Մեր գլխացը բարդություններն արդեն պատրաստվել եյին, յերբ հանկարծ անտառից դուրս ցատկեց սրերը մերկացրած հեծյալ հետախուզությունը, առջեկց Շչորսը և հետախուզության պետը՝ գերմանական ապավարաը ձեռքին։ Հետախուզության հետեկց, վորը կամուրջի վրայով քառարտոփի սլայտ զեպի ջոկատը, անտառից յերեացին գերմանացիները։ Սկսվեց կովկը, վորի ժամանակ մենք տվյալի 7 սպանված և 10 վիրավոր։ Գերմանացիներն ավելի մեծ կորուստներ ունեցան, վորովհետեւ նրանք հարձակվում եյին խիտ մասսայով։ Զանկարծ Շչորսը հրամայեց նահանջել։ Գերմանացիները շրջանց եյին կատարում և պատրաստվում եյին գրոհել մեր վրա հեծելազորի միջոցով։ Մենք մտանք անտառի խորքը և դուրս յեկանք անտառի յեղը, վորտեղ շատ մարտիկներ տարակուանքով կանդ առան, վորովհետեւ մեր առջել մինչեւ 3 կիլոմետր լայնությամբ մի բացատ եր։ Այս լայն տարածության վրա գերմանական հեծելազորին շատ հարմար եր բացազավել գրոհի գիմելու համար։ Բայց Շչորսը վտանգավոր տեղերը պաշտպանելու համար իսկույն դնդացրողներ զնելով, հրամայեց վագրով, 10—15-ական մարդ, անցնել բացատը և դիրքեր գրավել անտառի դիմացի յեղում, բացատը պահելով իրենց կրակի տակ։ Դեռ նոր եյին ջոկատի վերջին խմբերը վաղքով անցել բացատը և գրավել մատնանշված դիրքերը, յերբ գերմանացիք դուրս թափվեցին անտառից բացատը, ինչպես մըջուններն անհանդստացրած մըջնանոցից։ Շչորսի հրամանով համազարկերի միջոցով մենք ստիպեցինք նրանց յետ նահանջել կեսի անտառը։ Յերկու կողմեց ել հրաձգություն սկսվեց բացատի վրայով։ Մեր հետախույզները պահպանում եյին մեր թեսերը և աննկատելի կերպով մոտենալով գերմանացիներին՝ նրանց համարյա ընդհուռուլ գնդակոծում եյին Զլինկայում գրաված ավտոմատիկ հրացաններով։ Ուժերը մեկտեղ հավաքելով՝ գերմանացիք նորից անցան հարձակման և պարտիզաններին վրա տվյան իրենց տեխնիկայով։ Վորոտաց զրահա-

պատ գնացքի հեռահար հրետանին, բայցատի միջով անցնող խճուղու վրա յերեացին զրահապատ ավտոներ: Պարտիզանները նույնպես դործի դրին այն ամենը, ինչ ունելին՝ հրացանները, գնդացիրները, թրերը և նոնակները: Ակավեց մի կոփվ, վորը համարյա թե մի որ ու գիշերից ավելի տեսց: Պարտիզանները պառկած եյին անտառի յեզերքին, վասուդի ծխով պատաճ: Զորս կողմը տրաքում եյին արկերը, ճարճատում եյին ծառերը, բոցավառվում եյին չոր ծառերը: Գիշերն անտառի վրա բռնկել եր կրակի ցոլքը և լուսավորել եր բացատը: Այդ բացատի մեջտեղը կանգնած եր մեն-մենակ մի ուռենի: Ուսենին դեռ նոր սկսել եր կանաչել, բայց շուտով գնդակները կարեցին նրա բոլոր ճյուղերը, մնաց միայն մռայլ բունը: Շչորսն ուսից վիրավորվել եր, բայց կովից գուրս չեր դալիս, թեև իրեն լավ չեր զգում: Մենք շարունակ կրակում եյինք նրա հրամաններով: Հետո մեզ փոխեցին և մենք նահանջեցինք նովոզիրկովից առաջ գտնվող վերջին կիսակայարանը, վորտեղ մեզ սպասում եր մեր եշելոնը տնտեսական բաղայի հետ միասին»:

Անտառներում և Զինկայի մոտ մղած կոխիներից հետո Շչորսի հրամանատարության տակ մնացին մի բուռը հոգնած մարտիկներ: Սակայն նովոզիրկովում քաղաքային կուսակցական կազմակերպության ոգնությամբ ջոկատը նոր կամավորներով, այն և տեղական գործարանների բանվորներով, համալրելով, Շչորսը շարունակեց գերմանական ոկուտպանտների գեմ մղվող պայքարը: Կասեցնելով նրանց հարձակումը, նա կոխիներ մղելով յետ եր նահանջում նովոզիրկովից գետի կլինցի և ապա Ռւնեչա—դեպի Խորհրդային Ռուսաստանի սահմանները:

Գերմանացիների գեմ մղած հենց առաջին կոխիներից հետո Շչորսը հասկացավ, վոր պայքարի հաջողությունը կախված և պարտիզանական մանր ջոկատների ամենաարագ միացումից ընդհանուր հրամանատարության և բոլցեիկյան զեկավարության ներքո: Նովոզիրկով-կլինցի ուսունում կենարոնացած եյին բազմաթիվ պարտիզանական ջոկատներ, բայց այդ ջոկատներից մի քանիսի մեջ գլխավոր գերը խաղում եյին անարխիստներն ու ճախիներները: Այդ կեղծ-հեղափոխական ջոկատներն եշելոններից գուրս եյին դալիս՝ միայն իրենց շուրջը կազմալուծում տարածե-

լու համար: Շչորսի ջոկատն ստիպված եր, յետ մղելով ոկուպանտների գրոհը, միաժամանակ կարգ ու կանոն հաստատել ճակատում և թիկունքում: Կլինցիում գերմանացիների դեմ մղած կովից անմիջապես հետո Շչորսը հանդիպեց ինչ-վոր անկարգություններ անող ջոկատի և ուժ գործադրելով այդ ջոկատը մաքրեց դավաճաններից: Անարխիական տարերքի գեմ մղած պայքարում Շչորսը գործում եր վճռաբար և անհաշտորեն:

\* \* \*

Ապրիլի վերջերին գերմանական կորպուսների մն ման տակ կարմիր-գվարդիական և պարտիզանական ջոկատները նահանջում եյին Խորհրդային Ռուսաստանի տերրիտորիան: Միայն Դոնբասում գեռ շարունակվում եր հերոսական պայքարն ընկեր Վորոշիլովի զեկավարությամբ: Ուկրաինայի մնացած ռայոններում արգեն տեր ու տնորենը ոկուպանտներն եյին: Ժողովրդին դավաճանած ռադան այժմ արդեն հարդեն հարկավոր չեր Բեռլինի իր տերերին: Բավական եր գերմանական ֆելզֆերելի բղավոցը միայն, վորպեսպի ուղարյի՝ ժողովրդի ատելությամբ ըլջապատված մինհստրները իրենց տեղը հնարանդորեն զիջեյին վեհէմի գործակալ միապետական գեներալ Սկորոպագսկուն, վորը Զերնիկովյան կալվածատեր եր և հոչակվել եր Ռուկրաինայի գետման: Գերմանական գեներալների թելադրությամբ դրած նրա մանիկիեստն ազդարարում եր, վոր «Ճամանակոր սեփականության իրավունքները, վորպես կուլտուրայի ու քաղաքակրթության հիմունքներ, ամրող ծավալով վերականգնվում են»: Գերմանական պարետներն Ուկրաինայի քաղաքներում ու գյուղերում գաղութային ուժիմ եյին մտցնում: Գերմանական ոկուպացիոն զորքերի ոգնությամբ իրենց կալվածները վերադարձող կալվածատերերը ժամանակոր սեփականության իրավունքները վերականգնում եյին «ամբողջ ծավալով»:

Յելիսավետրովադի գավառում կալվածատեր Սեգլեցին մի ջոկատի հետ յեկավ Ռումիոյե գյուղը, գյուղացիներին հավաքեց վերեզմանատանը և սկսեց մտրակով ծեծել: Նախ սկսեցին մտրակել հողային կոմիտեների անդամներին. «Այս ճեղ հողը բաժանելու համար», այնուհետեւ սկսեցին հերթով ծեծել բոլորին՝ «Այս ել ճեղ աղայի հողը ցանելու համար»: Նույն գավառի կետ-

բիսանովիկա գյուղում գյուղացիներին ծեծելու ժամանակ հարևան վոլոստներից հավաքված կալվածատերերը բրիչկաների ու կառքերի վրա բազմած՝ թամաշա ելին անում դատ ու դատաստանին, աղաղակելով «Ահա! ձեզ հող, ահա! ձեզ ինվենտար»: Կիեվչինայի Սուրբուտի գյուղում գյուղացիների ծեծը տեղի յեր ունենում յերաժշտության ուղեկցությամբ: Եկղեկուցիայի ժամանակ լարվում եր գրամաֆոնը: Մի քանի մարդ ծեծելուց մեռան: Պողովիայում ոկուպանտները գյուղացիներից վոմանց պատճում Ելին հասուկ մարակներով, վորոնք կոչվում ելին «Գրօնչուկ»: Մարակին ամրացվում եր մի կտոր կարմիր գործվածք, վորի վրա գրվում եր «Հող և աղատություն»: Յեկատերինոսալավում քաղաքը պաշտպանող մի քանի հարյուր բանվորներ կայարանի պատերի մոտ տողաններով շարվեցին և գնդացրային կրակով հնձվեցին: Դիակները մերկացնելով՝ դահիճները լցրեցին բեռնատար ավտոների վրա և բնակչությանը սարսափեցնելու համար քաղաքով ման ելին ածում: Պրոֆեսիոնալ միությունների վարչությունները ցրվում ելին հրացանի կոթերով: Մետաղագործների կիեվի միության պատգամավորական ժողովը, մասնավոր բնակարանում հավաքվելով, արձանագրել է. «Վարչությունը ստիպված և թագնելու, շենքը դրավկած և զինվորներով, բոլոր փաստաթղթերը մի կույտ են արել: Գործարանները փակվում են, գործարանները լոկատի միջոցով՝ ձգտում են աշխատավարձն իջնել»:

Յերբ Շչորսի ջոկատն անցավ Խորհրդային Ռուսաստանի սահմանը, նրա թողած Հյուսիսային Զերնիգովչչինայի ուսյոններում գերմանական պարետներն արդեն անցել ելին «կուլտուրայի ու քաղաքակրթության հիմունքների» վերականգնմանը ծեծի և գընդակարությունների միջոցով: Դորբյանկա գյուղում ոկուպացիայի հենց առաջին որը գերմանական հեծյալ ջոկատը շուրջկալ կատարեց: Բոլշեիկներին համակերելու մեջ բոլոր կասկածվողները պարաններով կապվեցին ձիերի պոչից, և հեծյալները նրանց քաշ տվին իրենց հետեւից՝ նրանց հետ արյունուտ դատաստան տեսնելու համար:

\*\*\*

Ունեչա կոչված սահմանամերձ կայարանում Շչորսը վիրավորներին ուղարկեց հիվանդանոց: Ջոկատում մնաց ընդամենը մոտ յերեսուն մարդ: Շչորսը նրանց ժողովի հրամիրեց: Մարտիկների մի մասի տրամադրությունն ընկած եր: Իմանալով ոկուպանտների գաղանային տեռորի մասին, նրանք պատրաստ ելին մինչեւ արյան վերջին կաթիլը կատաղի կոխիլ մղելու, բայց համկանում ելին, վոր իրենց գյուղերը յետ խլելու նրանք առաջմեծ ի վիճակի չեն: Կարծես թե Շչորսն այդ տրամադրությունը չեր նկատում: Նա ինչպես միշտ խոսում եր զուսպ ձեռվ, ինամբով ընտրելով խոսքերը, բաց ճակատով և խիստ նայելով հավաքվածների աչքերին: Նա խոսում եր այն մասին, վոր ջոկատն արգեն գտնվում է Խորհրդային Ռուսաստանի տերրիտորիայում, վոր յեթե բանակ չունես, կովել չի կարելի, իսկ ցաք ու ցրիվ պարտիզանական ջոկատները ի վիճակի չեն թշնամու մինչեւ տամները դինված կանոնավոր զորքերի դեմ կովելու:

— Այժմ մենք կցը Ենք, — ասաց Շչորսը, — մեկ առ մեկ վերադարձեք Ռուկրանա, գործարանները, գյուղերը, ժողովրդին տեղից շարժեցեք նրան նախապատրաստելով՝ ապստամբության: Ջոկատը ցրվում է, բայց ձեզնից յուրաքանչյուրը մարտական առջարգանք և ստանում՝ իր հայրենիքում ապստամբների վաշտ կազմելու: Անտառներում, խուլ ձորերում մարդկանց սովորեցրելք զենքին տիրապետելը, սովորեցրելք նրանց հեղափոխական կարգապահության: Ապա թող նրանք ցրվեն իրենց տները, իմանալով, թե ով վո՞ր դասակումն է, վո՞ր ջոկատումն է և ո՞վ է նրա հրամանատարը: Կդա ժամանակ, և ձեր վաշտերը գումարդելով՝ կվերածվեն զումարտակների, զների, դիվիդիաների: Նրանք թշնամուն կցննեն իրենց յերկրի յերեսից:

Շչորսը խոսում եր ցածր, առանց ձայնը բարձրացնելու, բայց նրա խոսքերում այնպիսի անկեղծ համոզվածություն եր զգացվում, վոր բոլորն ել կարծես իրենց աչքի առաջ տեսնում ելին Բանվորա-գյուղացիական կարմիր Բանակի այդ արդեն կաղմակերպված, սպառազինված, դրոշակները ճեռքներին, մարտի պատրաստ վաշտերը, գումարտակները, զները, դիվիդիաները:

Շչորսը հրաժեշտ տվեց մարտիկներին, յուրաքանչյուրի

ձեռքը սեղմեց։ Զոկատը ցրվեց։ Անտառային արահետներով, քջանցելով գերմանական պոստերը, պարտիզանները թափանցում եյին Ուկրաինա՝ ժողովրդական ասպատամբության կրակը բորբոքելու համար։ Շչորսն իր հետ թողեց միայն մի քանի կոմունիստների, վորոնց վորոշվել եր ուղարկել Մոսկվայում բացվող ռազմական հրահանգին կուրսերը։ Նրանց հետ միասին Ունեչայից Մոսկվա մեկնեց նաև Շչորսը։

## ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Խորհրդային կառավարությունը հենց նոր եր տեղափոխվել Պետրոգրադից Մոսկվա։ Մի քանի խորհրդային նոր հիմնարկություններ գտնելլ Մոսկվայում դժվար բան եր։ Շտապ տեղակորչելով ազնվականների, վաճառականների տներում և ակումբներում, նրանք դեռ չեյին կարողացել ցուցանակներ ձեռք բերել։ Փողոցներում հաճախ պատահում եյին մարդկանց խմբեր, վորոնց մեջ իսկույն կարելի յեր ճանաչել յեկվորների։ Դրանց մեջ յերկրի տարբեր ծայրերից յեկած, տարբեր ազգությունների պատկանող մարդիկ կային։ Այդ յերեսում եր թեկուզ զգեստներից։ Զինվորական շինելների, յուղոտ պիջակների, կաշե կուրտկաների, մաշված դրապե վերաբերունների միջն պատահում եյին կովկասյան յափունջիներ, չերկեսկաններ, նալաստիների բուշատներ և կապույտ ոձիքներ, ուկրաինական սլիտկաններ (յերկար հագուստ) և խայտարղետ բուխարական խալաթներ։ Առաջին անգամը Մոսկվայում, վորը դարձել եր սոցիալիստական հեղափոխության կենտրոն, յերեան յեկան այնպիսի ազգությունների ներկայացուցիչներ, վորոնց մասին դեռ վերջերս այստեղ վոչլոք չեր լսել։

Այդ բոլոր մարդիկ Մոսկվա եյին յեկել ոգնություն, ցուցումներ, խորհուրդներ ստանալու համար։

Դրանց մեջ եր նաև Շչորսն իր զինակիցներով։

Փնտուելով այն հիմնարկություններն ու մարդկանց, վորոնց հետ հարկավոր եր կապվել, նրանք քաղաքում միասին եյին մանգալիս։ Լայն խճած հրապարակներում, հանդարտ, ծուռ ու մոռն նրբակողոցներում, արդեն կանաչաղարդ բուլարներում— ամեն տեղ նրանք հանդիպում եյին ռազմական շարք և հրացանի պրի-

յոմներ սովորող ջոկերի, դասակների ու վաշտերի: Շինելներ կամ ռազմական բլուզներ ունելին հաղին միայն հրամանատարները: Շարքում կանգնածները կրում ելին դեռ քաղաքացիական դեստ—բանվորական բլուզ, պիջակ, կելի: Յերիտասարդների հետ միևնույն շարքերում կանգնած ելին միրուքավոր ծերուկներ: Շչորսը կանգ եր առնում և յերկար ու ուշադրությամբ դիտում եր բանվորա-դյուրացիական կարմիր բանակի այս առաջին դասակները, վորոնց ստեղծմանը ձեռնարկել եր Խորհրդային հանրապետությունը:

Շչորսն իր ընկերների ուշադրությունը դարձրեց այն հանգամանքի վրա, վոր դեռ նոր շարք կանգնած այդ մարդիկ, վորոնք գեռ չելին կարողանում հրացաններն ամուր կերպով իրենց ուսին պահել, հրամանները մեծ ուշադրությամբ և կենարոնացած ելին կատարում: Շչորսը հակատակլած խոսում եր այն մասին. թե ինչ հզոր բանակ դուրս կդա շուտով այդ դասակներից ու վաշտերից:

Փողոցներում, հիմնարկներում, հանրակացարանում, ճաշարանում Շչորսը հանդիպում եր Ռոկրախնայի զանազան տեղերից յեկած ընկերների: Նա աղաճորեն հարց ու փորձ եր անում նրանց գերմանական հափշտակիչների դրաված ուայոնների դրության մասին:

Շչորսին հետաքրքրում ելին բոլոր մանրամասնությունները, բոլոր մանրունքները: Հարց ու փորձ անելով ոկուպանտների կողմից Ռոկրախնայում սահմանված կարգերի մասին, նա հաճախ դիտողություններ եր անում իր բլոկնոտում:

Մի քանի որ հետո Շչորսին և նրա ընկերներին կանչեցին Լենինի մոտ: Վլադիմիր Իլյիչը իմանալով նրանց գալստյան մասին, հաղորդեց, վոր ցանկանում ե անձամբ խոսել նրանց հետ: Նրանք ներկայացան Կրեմլ: Լենինի ընդունարանում նրանց շատ սպասելու պետք չեղավ: Քարտուղարը, Վլադիմիր Իլյիչին դեկուցելուց անմիջապես հետո, յետ դարձավ և խնդրեց մտնել կարինեալը:

Այդ մի փոքրիկ և համեստ կարինետ եր: Մի փոքրիկ դրասեղան և կարմիր մահուղով ծածկված մի ուրիշ, ալելի մեծ սեղան՝ այցելուների համար: Գրքերով պահարաններ: Պատերի

վրա մի քանի աշխարհագրական քարտեզներ: Աչքի ընկնող մի հայտարարություն՝ «Ճիշելն արգելվում ե»: Պատուհանի մոտ մի արմավենի:

Այս բոլորը Շչորսն ու նրա ընկերներն արդեն հետո նկատեցին: Մանելով կարինետ՝ նրանք տեսան միայն դրասեղանի հետեւից բարձրացող լենինին: Վլադիմիր Իլյիչը յուրաքանչյուրի հետ առանձին բարեց, խնդրեց նստել: Նա ասաց, թե արդեն լսել ե նրանց մասին և խնդրեց պատմել ուկրաինական պարտիզանների պայքարի մասին ոկուպանտների գեմ, մի պայքար, վորին նա մեծ ուշադրությամբ եր հետեւում:

Շչորսը, վորը նստած խոսելու սովոր չեր, վեր կացավ: Լենինը շատ ուշադրությամբ եր լսում նրա պատմածը և շատ բան գրի յեր առնում: Վլադիմիր Իլյիչին, ըստ յերեսութին, դուր եր ուկել այդ յերիտասարդ, իրեն հավաքած, ակուրատ հագնված հրամանատարը, վորը մտածված, հստակ և համարձակ խոսում էր: Շչորսը խոսում եր ցաք ու ցրիվ, վաս զինված պարտիզանական ջոկատների կողմից ոկուպանտների լավ մարզված զորքերի գեմ մզվող պայքարի գժվարությունների մասին, պարտիզանների հերոսության, բայց թույլ կարգաւորածության մասին, այն ոգնության մասին, վոր ուկրաինական բանվորներն ու գյուղացիները սպասում են ուստական բոլցեկիներից, կանոնավոր Կարմիր բանակ ստեղծելու և այդ բանակի համար հրամանատարական կադրեր պատրաստելու մասին, վորի մասին մտածում եր ինքը Իլյիչը:

\*\*\*

Լենինի հետ ունեցած զրոյցը Շչորսին Ռոկրախնայի հետագա պայքարի հստակ հետանկարները ավեց: Խորհրդային հանրապետությունն ուկրաինական ապստամբներին առայժմ չեր կարող ոգնություն ցույց տալ: Դեռ նոր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ստորագրած խորհրդային կառավարությունը չեր կարող գերմանական իմպերիալիզմի գեմ նոր սպատերազմ մզելու ուսուկ անել: Կարմիր բանակը գեռ նոր եր կազմվում ցաք ու ցրիվ ջոկատներից: Այդ բանակի ուժն աննշան եր: Խորհրդային կառավարությունն ստիպված եր ընկեր Ստալինի նախագահությամբ մի պատգամավորություն առանձնացնել գերման-ուկրաինական

հրամանատարության հետ հաշտության բանակցություններ վարելու համար: Մայիսի սկզբներին ընկեր Ստալինին հաջողվեց զինադադար կնքել, Կուրսակի, Բյայնսկի և Վորոնեժի ճակատներում: Խորհրդային Ռուսաստանի և գետմանական Ռուկախնայի ժիջե սահմանաբաժան գիծ անցկացվեց: Սակայն գերմանացիների գրաված ռուկախնական տերիտորիայի վրա պայքարը չեր դադարում, նա միայն նոր ճնշեր եր ընդունում: Բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպություններն ի մի եյին հավաքում ուկերանական ժողովրդի հեղափոխական բոլոր ուժերը ոկուպանտների ու նրանց գործականների ղեմ ընդհանուր ապստամբություն սկսելու համար: Լարված աշխատանք եր սկսվել ապստամբության կազմակերպիչների, դեկավարների կազմեր նախապատրաստելու համար: Ռուկախնացի մի շարք ընկերներ, այդ թվում նաև Շչորսի հետ Մոսկվա ժամանած նրա զինակիցներն ընդունվեցին ուազմական հրահանգիչների Մոսկվայի կուրսերը, վորն ավարտելուց հետո նրանք պիտի վերադառնային Ռուկախնային աշխատելու համար:

Շչորսը նույնպես միանգամից չվերագրձավ Ռուկախնա: Կուսակցությունը նրան ժամանակաշրապես ուղարկեց արևելյան ճակատ, վորն այդ մոմենտին չեխոսլովակյան խոռովության, հակահեղափոխականների կողմից Պովոլժյեյի, Ռուբակի մի շարք ռայոնների և Սիրիի յերկաթուղային մագիստրալի զավթման կապակցությամբ հեղափոխության համար վճռական ճակատ եր:

Արևելքում Շչորսը մնաց 2—3 ամիս: Այդ ժամանակվա նրա գործունեյության մասին համարյա վոչ մի փաստաթուղթ չէ մնացել: Շչորսի՝ իր ընկերներին ու ազգականներին արդեն Ռուկրաինա վերադառնալուց հետո պատմածից միայն հայտնի յէ, վոր նա չեխոսլովակների ու սպիտակ-գլարդիականների գրաված ռայոններում գործող սպարտիզանական ջոկատներից մեկի հրամանատարն ե յեղել, վոր հեղափոխության համար նրան պետք եր լինում գյուղացու շոր հագնել և թափանցել հակահեղափոխ սկան գորքերի դասավորման շրջանը, վոր նա մի անգամ քիչ եր մնացել գնդակահարվեր: Յեղայր Գրիգորի Ալեքսանդրովիչի խոռովությի համաձայն Շչորսն այդ դեպքին այսպէս տաղանդավոր ոոչչելող և միանդամից առաջ ե գալիս վորպես տաղանդավոր ոոչչելիկ-կազմակերպիչ և հրամանատար:

— Մի անգամ նրա ջոկատը մոտենում եր սպիտակների գրաված մի գյուղի: Շչորսը վորոշում և ինքը զնալ հետախուզության, մարտիկներին թողնելով ծածուկ տեղում: Նա տրեխներ, զիակուն (կապա) հագած և լինում և ունենում և գյուղացի Տիմոֆեյի անունով անցագիր: Թափանցելով գյուղը և հետախուզուկով սպիտակ-գլարդիականների դասավորումը, Շչորսն ուզեցեց և արդեն վերադառնալ գեղի իր ջոկատը, բայց նրան կասկածի տակ են առել, կալանավորել, բերել են շտաբը: Թեև հարցաքննությունը վոչ մի արդյունք չտվեց, սպիտակ-գլարդիականները վորոշեցին՝ «Համենայն գեղս» նրան գնդակահարել: Արդեն նրա չորսերը հանել և կանգնեցրել եյին պատի մոտ: Հանկարծ ճանապարհի վոլորանից յերեսում և մի մարդատարավոտու: Յերբ ավտոն մոտենում ե, Շչորսը պոկ և գալիս և մի քանի վայրկյանից հետո արդեն մեքենայի մեջ եր: Հետեից սկսում ե անկարգ հրացանաձություն: Շփոթված չոփերը մեքենային ծայր աստիճան արագություն և հազորդում: Գյուղից գուրս թռչելով ալտոն ուղիղ Շչորսի ջոկատին և հանդիպում: Իսկ գիշերը Շչորսը, մանրամասնորեն ծանոթ լինելով սպիտակ գլարդիականների զավակությանը, հանկարծակի հարվածով նրանց ջախջախում ե:

Շչորսի՝ Սիրիում ունեցած գործունեյության մասին հազորդվող նման պատմություններ քիչ չեն և հավանաբար իրենց հիմքում նրանք վավերական են: Սակայն մենք մանրամասնաբար կանգ չենք առնի դրանց վրա, վորովհետեւ դրանք վերաբերում են Շչորսի գործունեյության առաջին պարտիզանական շրջանին և նոր բան չեն ավելացնում նրա մարտական ուղու բնութագրմանը: Անցնենք յերկրորդ ժամանակաշրջանին, յերբ Շչորսը հանդիս ե գալիս վորպես Ռուկախնայի կանոնավոր կարմիր բանակ սուելծող և միանդամից առաջ ե գալիս վորպես տաղանդավոր ոոչչելիկ-կազմակերպիչ և հրամանատար:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Հունիսին ամբողջ Ռէկրախնայում լուր տարածվեց Տաղանքող քաղաքի բանվորների՝ գերմանական համաշտակիչների գետմաղած հերոսական պայքարի մասին։ Տաղանքողի բանվորների մեծ մասը քաղաքը գերմանացիների կողմից դրավելուց հետո գնաց գետի հարավ։ Մայիսի վերջերին, հալավիկելով Յեյսկում, բանվորները վորոշեցին փորձել համաշտակիչների ճեռքից հետ խել իրենց հայրենի քաղաքը։ Նրանց ոգնության յեկան Յեյտակի ոկրուգի պարտիզանները։ Սկսվեց կարմիր գետանտի նախապատրաստումը։ Դեսանտի համար ողտադործվեցին Յեյսկի նախահանդսուում կանգնած 3 տրալչեկ, 2 բոլինդեր (մոտորային շարժիչով մի տեսակ բեռնակիր նաև), բուքսիրներ, մի քանի քառածխատար նավ և տրանսպորտային նավեր։

Բեռնումը սկսվեց հունիսի 3-ին։ Զինված մարդկանց բազմությունը, վորոց մեջ կային նաև կանայք, ամիսն կանգնած սպառում եյին նավերը նստելուն։ Ծովի մյուս ամիսն, մոտավորապես 100 կիլոմետր հեռավորության վրա, գտնվում եր Տաղանքողը։ Բոլորը մտածում եյին միայն մի բանի մասին։ ծովի այն ամիսն ինտերվենտները կողովուում են գործարանները, հանքահորենը և գյուղերը, գնդակահամրում են ընկերներին, յեղբայրներին, հայրերին։ Յեթե այդ որերը վորեն մեկն ասեր, թե մտածած դեռ որսկ հանդիսացող դործ ե, նրան իհամարելին թշնամութան։ Ժողովրդի զայրությը չեր կարելի զապել։

Դեսանտի բեռնումը տևեց չորս որ։ Տրալչեկների վրա դրվեցին 120 միլիմետրանոց թնդանոթներ, բոլինդերների վրա՝ 6 դույմանոց։ Ամեն մի հանոթի համար վերցրին 40—50 տրեկ։ Ավելին ճեռք բերել չհաջողվեց։ Հունիսի 6-ի յերեկոյան բեռնու-

մը և մարդկանց նավ նստեցնելը վերջացավ։ Փոքրիկ Փլոտիլիայի նավերի վրա տեղավորվեց ությա հազարանոց հետեւակ և հեծյալ ժի դեսանու։

Հունիսի 6-ի լույս 7-ի գիշերը Փլոտիլիան կուրս վերցրեց դեպի Տաղանքու։

Լուսաբացի մշուշի մեջ յերեացին բարձրադիր ավի գծերը։ Զախից արդեն յերեւում եր Տաղանքու։ Բայց մինչև Տաղանքու հասնելը դեռ մնում եր 20 կիլոմետր, յերբ մի քանի նավ ծանծաղուտի վրա նստեց։ Նավատրումի հրամանատրությունը լաւ ծանոթ չեր Տաղանքուի առավելաց ֆարվատերին։ Պետք յեցավ ավի դուրս գալ շատ անհարմար տեղում։

Յերբ հանդիսա կապուտակ ծովի վրա ծագեց արկեր, Փլոտիլիան կանգնած եր թշնամու աչքի առաջ։ Տաղանքուի գերմանական կայազորը, վորը շամել եր այդպիսի հանդիպությունից, թվում եր, թե վոչինչ չի կարողանում ճեռարկել դեսանտի դեմ։ Ամբողջ ծովափում մեռելային լուսություն եր տիրում։ Քաղաքի կողմից վոչ մի շամել չեր լուսում։ Սակայն Տաղանքում վողոցների բոլոր խաչմերուկներում գնդացիրներ եյին դրված։ Պատրուները ցրում եյին անցորդներին։ Բանվորական թաղամասերը շրջապատված եյին։ Քաղաքում մնացած բանվորները գերության մեջ եյին մնացել և չեյին կարողացել դեսանտին ողնության հասնել։

Ծածկագիր հեռագրերը վոտքի եյին հանել մոտակա ուայոններում տեղավորված գերմանական բոլոր զորամասերի շտաբներին։ Մինչեռ կարմիր դեսանտի ժամանման լուրը տարածվել եր Տաղանքուից մինչև Զոլոտայա կոսա, ծովափից մինչև Միուսի լիմանը գտնվող բոլոր գյուղերը։ Առանձին-առանձին և խումբներում գյուղացիները, ձկորսները վազում եյին գեպի ծովափի պարտիզաններին ողնության։ Տասնյակ ձկորսներական բարկասներուն նավակներ լողացին գեպի Փլոտիլիայի խարիսխ ձգած նավերը։ Սկսվեց բեռնաթափումը։ Հետեւյալ որն ամբողջ ծովը ծածկված եր առաջատարանավերով։ Հեռավոր գյուղերից ու ավաններից լողում եյին իրենց առաջատարանավերով ձկնորսներն ու գյուղացիները, վորակեսզի ողնեն կարմիր դեսանտին ծովափի դուրս գալու։

Ավ գուրս գալը տեսեց մոտ յերեք որ: Գերմանական սավառ-նակները թուչում եյին ծովի վրայով և ոռումքեր եյին նետում: Թումբերը հսկայական շատրվաններ եյին բարձրացնում, բայց նավերին չեյին դիպում: Ավ գուրս գալու յերկրորդ որը փոթո-րիկ բարձրացավ: Քամին պոկում եր առագաստները, ալիքները ցնում եյին բարկասները, չուռ եյին տալիս, նետում եյին դե-պի ծանծաղուտները, բայց ձկնորսներն ու դյուզացիները աշխա-տանքը չեյին դադարեցնում: Շըջակա դյուզերից յեկած հարյու-րալոր տպամարդիկ ու կանայք, ծովափին չղթա կաղմած, պա-րաններով ձիգ եյին տալիս դեսանտներով լի բեռնակիր նավերը դեպի ափը: Յերբորդ որը փոթորիկն ուժեղացավ: Ավ գուրս գա-լը պետք յեղալ դադարեցնել: Նայերում մնաց դեսանտի մի յերբորդ մասը:

Միայն հունիսի 11-ին գերմանացիք կարողացան ծանր հրե-տանի հասցնել և սկսեցին ֆլուտիկայի ոմբակոծումը: Այդ նույն որը կոխին սկսվեց նաև ծովափում:

Գերմանացիք հետեւակը համախմբելով դեսանտի ափ դուրս յեկած տեղը, հույս ունեյին հետեւակի մի հարվածով դեսանտը ծովը չպրոտել: Բայց առաջին գրոհից հետո նրանք յետ գլուրիե-ցին, նրանք ստիպված եյին կովել վոչ միայն դեսանտի հետ, այլև չըլակա դյուզերի դյուզացիների հետ: Ովքեր գենք չունեյին՝ փամփուշտներ եյին կրում, իսկ կանայք կարկանդակներ եյին թխում և գնդացրային կրակի տակ չղթայում պառկած պարտի-զաններին եյին հասցնում:

Նահանջելով՝ գերմանացիք հրանոթային կրակ բաց արին: Ֆլուտիկան պատասխանեց, բայց արկերը վերջանալուց հետո ստիպված յեղալ ծանր մարտկոցների կրակի տակ ծովափից հետանալ: Գերմանական հրամանատարությունը հունիսի 13-ին կարմիր դեսանտի դեմ կովելու համար ի մի համարէց Տաղանրո-գի ոկրուգում և Ռուսակում կանգնած բոլոր զորամասերը: Այդ որը դեսանտի ջոկատները մի քանի անդամ հակադրուհի դիմեցին և հրետանու փոթորկալից կրակի տակ յետ նահանջեցին: Գեր-մանացիները նրանց գեպի ծովափին եյին նեղում յերեք կողմից: Վեց հազար վատ զինված պարտիզանների դեմ, վորոնք ծախսում

եյին վերջին փամփուշտները, գործում եր ոկուպացիոն զորքերի մի կորպուս:

Կորստի գատապարտված պարտիզանները վճռեցին փորձել պողպատե ողակը պատուել: Դեսանտի հեծելազորը գրոհի դե-մեց: Գյուղացիները, հեծելազորը գերմանացիների կրակից պատպանելու համար, նրա առջեկից քչեցին կովերի մի նախիր, վորը փոշու ամպ բարձրացրեց: Բայց գերմանացիները խորա-մանկությունը հասկացան և կովերին բաց թողնելով՝ պարտիզա-նական հեծելազորը վոչնչացրին գնդացրեների խաչաձև կրակով: Միայն մի փոքր ջոկատի տասնույթեց տարեկան Գրիգորի հվա-նովի հրամանատարությամբ հաջողվեց թշնամու թիկունքն անց-նել: Բայց այդ դրությունը չփրկեց: Կոխիներում 700 մարդ կորցրած դեսանտին դեմ արին ծովի բարձր, դառիթափ ափին: Գերմանացիների ողակը սեղմովում եր: Պարտիզաններին այլևս վոչինչ չեր մնում՝ քան փորձ անել յետ գառնալու գեպի ֆլուտի-փայի նավերը: Բայց նավերն ել ծովում հետո եյին կանգնած, և հրետանու կրակը նրանց թույլ չեր տալիս ափին մոտենալու:

Միայն յերկու հազար պարտիզանների հաջողվեց նավ նստել, մնացածները շրջապատված եյին: Զկամենալով անձնատուր լի-նել՝ շատերը քարափից ընկնում եյին ծովը: Հրետալորները թըն-գանոթների ու ձիերի հետ միասին նետվում եյին ծովը:

Սկսվեց արյունալի դատաստանը: Գերմանական հետեւակը չըլազատեց անձնատուր յեղած պարտիզաններին, վորոնք զենքը ծովն եյին նետել, և նրանց սինիներով քչեցին դյուզերը: Բոցմա-նովո դյուզը մոտ յերեք հազար գերիներ հավաքվեց: Բաժանելով 50—100 մարդուց բազկացած խմբերի գերիներին մոտեցնում եյին քարափին: Նրանք գնում եյին յերելով: Նրանց գնդակահարում եյին գնդացրիներով, տողաններով շարելով՝ յերեսները գեպի ծովը դարձրած: Ամբողջ ափը դիակներով եր ծածկված: Գերի-ների վերջին խմբերին հրաման եր արված գերեզմաններ փորելու: Նույնը տեղի ունեցավ Պոլյակովկա դյուզի մոտ:

Գերիների թվում 70 կարմիր քույրեր կային: Նրանց հագուս-տը հանեցին, քույրերին քչեցին ափը և ստիպեցին ծովն ընկնել: «Հաղթողներն» ափին կանոնած՝ սուլում և հո՞ւ եյին անում: Այնուհետև, արյունից հարրած, նրանք սկսեցին կրակել: Կա-

նայք խեղովում եյին։ Փրկվեց քույրերից միայն մեկը, զորք լողալով հասալ բաց ծովը։ Գերմանացիք նրան տեսան, յերք նա արդեն ծովափից հեռու յեր։ Հետեւալ որը հունիսի 14-ին Տագանրոդում պատերին վակցվում եր գերմանական պարետ ժայոր պարոն Փոն-Հյուլմինդենի հետեւյալ հրամանը.

«Հրամայում եմ անհապաղ իրազեկ գարձել գերմանական կոմենդատուրային՝ քաղաքում վախած բոլչեիկներ յերեալու ամեն մի առանձին գեղքի մասին։ Իր մոտ բոլչեիկ թաղյող յուրաքանչյուր վոք մահվան կուտապարտիի, ընտանիքը կաքորվի, խալ գույքը կդրավի հոգուտ գերմանական զորքերի»։

Գյուղերում սկսեցին զատաստան տեսնել այն գյուղացիների հետ, վորոնք դեսանտին ոգնել եյին կամ վորոնց վրա կասկած կար, թե ոգնել են։ Հունիսի 15-ին Մալայա ֆյուղորովկա գյուղում գնդակահարվեց 29 մարդ։ Վեսյոլյե գյուղում կալվածատերերի ցուցումով բոնված գյուղացիները յինթարկում եյին միջնադարյան տանջանքների։ Նախ քան գնդակահարելը նրանց ձեռները, վոտները կտրում եյին, աչքերը հանում եյին։ Չնայած գերմանացիների գաղանային տեսորին՝ ազստամբների պայքարը գրավված ուայոններում չեր գաղարում։

\*\*\*

Յերեք ամիս եր անցել այն որից, յերբ Շչորսի ջոկատի մարտիկները վերադարձել եյին իրենց գյուղերը։ Հացահատիկը հավաքելու ժամանակը մոտենում եր։ Գյուղացիները հրաժարվում եյին հնձել կարվածատերերի դաշտերը։ Ոկուպանաները հիմնել եյին գյուղատնտեսական սպաների պաշտոն։ Սրանց ոգնությամբ կալվածատերերը փորձում եյին կոռ մտցնել։ Իշխանուհի Դուդորուկայի Տանովսկի կարվածի կառավարիչը հուլիսի 24-ին հայտնում եր Զվենիկովորովի գալառակի գյուղատնտեսական ըսպային, վոր Ռասսոնովատկա և Նովոսելիցի գյուղերի գյուղացիները հրաժարվում են աշխատանքի դուրս գալուց։

«Խոնարհարար խնդրում ենք միջոցներ ձեռք առնել Հիշյալ գյուղերի գյուղացիներին դրեկու, վորպեսի աշխատանքի դուրս դան և անցնեն հացահատիկը հնձելու, վորովհետեւ հացահատիկն արդեն հասել ե սկսել ե թափիւլ։ Նաև խնդրում ենք ձեր աջակցությունը այդ գյուղերից որաժշակներ և բանվորներ նշանակե-

լու ցելը հերկելու և տնտեսության մեջ զանազան աշխատանքներ կատարելու համար, տանուտերերին բացատրելով, վոր նրանք պարտավոր են այդ անել համաձայն գավառային գյուղագետի չրամանի»։

Մեկ այստեղ, մեկ այստեղ բոնկվում եյին գյուղացիական ապստամբություններ։ Գյուղացիները միանում եյին և կազմում եյին պարտիզանական ջոկատներ, փորում և դուրս եյին հանում բանջարանոցներում ու անտառներում թաղած դենքը, այրում եյին պամեշչիկական կալվածներն ու ցանքերը։ Յերկաթուղային կայարանների մոտ զինվորների պահպանության տակ կուտակված եյին հացահատիկի լեռներ, թափառում եյին ձիերի ջոկեր, յեզների նախիրներ, խոզերի յերամակներ, վորոնք բոնագրավիկը եյին Գերմանիա ուղարկելու համար։ Ակուպանաները չեյին կարողանում այդ բոլորը գուրս տանել։ Գործադուներ եյին սկսվել։ Բոլոր յերկաթուղայինները գործադուներ եյին արել։ Գերմանիա գնացող և հացով, շաքարով, անսառւններով բեռնված ապրանքատար գնացքները խորսակվում եյին։ Ծնդհատակյա բոլչեիկյան կազմակերպություններն ամբողջ Ռւկրախնայում վլուստային, գավառական, նահանգական հեղափոխական կոմիտեների ցանց եյին ստեղծում։ Այդ հեղկումներին զլխալվորում եր Համառւկրաինական հեղկումը, վորն ընդհանուր ապստամբություն եր նախապատրաստում։ Գերմանական հրամանատարությունը հեռագրեր եր ուղարկում Բեռլին, խնդրելով ավելացնել ոկուպացիոն բանակը։ Այդ բանակը չեր կարողանում ճնշել ապստամբությունը, վորը մի գավառից մյուսն եր անցնում։ Հուլիսի վերջերին ապստամբությունն ընդդրել եր Զերնիգովչինայի հարավային բոլոր գավառները։ Ապստամբության կենտրոնն եր Նեմինի գավառի Վերկեյելկա գյուղի անտառային-ճաճուռ ուայոնը։ Այստեղ եր Զերնիգովչինայի ապստամբ ջոկատների շտաբը։ Այդ շտաբի հրամանները հաղորդվում եյին Նեմինի, Կողելեցի, Պստյորի, Զերնիգովչի, Կոնոտոպի, Բորգենայի գավառների բոլոր գյուղերին։

## ՀՐԱՄԱՆ № 1

«Նահանգի ամեն մի գավառ պետք է ունենա իր ոազմա-Հեղափոխական կազմակերպությունը... Վոլոստի ամեն մի կազ-

մակերպություն իր ուժերը զորահավաքի յենթարկելով՝ պետք ետա ռազմական ժամանակի մի վաշտ, իսկ գավառը՝ մի գունդ: Անունը պետք է լինի ըստ գոյության վայրի»:

#### ՀՐԱՄԱՆ № 4

«Բոլոր ապստամբներին պետք է սովորեցնել զենքի հետ վարդել և հրացան, գնդացիր ու ատրճանակ կրակել և մանավանդ ձեռքի նոնակներ գործածել, վարոնց հետ պետք կլինի գործ ունենալ»:

Կարգածատերերը, գետմանական ու գերմանական իշխանությունները գյուղերից փախել եյին քաղաքները՝ ոկոպացիոն զորքերի պաշտպանության տակ:

Նեժինի գավառի գյուղացիներն արդեն ազատ հնձում եյին կարգածատերական դաշտերի հացարույրեր:

Բայց Կիեվից, Զերնիդովից, Բախմաչից գերմանական հրամանատարությունը Նեժինի գավառը շարժեց 10 հազար ամին: Գոմելի կողմից արագ փոխարժեց մի հեծյալ գիշեղիա: Ակուպանտների զորքերը գավառը շրջապատեցին: Ակուպանտը շուրջկարն անտառներում:

Ապստամբների մեծ մասը զենք չուներ: Փամփուշտների թիվը շատ չնչին էր:

Ոկոպանտներն ապստամբությունը ձնշեցին՝ գնդակահարեցով մոտ յերեք հազար ապստամբ: Նրանց ընտանիքները կոտորվեցին: Մի քանի ապստամբների գերմանական հափշտակիչները չորս կտոր արին:

Ում հաջողվեց շրջապատումը պատուել, փախան շյուսիսյին Զերնիդովչինայի անտառները:

\*\*\*

Դեսնա գետով և նրա Սնով ու Սուլոստ վտակներով կտրված Շյուսիսյին Զերնիդովչինայի անտառային մանապարհներով որ ու գիշեր շարժվում եյին ոկուպանտների հետեակ և ձիագոր պատրուլները:

Ճանապարհից դուրս գալուց, անտառի մեջ խորանալուց վախենում եյին նույնիսկ ուժեղ գերմանական հեծյալ հետախուզությունները: Անտառում ապստամբները վիսում եյին:

Գիշերներն անտառում ապստամբների ջոկատները խարույկելու ելին վասում: Խուլ, թփուտներով ծածկված անտառային արահետներով, քարափներով և ճահճների միջով մենակ և խմբերով ապստամբների մոտ եյին անցնում գյուղացիական սիլտկաներ, չինելներ, պիջակներ հագած մարդիկ: Շատերը գնում եյին արթխներով: Սլիմակների ու չինելների փեշի տակ շատերը խնամքով զենք եյին տանում:

Մարդիկ գնում եյին լուս, վախեցներով միայն թռչուններին, մինչեւ վոր անսպասելի կերպով թփուտների միջից միանգամից զուրս չեյին նայում մի քանի վորսորդական յերկիող հրացաններ, բերդանկաներ և հրացաններ:

— Ո՞վ և գալիս:

Մարդիկ տալիս եյին Զերնիդովչինայի մոտակա Նովգորոդ-Սևերսկի, Ստարոգուրի, Նովզիկրկովի, Կլինցիի գավառների գյուղերի ու ալանների անունները: Պարտիզանների մեծամասնությունը հենց այդ տեղերից եր: Նրանք ճանաչում եյին իրենց ընկերներին, հաճախ յեղբայրներին ու հայրերին: Բայց յերեմն, պատասխաններով պարտիզանների ուղեկարի կանչին, մարդիկ անծանոթ գյուղերի անուններ եյին տալիս: Նրանք գալիս եյին այստեղ հեռուներից: Գալիս եյին Զերնիդովչինայի հարավային գավառներից, Պոլտավչինայից, այսուղեյին անցնում նույնիսկ Դնեպրի աջ ափից՝ տարաչացները, զվենիդորոգիները, Կիեվի բանվորները: Նրանք անցնում եյին այն չեղոք գոտին, վորը բաժանում եր գերմանացիների գրաված Ռոկաբինան Խորհրդային Ռուսաստանից... Զեղոք գոտում կաղմակերպվում եյին ուկրաինական խորհրդային բանակի առաջին կարմիր պատամբարներին գնդերը: Մոտենում եր ընդհանուր ապստամբության որը:

Ամեն գիշեր պարտիզանական խարույկների մոտ դիմավորում եյին նոր մարդկանց: Նրանց գլխին հարցերի տարափ եյին թփում: Նրանք ասում եյին, վոր Ռուկրաինայում աշխատավոր ժողովրդի համար գերմանական ոկուպանտների կրունկի տակ ապրելն այլևս անտառների յե: Քաղաքներից յեկողներն ասում եյին, թե գերմանական զորքերն Ռուկրաինայում տեր ու տնորինություն են անում ինչպես իրենց գաղութում: Հացն այնքան և թանգա-

ցել, վոր բանվորն այն չի կարող գնել, իսկ այդ նույն ժամանակը յերկաթուղիներով որ ու գիշեր պարենով բեռնված յերկար եշերներ են գնում դեպի Գերմանիա: Գերմանացիք Ուկրաինայից արտահանում են հաց, շաքար, անասուն, ձարպ, թռչուն, ձու: Գործարաններում դերմանական լեյտենանտները ռազմական դիսցիլինա յեն սահմանում: Բանվորներին դաղդյահի մոտ են պահում՝ ատրճանակի փողը վկակոթին դնելով: Բոլցեիլիներին համակրելու մեջ բոլոր կառկածվողներին դնդակահարում և կախում են: Քաղաքների ծայրամասերում շարված են թարմ գերեզմանների ըլուրներ և կախաղանների ամբողջ շարաններ:

Իսկ գյուղացիներն ասում ենին, թե գերմանական համբակիչների գալուց հետո կարվածատերերը բացեիրաց կողոպտում են գյուղերը: Պաների գույքը վերապարձնելու ողատրվակով գետման Սկորոսլաղսկու հայրամակների ջոկատները գյուղացիներից խլում են անասուններն ու ինվենտարը: Պանական կամքին չյենթարկվելու գեպօրում գերմանական պարեաները գյուղերի վրա նրանց ուժից վեր տուգանքներ են դնում: Յեթե գյուղացիները խռովություն են բարձրացնում, գերմանական հրամանատարությունը հայրամակներին ոգնության և ուղարկում պատժիչ արշավախմբեր: Գյուղերը շրջապատվում են հետեւազորով, գնդակոծվում են հրետանիով և գնդացիրներով: Մինչև վերջը քայլած գյուղացիները կացիների ու յեղանների յեն դիմում:

— Շո՞ւտ կտրվի արդյոք ընդհանուր ապստամբության հրամանը, — հարցնում եյին պարտիզանները:

Գերմանական ոկուպանտների ուժիմը պարտիզաններն արդեն իրենց կաշվի վրա եյին փորձել: Անտառ յեկած նոր մարդկանց հարց ու փորձ անելիս նրանք ամենից շատ հետաքրքրվում եյին, թե չկա՞ արդյոք վորեև ցուցում ընդհատակյա բոլչելիյան կազմակերպություններից, չկա՞ արդյոք բոլցելիյան գրականություն:

Իսկ Հյուսիսային Զերնիգովչչինայի շատ գյուղացիներ, պարտիզանների մոտ գալով՝ ամենից առաջ հարցնում եյին.

— Զե՞ն լսել արդյոք, թե վո՞րտեղ ե քեռի Միկոլան:

Քեռի Միկոլա նրանք կոչում եյին Նիկոլայ Շչորսին, վոր ժամանակամիջոցում արդեն վերապարձել եր Ուկրաինա:

\*\*\*

Մի անդամ մուլթ սպոստոսյան գիշերը Սնովսկի կայարանի սեմաֆորի մոտ ապրանքատար գնացքի չողեմեքենայից վայր ցատկեց մի գյուղացի: Այդ՝ զգեստը փոխած Շչորսն եր: Սնովսկում նա անցկացրեց մի քանի որ: Ապրում եր իր ընկերներից մեկի տան ձեղունահարկում, իր քեռի Կոլրասկոյի մառանում, փողոց դրա գալով միայն յերեկոյան, մութն ընկենուց հետո: Գերմանական պատրուներն ու հայրամակները վոչ մի ուշագրություն չեյին դարձնում վաղցով դանդաղ թրե յեկող տրեխներով, մեջքին մի պարկ գցած գյուղացուն:

Շչորսը ման եր գալիս իր հին ընկերների աները:  
Բոլորը նրան հարցնում եյին.

— Լսել ենք, թե Լենինի մո՞տ ես յեղել, Նիկոլա'յ:  
— Այսուհետեւ մասնաւում եր Շչորսը, — Լենինը հետեւում է մեր յուրաքանչյուր քայլին: Նա մեզ կանչեց իր մոտ զեկուցելու և պատվիրներ ավեց: Լենինը պատվիրեց հաղորդել, վոր հույս ունի ուկրաինացիների վրա... Միավում ե ընդհանուր ապստամբության նախապարաստումը: Ապստամբ ջոկատներն արգենմիացվում վերածվում են գնդերի: Այս մասին կա Համառեկրաինական հեղկոմի հրամանը: Ամբողջ աշխատանքը կատարվում ե չեղոք գոտում: Այստեղ հավաքվում են բոլոր ուժերը: Զենք բավականաչափ կա: Առաջին գունդը սեմաֆոր ե կազմակերպեմ յես: Ռայոնն և Ռւնեչա-Պոչեա: Հարեւան գունդը կազմակերպում ե Բոժենկոն, Սերեդինայա Բուդայում: Վերջերս Աջափից<sup>1)</sup> կովով այստեղ անցան Տարաշչայի ջոկատները: Զերնիգովչչիները թող անցնեն ինձ մոտ: Բոլոր աղաներին հաղորդեցեք...

Անտառային արածետներով, քարափներով և ճահիճներով, շրջանցելով գերմանական ու գետմանական պատրուներին, ապրստամբներն անցնում եյին չեղոք գոտին: Մահմանն անցնելով՝ նրանք հարցնում եյին.

— Վո՞րտեղ ե Շչորսը:

Տեղական գյուղացիները նրանց պատասխանում եյին.

— Շչորսն Ռւնեչայումն ե:

1) Խոռքը Դնեպր գետի աջի ափ մասին ե: Հայեր, քարզմ. խմբ.

Սովորած լինելով գնալ անտառային արահետներով և քարափներով՝ նրանք այսուհետեւ արգեն գնում ելին լրջն պողոտայով դեռ ևս իրար հետեից, իրարից հավասար հեռավորության վրա:

Ունեչա կայարանում նրանք ներկայանում ելին Բողունի անվան առաջին ուղարկնական խորհրդային ապստամբ գնդի շտարը: Այսուեղ նրանց ամենից առաջ հարցնում ելին:

— Գերմանացիների ու հայումակների կողմից ցուցակագրվել եք:

Մեծամասնությունը պատասխանում եր՝ այո՛ և ցույց եր տալիս ուսերն ու մեջքը, վորոնք պատժիչ արշավախմբերի հրացանի շամփուրներով ու մտրակներով գաղղղլված ելին: Շատերն ասում ելին, թե իրենց աներն այրել են, իսկ ընտանիքները կոտորել: Բայց այդ մարդկանց ևս գունդ ընդունում ելին՝ նրանց հետ խնամքով ծանոթանարուց հետո, հանդամանորեն հարց ու փորձ անելուց հետո:

Հավաքագրման բաժնում գունդ յեկող կամավորներին հաճախ գիմավորում եր կաշվե կուրտկա հագած, ու միրուքով մի յերիտասարդ, վորին վոմանք պատահարար շտաբ հանդիպած՝ անտեսական գործերի վորեե քաղաքացիական կոմիտարի տեղ ելին դնում: Յերեւմն նկատելով վորեե յերիտասարդ կամավորի, նա մասով իր մոտ եր կանչում և շշուկով ասում եր.

— Զե՞ք ուզում արդյոք գործ տամանալ:

«Քաղաքացիական կոմիտարին» արհամարհական հայացքով չափելով՝ յերիտասարդը սովորաբար կոսկիտ իրապով նրան պատասխանում եր.

— Ի՞նչ եք խցկում ձեր աշխատանքով, յես յեկել եմ գունդը մտնելու:

Աև միրուքով մարդը չեր չփոթվում.

— Գուցե դուք կարծում եք, թե ձեզ այսուեղ նոր զգեստավորում կտան: Ամենեին: Կարող եմ ձեզ հավատացնել: Նույնիսկ հացն ու մախորկան ել միշտ չեն լինի: Իսկ կովի դնալիս ել մարդուն մի քանի փամփուշտ են տալիս:

— Վոչինչ, ինձ հերիք ե: Յես վաստ կրակող չեմ, շտափանչուշտ չեմ ծախսի:

— Այդ իհարկե լավ և, բայց գերմանացիներն ու հայկամակները նույնպես վատ չեն կրակում: Ապա յես ձեզ ուզում եմ նախաղգուշացնել, վոր այսուեղ գնդում շատ խիստ գիսցիպլինա յե: Առանց հրամանատարի հրամանի նահանջելու համար գնդակահարում են վորպես դավաճանի:

— Ե՛ս, յես դրանից չեմ վախենում:

— Ի՞նչ եք սառում, միթե կյանքից ձանձրացել եք: Ավելի լավ է՝ աշխատանքի գնացեք: Յես կարող եմ ձեզ իսկույն տեղակորել: Լավ պայոկ կստանաք և այլն:

Վերջիվերջո յերիտասարդը գրանից պոռթկում եր.

— Ի՞նչ եք ուզում ինձնից: Յես ձեզ մոտ չեմ յեկել, այլ զունդ: Ուկրաինայում գերմանացիներն են, իսկ դուք ինձ առաջարկում եք ինչ վոր պայոկ:

Այն ժամանակ միրուքավոր մարդը կամավորից հեռանում եր և արդեն բոլորովին ուրիշ տոնով եր խսում:

— Լավ տղա յե: Ուզարկեցե՛ք սրան Զուբրովի մոտ:

Զհականալով, թե բանն ինչումն ե, յերիտասարդը զայրացած գոռում եր.

— Յես վոչ մի Զուբրովի մոտ չեմ գնա: Ասացի, վոր յես յեկել եմ գունդը, Շչորսի մոտ:

Նրան բացատրում ելին, թե Շչորսը նրան ուղարկում է յերկրորդ գումարտակը, վորի հրամանատարն է Զուբրովը:

Սոկած, շշմած յերիտասարդը նայում եր սե միրուքով մարդուն և աչքերին չեր հավատում: Նա Շչորսին պատկերացնում եր վորպես զենքի բոլոր տեսակներով զարդարված հեքյաթային աժդահա:

## ԳՆՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ունեչա կայարանը գտնվում էր չեղոք գոտու սահմանում։ Այդ գոտին, վորը բաժանում էր գրավված Ռեկրախնան Խորհրդային թուսաստանից, գերմանական հրամանատարության հաշիվներով պետք է գառնար ոկուլացիոն բանակի զինվորներին բոլշևիզմով «վարակվելուց» պաշտպանող մի պատվար։ Իրոք այլ բան ստացվեց։ Ռեկրախնայի բազմաթիվ ապստամբ գավառներից այստեղ եյին թափանցում գերմանական զորքերի շրջապատման միջով ապստամբների հետեւակ և հեծյալ ջոկատները։ Բնակչությունը կամավոր կերպով նրանց պարեն և կեր եր մատակարարում։ Աշնան դեմ չեղոք գոտին գարձել էր Ռեկրախնայի հեղափոխական կենտրոն, վորն ապստամբել էր ոկուլացիաների ու գետանի դեմ։

Սեպտեմբերի 22-ին Համառւկրախնական հեղումը հրաման արձակեց չեղոք գոտում գտնվող ջոկատներից յիրկու ապստամբական դիմիզիա կազմակերպելու մասին։

Ապստամբների ուժերն սկսեցին գումարվել և վերածվել ներդաշնակ մարտական միավորների՝ հետեւակ գնդերի, հեծյալ հարյուրակների, հրետանային մարտկոցների, գնդացրավոր դորախմբերի։

Առաջին դիմիզիայի Բողոքնի անվան առաջին գնդի հրամանատար նշանակվել էր ՇՀ բարս Արքային բարձրակային կազմակերպվող Տարաշչայի յերկրորդ գնդի հրամանատարն էր Կիեվի ատաղձագործ, արևենալի բանվոր, ծերուկ Բոժենկոն, վորին մարտիկները կոչում եյին «բատակո»։ Նովորոպ-Ռեկրասկը դեպի արևելք գտնվող անտառներում չքավոր դյուզացի Շերբնյակը կազմակերպում էր առաջին դիմիզիայի նովորոպ-Ռեկրասկի յերբորդ գունդը։

Շչորսի հետ միասին Ունեչա յեկան նաև Սեմյոնովկայի ջոկատի նրա հին զինակիցները, վորոնք սաղմական հրահանգիչների գլուխցն աշարտելուց հետո կարողացել եյին լինել Ռեկրախնայում և կազ հաստատել ընդհատակյա բուշեիլյան կազմակերպությունների հետ։

Հեղիոմում Շչորսը հանդիպեց Սեմյոնովկայի իր նախկին ջոկատի մարտիկ-հետախույզ ֆրումա Ռոստովկայի հետ։ 1918 թ. գարնանը գերմանական ոկուլանաների դեմ մղած առաջին կոխվներից մեկում նա վիրավորվեց և գերի ընկապ։ Քան տարեկան հրյա աղջկան գնդակահարություն եր սպառնում, բայց պատահականությունը փրկել եր նրան։ Փերությունից վիրադառնարուց հետո ֆրումա Ռոստովկային կուսակցությունն ուղարկեց Ունեչա սահմանապահ չեկայում աշխատելու համար։ Բողոքնի անվան գնդի կազմակերպման հենց առաջին որերը նա աշխատանքով մտերժացել եր Շչորսի հետ։ Շուտով չեկայությունը դարձավ Շչորսի լավագույն ընկերուհին ու ոգնականը, իսկ հետո նաև կինը։

Մեկը մյուսի հետեւից Ունեչա եյին վիրավառնում նաև Սեմյոնովկայի այսակեղ մի քանի ամիս առաջ Շչորսի կողմից ցրված ջոկատի շարքային մարտիկները։ Ապստամբներն Ունեչա եյին գալիս ամրող ջոկատներով՝ իրենց գենքով ու դրոշներով։ Շչորսը նրանց ընդունում էր դունք՝ առանձին մարտիկները ուշադիր զննելուց և նրանց հետ զրուցելուց հետո։ Առաջիններից մեկը ժամանեց Կիեվիցի զավասի Գորդեյելկայում կազմված ջոկատը։

Չորս շարք կանգնեցրած, վուշոտ ապստամբները սպասում եյին Շչորսին։ Նա դուրս յեկավ պատշգամբ կարմիր-բանակայինի աստղ ունեցող դիմիզիով, ասալ, վոր նրանցից վոչվոք դեռ չեր տեսել։ Նախքան վողջունելը, Շչորսն ուշադրությամբ զննեց շարքերը։ Ապստամբները հազել եյին՝ ով ինչ կարողացել եր։ Գնդացրային ժամանակով պատաճ ուկրախնական սիլիտկաները խառնվում եյին զինվորական շինելների հետ, կանեփի շապիկները՝ ճակատային ֆրենչների հետ, կաշէ կոշիկները՝ տրեխների հետ։ Ապառաջինությունը նույնքան խայտարգեա եր՝ հրացաններ, բերդանկաներ, վորսորդական յերկուազ հրացաններ, ինք-

նագործ շոմպոլիաներ, ոբրեգներ (փողը կարձացրած հրացաններ): Համարյա բոլորն եւ ունելին թէլերի վրա կախված նոնակներ:

Զոկատի հրամանատարը «զգա՞ստ» հրամանը տվեց, մոտեցավ Շչորսին և զեկուցեց.

— Հեղկոմի հրամանի համաձայն յեկել եմ ձեր արամադրության տակ: Զոկատում կա 157 մարդ: Ճանապարհին միացան 20 կամացոր:

Շչորսը պատշտամքից իջավ.

— Բարե, ընկերներ, յես գնդի հրամանատարն եմ, ազգանունս ե՛ Շչորս:

Աջ թերում կանգնած եր յոթանառուն տարեկան գյուղացի Պրոկոպենկոն— սպիտակամորուս, մեջքը չկորացած, տրեխներ հագած մի հսկա:

— Ինչի՞ համար ես կովում, պապիկս, — հարցրեց Շչորսը:

— Վորդուս և աղջկաս հրեշները տանջեցին: Շամփուրներով մահացու կերպով ծեծեցին:

— Հաստա՞տ կերպով ես վորոշել կովել խորհրդային իշխանության համար:

— Յեթե յեկել եմ գունդ քեզ մոտ, ապա նշանակում ե՛ հաստատ կերպով: Այս թոռանն ել հետո եմ վերցրել:

Կողքին կանգնած եր նույնպես տրեխներ հագած մի պատանի՝ արտաքուստ տասնուշեց տարեկանի մոտ, նույնպիսի մի հսկա, ինչպես իր պապը, մի ովին ել գոտիկը խրած: Այս հրացան չուներ:

— Իսկ քեզ համար, յերիտասարդ տղա՛, գեռ շուտ չե՞ արդյոք կովելը, — Հարցրեց Շչորսը: Նա նայում եր պատանուն՝ դլուխը բարձրացրած:

— Ինչո՞ւ յե շուտ: Խոկական ժամանակն ե: Յես փոքր չեմ: Շչորսը ծիծաղեց:

— Հա, այդ յես տեսնում եմ: Իսկ վո՞րտեղ ե քո հրացանը:

— Զգիտեմ՝ ինչու չեն տալիս: Այս ովինն են միայն տվել, այն ել հաղիկ համոզեցի, վոր տան:

— Ավելինո՞վ ես կովում:

— Յես ինքու չեմ կովում, յես պապիս եմ ողնում: Երա հա-

մար վամբվուշուն եմ դնում պահունակի մեջ: Քի՞չ գործ կա այս- տեղ:

— Տունը թողնելու համար չկար: Թող այսուհեղ քո մոտ սովորի, — ասաց պապիկը:

— Թող սովորի, — համաձայնեց Շչորսը:

Ազստամբների հետ խոսելիս Շչորսն ամենից ավելի շեշտում եր այն, վոր գնդում ոտհմանվում ե ամուր զիսցիսլինա, և գունդ ընդունվում են միայն նրանք, ովքեր վորոշել են խորհրդային իշխանության համար պայքարել՝ չինայելով իրենց կյանքը:

Հեռանալիս Շչորսը դիմեց բոլորին:

— Մատածեցե՞ք իմ ասածի վերաբերյալ, իսկ վազը մենք յուրաքանչյուրին գունդ ընդունելու առանձին կձեռակերպմաք:

Զոկատը տեղավորվեց գլորցիկ՝ իր համար արդեն պատ- րաստված շենքում: Սեղանների վրա բարձրանում եր սուազով թե ամանների գոլորշին: Ճաշի ժամանակ ապստամբներն իրար հետ- մտքեր եյին վորխանակում Շչորսի մասին: Նրանց մեծ մասին գնդի հրամանատարը գուր եր յեկել, բայց մի քանիսն առում ե- յին: «Ինչ վոր շատ և շեշտում զիսցիսլինայի մասին, հանկարծ վորեւ չար գիտավորություն չլինի, տեսնենք, թե ինչով իրեն ցույց կտա»:

Գնդի կազմակերպման հենց առաջին որից սկսած՝ Շչորսն սկսեց այնուեղ կանոնավոր զորամասի խիստ կարգ ու կանոն հաս- տատել: Մի քանի կամակորներ, վորոնք սովորել եյին հեշտ ու հանդիսաւ պարտիզանական կյանքի, մի անգամից չհաշտվեցին այդ կարգ ու կանոնի հետ: Սկզբում սրանց բանը դժվար եր: Շչորսը պահանջում եր վոչ միայն խիստ կարգապահություն, հրամաններին անխօս յենթարկել, այլ նաև համառ կերպով ձգտում եր մաքրության, ճշտապահության, զգաստության: Թափիթիված, վիճի մարդկանց նա տանել չեր կարող:

Ազստամբներից մեկը շտար յեկալ կեղտուա, չսափրված: Մինչդեռ նա ինչ-վոր բանի մասին եր զեկուցում, Շչորսն ուշա- գրությամբ դիտում եր նրան և հանկարծ ասաց:

— Բայց դուք, ընկեր, վոջլուել եք:

Շչորսը նրա ոճեթից վոջիւր վերցրեց, մի թերթ թղթի վրա- դրեց և ցույց տվեց նրան:

Ապատամբը բոլորովին եւ չչփոթվեց:  
 — Գուցե վորեւ նորին բարեծնողության համար այդ գար-  
 աւանալի յէ, իսկ մենք սովոր ենք:  
 — Պետք կլինի այդ սովորությունը թողնել և ամենից առաջ  
 բաղնիս գնալ:  
 Շչորսը կանչեց շտարի հերթապահին և հրամայեց:  
 — Ընկերով մեկի ուղեկցությամբ տանել բազնիս, լողաց-  
 նել, սակրել և գեկուցել, վոր մարդկային կերպարանք և ընդու-  
 նել... վաղոտներին այլևս շտար չեմ թողնելու:  
 Այդպիսի հրամաններ Շչորսը հաճախ տալիս եր բարակներն  
 այցելելիս, վորտեղ տեղափորված ելին նրա գնդի վաշտերը:  
 Մի անդամ յերեկոյան, դիտելով օրդ վաշտի մահակալունե-  
 րը, Շչորսը մի կարմիր-բանակայինի հրամայեց.  
 — Հապա՞ մի, յերիտասա՞րդ, պառկեց՞ք ձեր մահձի վրա:  
 Կարմիր-բանակայինը հրամանը կատարեց:  
 — Հարմա՞ր ե, — հարցրեց Շչորսը:  
 — Այո՛, հարմար ե, ընկեր հրամանատար:  
 — Իսկ ըստ իս վո՞չ: Վե՛ր կաց:  
 Շչորսը ներքնակի տակից հանեց կեղտուա սպիտակեղենը:  
 — Այս ի՞նչ ե, — հարցրեց նա՝ սպիտակեղենը մատի ծայրե-  
 ռով բռնած:  
 — Սպիտակեղեն ե:  
 — Ինչպիսի՞ սպիտակեղեն:  
 — Կեղտուա սպիտակեղեն:  
 — Շատ ճիշտ ե: Գլխի ընկար: Այժմ կրկնի՛ր ինձ հետ՝  
 «կեղտուա սպիտակեղենն անկողնում»...  
 Կարմիր-բանակայինը շփոթված կրկնեց:  
 — Կեղտուա սպիտակեղենն անկողնում...  
 — Իսկ հետո՛: Հապա՞ ո՞վ դիտե՞:  
 — «Ստորդ վո՞յի և մարմնի վրա», — խմբովին ասացին  
 քանի կարմիր-բանակայիններ, վորոնք արդեն լսել ելին Շչոր-  
 սից այդ առացլածը:  
 — Ճի՞շտ ասացված ե, հերոս, — հարցաքննում եր Շչորսը:  
 — Այս շատ ճիշտ:  
 — Ուրեմն գույ յեկել ես գունդ վո՞յինե՞ր աճեցնելու:

— Ներեցե՞ք, ընկե՛ր հրամանատար:  
 — Միայն առաջին անգամը: Գրամանա՞չ ես:  
 — Թեեկ վոչ այնքան, բայց քիչ ու միչ գիտեմ:  
 — Այսոր լրագրերում ի՞նչ ես կարդացել:  
 — Յես, ընկե՛ր հրամանատար, այսոր դեռ չեմ կարողացել  
 կարգաւու:  
 — Լավ, լավ, չես կարողացել: Այն ժամանակ պատմի՛ր,  
 թե յերեկ ինչ ես կարդացել:  
 Կարմիր-բանակայինը կարմիրով՝ խոսովանեց, վոր յերեկ  
 ել լրադիր չե կարդացել:  
 — Ժամանակ չկար, ընկե՛ր հրամանատար:  
 — Լավ, լավ, ժամանակ չկար, իսկ յերեկ չե մեկել ո՞վը:  
 Շչորսի շուրջն արդեն կանգնած եր ժպտացող, արմունկներով  
 իրաք հրմշտող կարմիր-բանակայինների մի խումբ:  
 — Յերեկ չե մեկել որն ե՞լ չես կարդացել:  
 — Վո՞չ, ընկե՛ր հրամանատար:  
 — Իսկ վաղը կկարդա՞ս, հերոս:  
 — Այո՛, անպատճառ:  
 — Ինքը կարդա՞ և ուրիշներին ել պատմի՛ր. մեզ մոտ գրա-  
 գետները դեռ հատ ու կենտ են:

\*\*\*

Գունդը կազմակերպելու ոկզում Շչորսն ամբողջովին  
 ընկրմվել եր անտեսական գործերի մեջ: Նա ցանկանում եր, վոր  
 գունդն զգեստավորված լինի ըստ պահանջված ձեի, իսկ այդ  
 այն ժամանակները հեշտ խնդիր չեր: Վորոչ բան Շչորսին հա-  
 ջողվեց գտնել Ռոկրախնայից գուրս բերված և կայարանում մնա-  
 ցած ապրանքատար գնացքներում յեղած գույքի մեջ: Վորոչ  
 բան գտան լքված պահանստներում: Ամեն մի գյուտ առաջ եր  
 բերում Շչորսի ուրախ բացականչությունը.

— Սա ուղղակի գա՞նձ ե: Հաշվի առնել:

Շչորսը ման եր գալիս պահանստները՝ բլոկնոտը ձեռքում, և  
 գրանցում եր նրա մեջ այն բոլոր մանրունքը, վոր կարող եր  
 գնդում պետք գալ:

Պատահում եր, վոր նրան ասում ելին.

— Այսոեղ բան չկա: Անպետք բաներ, փալաս-կուլուս են:

— Գուցե վասի փաթաթոցի համար պետքական վորեն բան գտնենք, — ասում եր Շչորսը և ինքը խառնշտորում եր այդ փաւաս-փուլուսը:

Գնդի սպառազինումը գաղտնիքով եր շրջապատկած: Զեզոք զոտում վիստացող գերմանական լրտեսները յերկար ժամանակ շեյին կարողանում հասկանալ, թե Շչորսը վո՞րտեղից և զենք ձեռք բերում: Հյուսիսից Ունէչա դալիս եյին միայն ապրանքատար գնացքներ՝ առավելապես կարտոֆիլով բեռնված:

Ունէչայի քաղքենիները ծիծաղում եյին և իրար մեջ խոսում եյին.

— Շչորսը, ըստ յերեսույթին, մտածում և գերմանացիներին արէերի փոխարեն կարտոֆիլով ոմքակոծել:

Բայց գիշերը կայարան վագոնները բեռնաթափելու համար յեկած վաշտերը կարտոֆիլի հետ միայն դուրս եյին բերում այդ կարտոֆիլի մեջ թագցրած հրացաններ, գնդացիրներ և փամփուշտների արկղներ:

Բեռնաթափման ժամանակ Շչորսը վագոններից չեր հեռանում: Ետ ինքն եր ստուգում և հաշվում ամբողջ զենքը:

Գիշերցերեկ զբաղված լինելով գնդի կազմակերպումով՝ Շչորսն ընդհատումներով եր միայն քնում: Յերբեմն, նստած շտաբին կից իր փոքրիկ սենյակում, հոգնած, նա գլուխը խոնարհում եր սեղանի վրա և մի քանի բովելով ննջում: Կողք-կողքի գտնվում եր միշտ ակուրատ կերպով հարգարված մահակալը: Առավոտները շարային պարապմունքներին Շչորսը դուրս եր գալիս միշտ զգաստ, իրեն հավաքած, առույդ:

Նրա հրամանատարական ձայնը հնչում եր տիրաբար և խոսու. «Ավելի հաստատուն քայլով», «Հավասարում վերցնել», «Ավենները չկախել»:

Շարային պարապմունքները Շչորսն անց եր կացնում կանոնավոր կերպով որական 8 ժամ և խստիվ հետևում եր, վոր վոչվոք այդ պարապմունքներից չխուսափի: Այս հանդամանքը պարտիպանաբար տրամադրված, սակայ գիտակից կարմիր-բանակայինների մի մասի մեջ տրտունջ եր առաջ բերում: Յերեան յեկան սիմուլանտներ:

Մի անդամ Շչորսի մոտ յեկալ գնդի հիվանդանոցի քույրը և ասաց:

— Ի՞նչ անենք, Նիկոլայ Ալեքսանդրովիչ: Ամեն առավոտ հիվանդանոցը լիքի և լինում, և յեկողների մեծ մասը բոլորովին առողջ են:

Շչորսը մտածմունքի մեջ ընկալ: Գնդում յեղած խոսակցություններից զգացվում եր, վոր ինչ-վոր մեկը գիտակցաբար գժոհություն և հրահրում շարային պարապմունքների վերաբերյալ: Սիմուլացիայի դեպքերը մի անդամ ևս այդ հաստատում եյին:

— Լավ, — ասաց Շչորսը, — վազն արդեն բոլոր հիվանդներին ինձ մոտ ուղարկեցեք ընդունելության: Պետք կլինի նրանց հետ ավելի մոտիկից ծանոթանալ:

Հետեւյալ որը շաբարի մոտ շարվեց «հիվանդների» հերթը: Սրանց մեծ մասը Շչորսի մոտ ուղղվելիս իրենց անհարժար եյին զգում:

Շչորսը նրանց մեկ-մեկ եր ընդունում:

— Ի՞նչդ և ցավում, — հարցրեց Շչորսն առաջինին:

— Կուրծքու և ինչ-վոր ծակում, — շփոթված պատասխանեց «հիվանդը»:

— Հապա մի շապիկով հանի՛ր:

— Ինձ, ընկե՛ր հրամանատար, վորեն պարաչոկ տայի՛ք լավ կլիներ:

— Այ՛, հենց հիմա կտեսնենք, թե քեզ ինչ դեղ և հարկա-վոր նշանակել:

Բժշկական փողակով զինված Շչորսն ուշադրությամբ լսեց «հիվանդին» և գլուխն որորելով ասաց:

— Այս՝, քեզ հարկավոր և լուրջ կերպով բժշկել: Ավելի շատ աղատ ողում լինել, վորքան կարելի յե շատ: Ամենալավ գեղատառմու շարային պարապմունքներն են... Հետեւյալը:

Գնալիս շապիկը քաշելով, տղան Շչորսի մոտից քրտնամխած դուրս թռավ:

— Հետ դարձեք, աղե՛րք, — բղավեց նա հերթի կանգնածներին: — Անպայման մեր հրամանատարը բժիշկ ե, այնպիսի գեղատումս կնշանակի քեզ, վոր...

Հերթն իսկույն հալվից : Վաշտերը վերադառնալով՝ «Հիվանդներն» իրենց ընկերներին պատմում եյին Շչորսի գեղատում—սի մասին և նրանց հետ միասին միահամուռ ծիծաղում եյին իրենց վրա և ապա վոչ առանց հալարտության ասում եյին .

— Մեր հրամանատարին խարել չի լինի : Հասկացող է :

Սիմուլացիան գնդում դադարեց, պարապմունքի դուրս եյին դալիս բոլորը : Տրտունջը կարծես չքացավ : Բայց յերբ Շչորսը, հավաքելով կոմունիստ հրամանատարներին, նրանց հարցնում եր, թե վաշտերի տրամադրությունն ի՞նչպես է, ապա մարդիկ տարակուսանքով ուսները թոթվում եյին . ամեն ինչ կարծես կարգին է, բայց յերբեմն ինչ-վոր կասկածելի փափսոց և նկատվում :

Շչորսն զգույշ էր : Գերմանական պոստերն Ունեչայից մի քսնի կիլոմետր հեռավորության վրա եյին գտնվում : Ակուպանտների գործակալները վիստում եյին չեղոք գոտում : Ամեն բողե կարելի յեր պրովոկացիա սպասել :

Մի անգամ յերեկոյան Շչորսը հրամանատարներին ժողովի յեր հրավիրել ակումբի շենքում : Ժողովը ձգձգվեց : Սպասում եյին դիմիկիայի հրամանատարի գալստյանը : Հանկարծ փողոցում անկարգ հրացանաձգություն սկսվեց : Ապակիները թափեցին : Ինչ-վոր մեկը բղավեց .

— Գերմանացի՞ք :

Շչորսը վայրկենապես ակումբից դուրս թռում : Վազեց շտարը : Վերցրեց հեռախոսի փողակը :

Կայարանը չեր պատասխանում : Հեռախոսը չեր աշխատում : Շչորսը յետ դարձավ, բայց այդ բողեյին շտաբ ներխուժեցին մի քանի մարդ՝ հրացանները հորիզոնագիր : Առջևից՝ բարձրահասակ, կողակի գլխարկով և հսկայական մաղավնջով մի մարդ :

— Ի՞նչ ե պատահել, — կամցուկ հարցրեց Շչորսը :

— Լավ, հերիք ե ինչքան հրամանատարություն արիր :

— Կալանավորել դրան, — գոռաց Շչորսը : Մարդիկ կմկմացին, իրար յերես նայեցին :

— Կոտրտվելը թող, — գոռաց մաղամինջով մարդը : — Շտաբը ըրջապատված է : Զենքը հանձնիր և յեկ գնանք — քեզ պիտի դատենք :

— Լավ, սպասեցե՞ք, յես միայն հագնվեմ, — ասաց Շչորսը և դիմեց մյուս սենյակը : Մի քանի վայրկյանից հետո նա վերադարձավ՝ բարձրացրած ձեռքում նոնակը բռնած :

Այդ բավական եր, վորպեսզի բոլորը դես ու դեն փախչեն :

— Ա՛յս, վախկունե՞ր, մեկից վախեցաք, — գոռաց նրանց հետեւից Շչորսը :

Փողոցից աղաղակներ եյին լսվում : Տեղի եյին ունենում հասառ կենտ կրակոցներ : Շչորսը պատուհանից դուրս թռավ բակը : Արտակարգ հանձնաժողովի տան մոտ նույնպես ամբոխի աղաղակներն եր լսվում : Շչորսը մոտեցավ և սկսեց ականջ դնել : Առանձին ձայներից նա հասկացավ, վոր ֆրումա Ռոստովան հաջողեցրել և թագնվել : Կես ժամից հետո արդեն Շչորսը գնդի բարակների մոտ եր : Պարզեց, վոր ինչ-վոր մեկի կողմից պլուզով կացիայի յենթարկված հեծյալ հարյուրյակը հրամանատարները՝ մի մասին բանտարկել ե և վորոչել ե նորերին ընտրել : Ալուզիա գարաները փորձում եյին իրենց կողմը գրավել դնելի մնացած ստորաբաժանումները, բայց նկատելի հաջողությունն չունեյին : Մի վաշտ արդեն դուրս եր յեկել խոռվությունը ճնշելու համար, գրավել եր կայարանն ու հեռագիրը : Սակայն առանձին վաշտերում կարմիր-բանակայինների մի մասը տատանվում եր, առաջարկում եր սպասել՝ մինչեւ պարզվի, թե ի՞նչ պատճառով ե առաջ յեկել խոռվությունը : Շչորսն սկսեց շրջել բարակները :

Առաջին վաշտը աղմկոտ միտինդ եր անում : Շչորսին նկատելով՝ որպազահը սարսափելի ձայնով գոռաց .

— Զդե՞ս :

Աղմկուկը դադարեց : Բոլորը յերեսները դարձրին դեպի Շչորսը :

— Վո՞րուեղ և վաշտի հրամանատարը :

Վոչ վոք չպատասխանեց :

— Դուրս յեկեք բակը շարուելու :

Վոչ-վոք չշարժվեց :

— Խլացե՞լ եք, — հարցրեց Շչորսը :

Ինչ-վոր մեկը յերկուս կերպով ասաց .

— Այսեղ, ընկեր, հրամանատար, աղմաները բանաձև Եյին քմարկում :

— Քվեարկում եյին, — հարցրեց Շչորսը և հանկարծ դու-  
ռաց: — Հասկա ով Ուկրաինայից ե՝ թող ձեռք բարձրացնի:

Մեկը մյուսի հետեւից բոլորը դանդաղորեն ձեռքները բարձ-  
րացրին և կանգնած եյին բարձրացրած ձեռքներով շփոթված,  
չհասկանալով բանի եյությունը:

Շչորսը զսպված ծիծաղեց:

— Ուրեմն, միաձա՞յն: Ել ի՞նչ կարիք կա քվեարկելու: Բո-  
լորդ Ուկրաինայի՞ց եք:

— Շատը Նեժինից ե, ընկեր Շչորս, — գուաց մեկը:

— Կուկաչի անտառեցիներ են, — արձագանքնց մի ուրիշը:

Մեկը մյուսի հետեւից աղաղակեցին՝ կարծես սառւդում լի-  
ներ:

— Վերկեյելոյից են:

— Նոսովից են:

— Դրոզդովոյից են:

— Մինիկովից են:

— Սեմյոնովկայից են:

Շչորսը թուավ նստարանի վրա: Նա իրեն դեռ զսպում եր,  
ռայց զգացվում եր, վոր նրա ներսն ամեն ինչ յեռում ե: ՅԵՐԵԱԾ  
գունատ եր, աչքերը վառվում եյին, կարաններին կացրած ձեռ-  
քերը հազիվ ցնցվում եյին:

Վաշտը սովորեց, կարծես թե ինչ-վոր մեկը շենքի մեջ ոռումք  
եր նետել: Վորտեղ վոր ե՝ այդ ոռումքը կոպայթի: Խոկապես,  
վոր Շչորսի յերկար զսպվող կրակուտ խառնվածքը ոռումքի նման  
պայթեց.

— Ում տունն Ուկրաինայում այրել են, — ասաց նա, ձեռ-  
ները կարաններին կացրած կանգնելով, և հանկարծ նրա ճնշված  
ձայնն ազատություն ստացավ, — ում ցանքերը, անասունը խե-  
ցին, ում հորը և յեղբորը հայդամակները, գերմանացիները գըն-  
դակարել են, ում մեջքը դաղդղված ե գերմանական շամ-  
փուրներով — դեպի գե՞նք: Հեղափոխության անունով հրամա-  
յում եմ — գեպի գե՞նք: Մա՞զ պըսովոկատորներին: Վոչ մի գթու-  
թյուն հեղափոխության դավաճանների նկատմամբ:

Ամբողջ վաշտը սիսեռի պես ցրվեց բարակում: ՆՅՈՎԵԼՈՎ

գեղի հրացանները՝ կարմիր-բանակայինները ցատկում եյին  
տախտերի վրայով: Զիշխացին փակաղակները:

Շչորսը նստարանից վայր թուավ և արդեն սովորական հան-  
գիստ ձայնով հրամայեց:

— Դուրս յեկեք բակ: Շարվեցե՛ք:

Շրջապատված խոռվարաններն առավոտյան հանձնեցին գեր-  
մանական լրտեսների կողմից գնված պրովոկատորներին, թշնա-  
մարար դուրս հրելով նրանց շարքերից: Հենց նույն որն աշ-  
խատանքի անցավ գնդի ամբողջ կազմը ստուգելու համար Շչոր-  
սի նշանակած հանձնաժողովը: Այդ հանձնաժողովին ողնելու  
համար կարմիր-բանակայիններից ու հրամանատարներից ընտըր-  
վեցին վաշտային հանձնաժողովներ: Ստուգումը տեղ մոտ մի  
շաբաթ: Հանձնաժողովն ստուգեց բոլորին, չբացառելով նաև ի-  
րեն Շչորսին: Մի քանի մարդ հանձնվեց հեղափոխության տրի-  
բունակի դատին:

Գնդում մնալ ցանկացող բոլոր մարդկանց Շչորսն առաջար-  
կեց հեղափոխական յերդում տալ: Այդ յերդման տեքստը նա  
ինքը մշակեց և ապա հանձնեց վաշտերին քննելու:

«Յես քաղաքացի այսինչս միանդամայն կամավոր կերպով  
ժոնում եմ Առաջին Ուկրաինական ապօտամբ գնդի շարքերը և  
պարտավորվում եմ առանց իմ կյանքը խնայելու պայքարել ընդ-  
դեմ կապիտալիստների ու կալվածատերերի՝ Ուկրաինան ոկու-  
պանաներից ու հակահեղափոխականներից ազատագրելու համար  
և անխոս կատարել իմ պետերի բոլոր հրամանները: Վախկոտու-  
թյան, դասալքության, մարողյորության և հարբեցողության  
համար յես յենթակա յեմ հեղափոխական ուղղմական տրիբունա-  
մի դատին և բարձրագույն պատժի՝ գնդակահարության գործա-  
գրմանը: Այս յերդումը յես կարդացել եմ, նրա հետ լիովին հա-  
մաձայն եմ և այդ հաստատելու համար սեփական ձեռքով ստո-  
րագրում եմ»:

Կարմիր-բանակայինները յերդում եյին տակիս ըստ վաշտե-  
րի: Հանդիսավոր պայմաններում նրանք մեկ առ մեկ մոտենում  
եյին աեղանին: Շչորսն ամեն մեկին հարցնում եր.

— Հաստա՞տ վորոշել ես գնդում մնալ:

— Այո՛:

— Կյանքը չպիտի՞ խնայես հեղափոխության համար:  
— Վ՛ո՞չ:

Սեղանի վրա դրված եր յեղման տեքստը: կարմիր-բանակային այն բարձրաձայն կարդում եր և ստորագրում: Շչորսը սեղմում եր ձեռքը և չնորհավորում գնդում թողնելը:

Շատերը սեղանին մտաենալով թույլտվություն եյին խնըերում մի ժամ ևս մտածելու:

— Լա՛վ, մտածիր: Գործը լուրջ դործ ե,— ասում եր Շչորսը:

Վոմանք այդպես ել սիրո չեյին անում յերդում տալու: Նրանց առաջարկվեց անմիջապես զենքը հանձնել և վերադառնալ տուն:

Նորից սկսվեցին շարային պարապմունքները: Գնդի կյանքը նորմալ հունի մեջ մտավ: Յերեկոներն Շչորսը ժողովներ, դրույցներ եր անցկացնում:

Այդ ժամանակ գնդում ընդամենը 10—15 կոմունիստ կար, բայց Շչորսի կողմից հմտորեն դասավորված լինելով՝ նրանք ունեցին նրան անհարազատներին մաղելու և արագորեն իր շուրջը համախմբելու յերեկվա պարտիզան՝ կարմիր բանակայինների ամբողջ մասսան:

Շչորսի հրամանատարությամբ գունդ ստեղծելու հրամանն ստորագրվել եր սեպտեմբերի 24-ին, և մի ամիս անց գունդն արդեն իր կազմում ուներ 3 գումարտակ՝ յուրաքանչյուրը 300—400-ական մարտիկ, յերեք հրանոթ ունեցող մարտկոց, մի եռկադրոն հեծյալներ և մի գնդացրային զորախումբ:

Բոլոր ստորաբաժանումները տեղավորված եյին կայարանմերձ տներում ու բարակներում, վորոնք խնամքով վերասարքավել և զորանոցների եյին վերածվել:

## ԲՐՈՒՏՆԵՐԻ ՊՈՒՄԱԿՆԵՐՈՎ

Շչորսի պահանջկոտությունը, նրա խստությունը հայտնի եյին կազմակերպվող հարևան մյուս գնդերում ևս, սակայն այդ գնդերից շատ մարտիկներ աշխատում եյին անցնել Շչորսի մոտ: Սրա յերիտասարդությունը ծերունիներին չեր չփոթեցնում: սըրանք գիտեյին, վոր Շչորսի վրա կարելի յե հույս դնել, վոր նա իզուր մարդկանց չի զոհի: Նրանց դուր ե գալիս նաև այն, վոր ապստամբ բանակի հրամանատարների միջև Շչորսն աչքի յեր ընկնում իր կուլտուրականությամբ: Նա չեր թագդնում այդ, չեր աշխատում շրջապատող մարդկանց նմանվել, այլ պահանջում եր, վորակեսզի նրանք հավասարվեն իրեն: Շչորսը պահանջում եր անխոս յենթարկվել իրեն, և բոլորը նրան յենթարկվում եյին՝ քսաներեք տարեկան այդ հրամանատարի մեջ հսկայական ուժ գգալով: Իհարկե, վոչ բոլորն եյին հասկանում, վոր բոլ-շեմիկան կազմակերպվածության ու դիսցիպլինայի ուժն ե այդ:

Նույնիսկ Տարաչչայի գնդում, վորը գլխավորում եր ապլստամբների հայտնի կազմակերպիչ ծերուկ Բոժենկոն, Շչորսի հեղինակությունը ճանաչում եյին բոլորը, այդ թվում նաև ինքը «բա՛տկան»:

Եերբ սկսվեցին մարտական գործողությունները, դեկտեմբերի հրամանատարությունը Բոդունի անվան առաջին գունդը միացրեց Տարաչչայի յերկրորդ գնդի հետ և մեկ բրիդադաշտ կազմեց Շչորսի գլխավորությամբ, վորը միաժամանակ մնում եր առաջին գնդի հրամանատար:

Շչորսը մարտական գործողություններն սկսել եր դեռ Հոկտեմբերին, բայց սկզբում նրանք պատահական բնույթ եյին կըրում: Այն ժամանակ գերմանական զորքերը տեղավորված եյին

Հեղոք գոտու յերկայնքով առանձին ուժեղ ամբացլած կայազորներով: Յերկյուղ կրելով չորս կողմը թափառող ապստամբներից՝ սահմանը պաշտպանող գերմանական հետախուզություններն ու պատրուլներն աշխատում եյին չհեռանալ իրենց կայազորներից: Հափառակիչները գերադասում եյին նստել փշալարերով շրջապատված բլինդաժներում: Մրանից ոգտվելով՝ Շչորսը գերմանական զորքերի թիկունք եր ուղարկում փոքրիկ ջոկատներ, վորոնք զնդի համար ձեռք եյին բերում նրան պակասող ձիեր, թամբեր, զենք: Յերբեմն ջոկատները վերադառնում եյին նաև գերիներով: Հոկտեմբերի կեսերին Շչորսը վորոշեց թշնամուն հասցեկ սուաջին լուրջ հարվածը: Մշակելով սրբնթաց խոր շրջանցման և միաժամանակ ճակատից կատարվող հանկարծակի հարվածի իր տակտիկան, Շչորսը յերեկոյան շարային պարապմունքներից հետո թաղում՝ գունդը դուրս բերեց Ունեշայից: Յերկրորդ գումարտակը դիմեց դեսի կլինցիի կողմը և թիկունքից կատարված հանկարծակի հարձակումով դրավեց Ռորչիկ դյուզը, վորտեղ տեղավորված եր գերմանական ուժեղ կայազոր: Առաջին և յերրորդ գումարտակները Շչորսի գլխավորությամբ իրենց ճանապարհին վոչ մի պատրուլի չանդիպելով՝ նույնական անսպասելի կերպով ընդհուպ մոտեցան Լիշչիցի դյուզին: Գերմանական կայազորը բողունցիներին նկատեց ժիայն այն ժամանակ, յերբ նրանք գրոհի նետվեցին բլինդաժների վրա:

Կարձատել մարտից հետո, ոկուտանտների ուժերը շոշափելու, նրանց տեղավորումը հետախուզելու վերաբերյալ իր խնդիրը կատարելով, Բոդունի անվան գունդը կատարյալ կարդ ու կանոնով յետ նահանջեց դեսի Ունեչա: Այդ հանկարծակի հարձակումը Շչորսին ցույց տվեց, վոր գերմանացիների մարտունակությունը ոկուտացիայի ժամանակ խիստ ընկել է, վոր զինդիրների մեջ արդեն կազմալուծում և սկսվել, կարգապահությունը խախտվել է:

Շուտով գնդի շտարը ներկայացավ գերմանական հրամանատարության ներկայացուցիչ՝ մի սպա: Նա թարգմանչի միջոցով բողոք հայտնեց հաշտության պայմանագիրը խախտելու համար: Շչորսը հրամայեց հաղորդել, թե գերմանացի պարոն սպան, ըստ

յերեռութին, սխալ հասցեյով և դիմել ուկրաինական ապստամբները գերմանացիների հետ վոչ մի պայմանագիր չեն կնքել:

— Ձեր բողոքը հանձնեցե՞ք պան գետմանին, — ասաց Շչորսը, — կարծեմ նրա հետ եք դուք պայմանագիր կնքել:

Գերմանացի սպան կատաղեց: Թարգմանիչն ամեն մի խոսքից հետո կմկմում եր, փորձելով մեղմացնել նրա կոպիտ հայոյանքը:

Շչորսը նստած եր զրասեղանի մոտ միանդամայն անվլողով: Ընդհատելով ինչ-վոր բան թոթովով թարգմանչին՝ նա ասաց.

— Պարոն սպային հաղորդեցեք, թե ուկրաինական խորչըրդային բանակի զնդի համանատարը կհրամայի նրան դուքս շարտել, յեթե նա իրեն անպատկառ ձեռվ պահի:

Թարգմանիչն այս, ըստ յերեռութին, բավական ճիշտ հաղորդեց: Գերմանացի սպան կարմրատակեց, բայց ուշքի գալով, արդեն այլ տոնով սկսեց խոսել:

— Սպան ինդրում և հաղորդել, — ասաց թարգմանիչը, — վոր գերմանական կայսերական բանակը կարող է խորհրդային մեկ զնդի դիմաց իր յերեք գունդը հանել:

— Ասացե՞ք նրան, վոր բոլոր յերեք գունդն ել կվոչնչացվեն, — պատասխանեց Շչորսը:

— Սպան հաստատ համոզմունք և հայտնում, վոր այդ բանը յերեք չի սպատահի:

— Իհարկե, յեթե գերմանական կառավարությունն իր գորքերն անմիջապես հեռացնի Ուկրաինայից:

— Սպան խնդրում և հանաք չանել: Այդպիսի կատակներն, ասում են նա, աննպատակ են, վորովհետեւ բոլցեիները շատ քիչ զինված զինվորներ ունեն:

— Ասացե՞ք սպարոն սպային, վոր նա գործին տեղյակ չե:

Գերմանական սպան, յերեխ, իսկույն հասկացալ, թե ինչի մասին և ակնարկում Շչորսը: Գերմանական հրամանատարությունն իրեն բոլորովին ել պինդ չեր զգում Ուկրաինայում: Նա դիմեր, վոր բավական ե՝ չեղոք գոտում կազմակերպվող խորչըրդային զնդերը սահմանն անցնեն, նրանց կակսեն միանալ անբռնելի, անտառներում ու դյուզերում թագնվող, առայժմ ցաք ու ցրիվ, հարյուրավոր կարմրիր ապստամբական ջոկատներ:

Բողունցիների ու տարաշանցիների հարձակումն ընդհանուր ապստամբության աղջանան կլինի: Այն ժամանակ ոկուզանադներին դժվար կլինի ճակատը ջոկել թիկունքից: Շչորսն, ընդհակառակը, իրեն շատ ամուր եր զգում: Քաղաքական աշխատանքի համար առանձնացրած կոմունիստների խմբակը կապ եր պահպանում չյուսիսային Զերնիգովչչինայի բոլոր ապստամբ ջոկատների հետ: Այդ խումբը նրանց մատակարարում եր թե՛ռուսերեն, ուկրաիներեն ու գերմաներեն գրականություն և թե՛հրացաներ, գնդացիրներ ու փամփուշտներ:

Այդ այսպես եր կատարվում: Այդ տեղերում գյուղերը շրջող բրուտներից, վորոնք կավե ամաններ եյին ծախում, մի քանի այլ ապլանք եյին գնում: Սայլի հատակին դնում եյին գրականության կապցներ, հրացաններով կամ գնդացիրներով արկղդներ, վրայից հարդ եյին փոռում, խկ դրա վրա ել բրուտի ամաններ եյին շարում: Վստահելի մարդիկ գումակներն անց եյին կացնում սահմանլից, գերմանական պոստերի մոտով, վորոնք, սովորած լինելով գյուղերով քոչող բրուտներին, նրանց վրա ուշադրություն չեյին դարձնում: Մոտակայերկաթուղային կայարանում գրականությունն ու գենքը հանձնում եյին ծանոթ մեքենավարների: Նրանք շողեքարշերի տենտերներով այդ բոլորը փոխադրում եյին Ուկրաինայի խորքը, վորն ընդդրկված եր ժողովրդական ապստամբության բոցով ընդդմուկուզանական շատ գետմանի կառավարության:

Գրականության և զենքի հետ միասին Ունեչայից դեպի Ուկրաինայի խորքն եյին ուղարկվում նաև պարտիզանական շարժման կազմակերպիչներ: Հոկտեմբերի կեսերին Շչորսը կազմակերպեց Ուկրաինա վերադարձող մի խումբ պարտիզանների համար կուրսերի նման մի բան, վոր ինքն եր զեկավարում:

— Այժմ ապստամբ ջոկատների գլխավոր խնդիրն ե կամուրջները պայմանական դորքով ու պարենով գընացքները խորսակել, — ասում եր Շչորսը՝ զրույցներ անցկացնելով Ուկրաինա մեկնող ընկերների հետ: — Յեթե զործը մի տեղ կլիմի, մի վախենա, գնա՞ մի ուրիշ տեղ: Զենք վորքան պետք լինի՝ յես ձեզ կիրիսադրեմ... ընդհանուր ապստամբության գեպօռում դուք ի՞ ալ թեր կլինեք:

Այս խմբի բոլոր ընկերները մեկնում եյին դեպի Պրիալյատ գետը՝ Զերորիլիից մինչև Պինչկ: Մի քանի ամիս անց՝ այդ ասցնում ստեղծված ապստամբ ջոկատները կազմեցին Շչորսի դիվիզիայի գնդերից մեկը:

— Մինչեւ ընդհանուր ապստամբությունը մի՛ տարվեք պարախպանական յելոյթներով: Ավելի մեծ ուշադրություն դարձրե՛ք քաղաքական աշխատանքին, բոլցեկիլյան կադրեր պատրաստելուն, — ասում եր Շչորսը:

Նա բագմից կրկնում եր.

— Ինչպես սունկերն անձրեց հետո, այժմ պետք է Ուկրաինայում բուսնեն բոլցեկիլյան բջիջները:

Շչորսը յերբեմն լուս՝ յերկար նայում եր մի կողմ, իսկ հետո հանկարծ, կարծես ինչ-վոր բան հիշելով, աշխուժանում եր և ձայնը բարձրացնում:

— Յեթե ախպերացուներից մեկն ու մեկը կցանկանա ատամանություն անել — մի՛ դիմագրեք, թող ատաման ձևանա, բայց նրանց վերաբերմամբ միշտ պետք է զգույշ լինել և, հենց վոր մի բան նկատիի, ամուր բուռը հավաքել... «Հրշեջները» միշտ պետք է մեր մարդիկը լինեն, այն ժամանակ ամեն ինչ կարելի յե հանդցնել, յեթե ներսը նույնիսկ, ինչպես ասում են, բոցը դեղին դաշտերից մինչև կապույտ յերկինք բարձրանա:

«Հրշեջները» բառը Շչորսն արտասանում եր ինչ-վոր առանձին բավականությամբ, ձախ աչքը կկցցելով և ժպտալով: «Հրշեջները» նա կոչում եր գնդացրորդներին:

Շչորսի՝ մեկնողներին տված հրահանգները միշտ գործարար, պրակալիիկ բնույթ ունեյին, բայց միևնույն ժամանակ այդ հրահանգները նաև քաղաքական դիրեկտիվներ եյին: Այս դիմը Շչորսի շատ կարեռ դիմն և, մի բան, վոր չի կարելի ասել ապստամբների շատ հրամանատարների մասին, վորոնք քաջեր, հերոսներ եյին կովի ժամանակ, բայց հաճախ անողնական եյին, յերբ գործը վերաբերում եր քաղաքականության:

Մեկնողների հետ ունեցած իր զրույցներում Շչորսը համառորեն նրանց ուշադրությունն եր դարձնում աղջային հարցի վրա: Ուկրաինայում բորբոքված պայցքարում այդ հարցը չափանց կարեռ նշանակություն ուներ: Բուրժուական նացիոնա-

լիսաները, ցանկանալով գյուղացիների ապստամբական շարժումը պոկել բոլեկիյան ղեկավարությունից, ամբողջ ուժով փորձում ելին այդ շարժման պատվաստել Ռւէրախնայի «անկախության» լոգունդը: Այդ լոգունդը մերկացնելու, նրա հակահեղափոխական եյությունը բացահայտելու համար պետք եր լավ իժանալ ուկրախնական ժողովրդի պատմությունը: Շչորսը սիրուժ եր իր յերկրի հերոսական պատմությունը և այն հանդամանորեն դիտեր: Պատահական չեր, վոր նրա գունդը կրում եր ուկրախնական խիզախ կողակ Բոկունի անունը, վորը ուկրախնական ժողովրդի՝ XVII դարում լեհական Այախտայի դեմ մղած պայքարի հերոսներից մեկն եր: Իր մարտիկներին կոչելով բողունյաներ, նա դրանով ընդդում եր, թե դնդում պետք և ապրեն ուկրախնական կողակության լավագույն մարտական տրամդիան այնը, այն կողակության, վորը հերոսաբար պաշտպանել եր իր հայրենիքը լեհական հակշտակիչներից:

Հոկտեմբերի վերջերին Շչորսը բրուտների գումակի հետ Ռւէրախնա ուղարկեց ապստամբ ջոկատների կազմակերպիչների վերջին խումբը: Մեկնելուց առաջ նա, ինչպես սովորաբար, ստուգեց, թե արդյոք բոլո՞րն են փողով, տաք շոշով, վոտնամներով ապահովված, յուրաքանչյուրից հարց ու փորձ արակ նրա անձնական կյանքի, ընտանիքի նյութական դրության մասին: Նրանց ճանապարհ դնելիս հասցնելով Ռւնեչից բավական հեռու, նա վերմորեն սեղմեց բոլորի ձեռքը:

— Դե՛, տղե՛րք, շուտով կտեսնվենք: Հիշեցե՛ք, վոր իններութ ալիքը վրա յե հասնում:

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Թորչիկ, Լիշչիչի, Կուստիչի-Բյանովո գյուղերում գտնվող գերմանական կայազորների զինվորները Գերմանիայում տեղի ունեցած հեղափոխության մասին իմացան Շչորսից: Այդ որերին Շչորսը դիրեկտիվներ եր ստանում էնինից: Վլադիմիր Իլյիչը հեռագործ նրան լիազորեց հեղափոխական գերմանացի զինվորների հետ բանակցություններ վարել հայրամակների և գերմանական իշխանության դեմ միատեղ գործելու առթիվ: Շչորսն այդ գործին ձեռնարկեց անսովոր վուգեորությամբ ու յեռանդով: Նրան անհանդատացնում եր այն, վոր գերմաներեն չդիմե: Զգիտես վորտեղից մի դասագիրք ճարելով, նա խկույն սկսեց ֆըրազներ կազմել, վորոնցով նա կամենում եր դիմել գերմանական զինվորներին: Բոլոր հարևան ոկուլացիոն կայազորները պատգամավորություններ մեկնեցին: Ինքը Շչորսը մի պատգամավորության զլուխ անցած՝ մեկնեց Ռուբչիկ գյուղը, վորը գանվում եր Ռւնեչի և կինցիի միջև: Պատզամավորությունը մեկնեց կարմիր դրոշակներով զարդարված աղիտ-դնացքով, վերցնելով բողունցիների մի ջոկատ, նվազախոսմբ և նորոգող բանվորների մի խումբ:

Սահմանագծի մոտ ճանապարհը քանդված եր: Շչորսը հեռախոսով կազմեց Ռուբչիկի գերմանական պարետի հետ և առջարկեց ճանապարհն իր ուժերով վերականգնել:

Պարետն առաջարկությունը մերժեց և կատեղորիկ կերպով հրաժարվեց բաց թողնել բողունցիների դնացքը: Նա համաձայնեց հանդիպել միայն պատվամավորության հետ:

Պատվամավորությունն ուղղեց Ռուբչիկ շարունակեց վոտքով: Նա դնում եր հանդիպավոր լուսթյամբ, ժամանակ առ ժա-

մանակ այդ լուռվաթյունը խախտելով ճանապարհին պատահած գերմանական պոստերի հասցեյին արտասանած վողջույնի խոսքերով։ Ծորչիկում պատգամավորությանը դիմավորեց պարետը։ Պաշտոնապես բարեելով՝ նա թարգմանչի միջոցով հարցրեց։

— Բանն ինչո՞ւմն է։

Ծորսը գերմաներեն ասաց.

— Մենք յեկել ենք գերմանական զինվորներին չնորհավորելու՝ իրանց հայրենիքում տեղի ունեցած հեղափոխության առթիվ։

Պարետը կարմրատակելով պատասխանեց, թե Գերմանիայում տեղի ունեցած հեղափոխության մասին վոչինչ չդիմե և վորագասարակ նա այդ իրեն չի պատկերացնում։

Ծորսը նրան հանձնեց ուղիղորամների մի փաթեթ։

Այդ ուղղորդամները կարդալով, պարետը մի քանի անգամ գլուխը կորցրած կրկնում եր։

— Այդ առթիվ մենք հրամանատարությունից վոչ մի հրաժան չենք ստացել։

Ծորսը պահանջեց, վոր պատգամավորությանը հնարավորություն տրվի վողջույն հաղորդելու Խորհրդային Ռուսաստանի բանվորներից ու գյուղացիներից անմիջականորեն գերմանական զինվորներին։ Նա վճռական մերժում ստացավ։

Գնացք վերադառնալու պատգամավորությանը ընկերակցում ելին մի քանի սպաներ։

Իր ճանապարհին Ծորսն այլևս գերմանական պոստերի չհանդիպեց։ Այդ պոստերը կանխատեսորեն հանդիլ ելին։ Գնացքի մոտ շարլած կանդինել եր բողունյիների ջոկատը։ Նվազախումբը նվազում եր «ինտերնացիոնալ»։ Ծորսը մի անդամ ևս փորձեց գերմանական զինվորների հետ հանդիպում ձեռք բերել, բայց սպաները լուր ելին։ Ինչ-վոր մեկն առաջարկեց սպաներին հայտարարել բանտարկված։ Ծորսը չհամաձայնեց։

Նոյեմբերի 12-ին գերմանական զինվորների հետ հանդիպում տեղի ունեցալ Ունեչայում։ Բողունյիների մոտ յեկան կարմիր դրոշակը ձեռքներին լիչիչի ու կուստիչի-բրյունովով գյուղերում տեղավորված 106-րդ և 19-րդ գերմանական գնդերից ինն

մարդուց բաղկացած մի պատգամավորություն։ Ծորսը պատգամավորությանը հանդիսավոր դիմավորում ցույց տվեց։ Կայարանում էր միտինգ յեղավ և միասնաբար կազմվեց հետեւալ հեռագիրը։

«Մոսկվա, կրեմլ, ընկեր Լենինին։

Գերմանիայի հեղափոխական զինվորների ներկայացուցիչները, լիչիչի պատգամավորական խորհրդի պատգամավորները ՈՒԿ(Բ)Կ Ունեչայի կազմակերպության հետ միասին ի դեմս ձեր վողջունում են համաշխարհային հեղափոխությունը։

Միտինգից հետո պատգամավորներին հրավիրեցին ընկերական ընթրիքի՝ գնդի ակումբում։ Բողունյիներն ու գերմանական զինվորները մի ընդհանուր սեղանի շուրջը նստած՝ անվերջ չնորհավորում ելին միմյանց հեղափոխության առթիվ։

Գերմանացիները մնացին գիշերելու Ունեչայում։ Մյուս որն առավոտյան ժամը 9-ին Բողունյի գունդը նվազախմբով և գըրուները պարզած՝ գերմանական պատգամավորության գլխավորությամբ մեկնեց վոխաղարձ այցելության համար։ Սահմանում գունդը հանդիպեց իրեն դիմավորող գերմանական զինվորներին բացականչություններին։

— Կեցցե՛ Լենինը։

— Կեցցե՛ հեղափոխությունը։

— Կեցցե՛ն խորհուրդները։

Լիչիչի գյուղում բողունյիները Ծորսի գլխավորությամբ գերմանացիների առաջից անցան հանդիսավոր յերթով։ Գերմանացիները հուղված բացականչում ելին «Հո՛՛ս»։ Ապա նրանք անցան բողունյիների առաջից և բողունյիները, առանց կոկորդը խնայելու, գոռում ելին «Հո՛՛ւառ»։

Ինչ-վոր մեկն արկղներից ամբիոն սարքեց և Ծորսը միտինգ բաց արեց։ Նրա ճառը, ինչպես միշտ, կարճ եր, ընդմիջվող, կարծես հեռագրով հաղորդած լիներ։ Ծորսն արագորեն՝ կրքով շիկացած բառեր եր նետում։ Ավարտելով նա առաջարկեց վողջույն ուղարկել Լենինին միտինգում հավաքված բոլոր մարդկանց կողմից։ Առաջարկությունն ընդունվեց ցնծագին աղաղակներով՝ ոռուերեն, ուկրաիներեն և գերմաներեն լեզուներով։ Հեռագրով հաղորդելով վողջույնը Ծորսը Լենինին գեկուցում եր։

«Գերմանացիները Խորհուրդ են կազմել, կապը կարգավորված է: Տեղի ունեցավ զորաց: Գերմանական զինվորները հանդիսավոր յերթով անցան մեր մարտիկների առաջից: Գերմանական զորանոցի վրա ծածանվում է կարմիր դրոշ: Գերմանացիներից վամանք մնում էն մեր գնդում: Բողունի անվան գունդը սահմանագիծն անցել է»:

Ամբիոն եյխն բարձրանում հերթով բողունցիներն ու գերմանացիները: Ամեն մի յելույթ ունեցողի, յերբ նա ամբոխնից իջնում էր, հանդիպում եյխն զրկաբաց: Բողունցիների բոլոր հոետորներին գերմանացիք սիդարներ եյխն բաշխում: Բողունցիներն այնքան եյխն հավեսի ընկել յելույթներ ունենալու, վոր միտինդը շարունակվեց ամբողջ որը: Յելույթները վոչ-վոք չեր թարգմանում, բայց ողջ գողում եր «Հո՛մ բոլքնիկ» աղաղակներից:

Այդ որերին պատղամավորություններ ընդունելով, միտինդներում հանդես գալով, բանաձևեր ու վողջույններ կազմելով՝ Եչորսը կարծես ելիկարականացած էր: Զգացվում էր, վոր նա շարունակ զսպում է իր մեջ յեփ յեկող պատանեկական, ուրախ հուզմունքը: Նա շարժ ու ձեմ և խոսքերի տեսակետից ալելի ևս ժաման էր գարձել: Նրա բոլոր ուժերը լարված եյխն լարի պես: Նա հեռագրով անմիջականորեն բանակցում էր Լենինի հետ: Լենինը նոյեմբերի 13-ին վողջույն ստանալով՝ Ռւնեչայից՝ նույն որը հեռագրով պատասխանեց:

«Ծնորհակալություն վողջույնի համար: Առանձնապես զգացված եմ Գերմանիայի հեղափոխական զինվորների վողջույնով: Այժմ չափազանց կարեոր է, վոր Գերմանիայի հեղափոխական զինվորներն անմիջական գործոն մասնակցություն ցույց տան Ուկրաինայի աղատագրմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է, նախ, ճերմակալել սպիտակ-դվարդիականներին և ուկրաինական իշխանություններին, յերկրորդ, Գերմանիայի հեղափոխական դորքերի կողմից պատղամավորներ ուղարկել Ուկրաինայում յեղած գերմանական բոլոր զորամասերին՝ նրանց կողմից արագ և ընդհանուր գործողություններ սկսելու համար հանուն Ուկրաինայի աղատագրման: Փամանակը չի սպասում: Վոչ մի ժամ կորցնել չի կարելի: Խոկույն հեռագրեցե՞ք ընդունում են ար-

դյոք այս առաջարկությունը Գերմանիայի հեղափոխական զինվորները: Ժողկոմիորհի նախագահ Լենին»:

Եչորսը պատասխանեց.

«...Հեռագրում մատնանշած միջոցները ձեռք են առնված: Սուալյումանից ուղարկված են ներկայացուցիչ-ադիսատորներ: Գերմանական զինվորները համաձայնում են ձերբակալել իրենց սպաներին: Հետագա գեղքերի մասին հշայտնենք: Բողունի անվան գնդի համամատաբ Եչորս»:

Նոյեմբերի 14-ին, ուղիղ հեռագրաթելի միջոցով կապվելով ուկրաինական բանակի շտաբի հետ, Եչորսը հայտնում էր.

— Նոյեմբերի 13-ին, յերեկոյան ժամը 10-ին, գերմանական զորանոցում նիստ էր մեր ներկայացուցիչների հետ միասին... Ընդունված են ընդհանուր պլատֆորմներ: Արձանագրության պատճենները և իսկականը ինձ մոտ են... ընդունվել են հետագա հանդիպումներ: Մերոնցից յերեքը մնացել են գերմանացիների մոտ, գերմանացիներից յերեքը՝ մեղ մոտ: Հեռախոսային կապը վերականգնված է: Տեղի ունեցած գեղքերի մասին ամեն կողմ լայնորեն հայտնված է: Գերմանացիները 106-րդ գնդի բոլոր ուժերը հավաքում են Կիլինցիում, վորտեղ ընտրվելու յե գնդի խորհուրդ... Պատղամավորությունները ժամանում են ամեն ժամ: Գերմանական զինվորներից վոմանք մնում են մեր գնդում: Գունդը գտնվում է Ուկրաինական տերրիտորիայում... Վաղը կերեա, թե ինչ պետք է անել, իսկ առաջմ Լիշչիչիում և Կուստիչիում ընտրվել են չքավորության կոմիտեներ: Լիազորություններ մենք ստացել ենք ուղիղ հեռագրաթելով՝ ընկեր Լենինից:

Նոյեմբերի 16-ին, պատասխանելով Լենինի հարցումին, Եչորսը հեռագրում էր.

«Բանակցություններ վարվել են Բողունի անվան գնդի շտաբի միջոցով հինգ կայազորի հետ: Գերմանական զինվորների գերակշռող արամագրությունը կոմունիզմի վոգով է: Շեյլեմանականները կազմում են մի տասերորդ մասը»:

Այդ որերը գեղքերն Ուկրաինայում ծավալվում եյխն կայծակի արագությամբ: Կարմիր բանակային զորամատների հետ չփոխող գերմանական զինվորների հեղափոխական տրամադրու-

թյուններն արագ աճում ելին: Դրանից վախեցած՝ դերմանական հրամանատարությունը շտապում եր Ռւկրախնայից դուրս բերել ոկուպացիոն կորպուսները: «Բայց պայքարը դեռ չի վերջացած, Հաղթանակը դեռ չի ապահովված: Իսկական պայքարը Ռւկրախնայում դեռ նոր ե սկսվել», — գրում եր այդ որերը ընկեր Ստալինը «Ռւկրախնան ազատագրվում ե» հոդվածում<sup>1</sup>: Մատնանշելով Ռւկրախնայի աշխատավորներին, վոր ջախջախված գերմանական խմբերի լիվմին փոխարինելու յեն գալիս Անդիայի ու Ֆրանսիայի խմբերի համար կուտները, ընկեր Ստալինը կոչ եր անում «Խորհրդային Ռւկրախնայի բոլոր հավատարիմ զավակներին՝ ոգնության գալու Ռւկրախնայի յերիտասարդ խորհրդային կառավարությանը<sup>2</sup>): Անդլո-Փրանսիական գորքերը պատրաստվում եյին դեսանաի Ռենեայում: Նախապատրաստվում եր Ռւկրախնայի նոր ոկուպացիա: Նորից յերեան յեկալ հակահեղափոխական հին ուսդան «դիրեկտորիայի» նոր անունով: Այդ դիրեկտորիայի գլխավոր ատաման Պետլյուրան, վորը խաբեյությամբ եր գրավել իշխանությունը Ռւկրախնայի մի շարք ուսյոններում, արդեն պայմանավորվում եր անդլո-Փրանսիական հրամանատարության հետ՝ սրանից ոգնություն ստանալու մասին: Հեղափոխական լոգունգներով դիմակավորվելով, նա փորձում եր զավթել Ռւկրախնական գյուղացիների՝ դերմանական գործակալ գետման Սկորոպաղսկու դեմ ուղղված ապստամբական շարժման ղեկավարությունը: Այս Սկորոպաղսկին տենդագին կերպով ժորիլիղացիայի յեր յենթարկում բոլցեկիների դեմ պայքարելու համար հայրամակների կորպուսները, բանակցություններ եր վարում Դիենիկինի հետ, վորը Ռւկրախնայում ապայական գորամասեր եր կաղմակերպում: Շչորսը հասկանում եր, վոր այսպիսի պայմաններում դանդաղման ամեն մի ժամ որհասական հետեանքներ ե սպառնում, վոր միայն խորհրդային գորքերի սրբնթաց հարձակումը՝ զետմանի դեմ ապստամբած բանվորա-դյուղացիական

<sup>1</sup> ի. Ստալին, Հոդվածներ ու ճառեր Ռւկրախնայի մասին, Համ կ(բ)կ կկ-ի կուսհրատ, 1936 թ., եջ 68:

<sup>2</sup> ի. Ստալին, Հոդվածներ ու ճառեր Ռւկրախնայի մասին, Համ կ(բ)կ կկ-ի կուսհրատ, 1936 թ., եջ 69:

մասսաներին ոգնելու նպատակով, կարող ե Ռւկրախնան փրկել նոր ոկուպացիայից: Բոգունցիներն առաջ եյին նետվում: Սրանց հայրենիքում, Զերնիգովչչինայում, ապստամբած գյուղերը պատվիրակներ եյին ուղարկում գունդը՝ շտապ ոգնություն խնդրելու: Սակայն Շչորսը ստիպված եր յետ պահել բողունցիներին: Թեև դեռ նոյեմբերի 11-ին ժողովոմխորհը լենինի նախագահությամբ հանրապետության չեղափ. Ռազմական Խորհրդին հրահանգ եր տվել Ռւկրախնայի ապստամբած բանվորներին ու գյուղացիներին ոգնելու համար հարձակում սկսել, գլխավոր հրամանատարությունը դանդաղում եր: Հեղ. Ռազմ. Խորհրդը գլխավորող Տրոցիկն և նրա գործակալները հանցագործ կերպով սարոտածի եյին յենթարկում լենինի դիրեկտիվը: Այդ դեռ քիչ ե. նրանք փորձում եյին չեղոք գոտում կազմավորված ուկրախնական խորհրդային գորքերը նետել արեւէք: Այդ նպատակով Ռւենեչյայում արդեն յերկաթուղային գնացքներ եյին պատրաստել: Շչորսը սաստիկ հուզվել եր: «Այս բոլորը գավաճանության նման ե», ասում եր նա դնդի կոմունիստների ժողովում:

Ասենք Տրոցիկու սարոտածը շատ չուտով ջախջախվեց: Ռւկրախնական բանակի՝ Ստալինի ստեղծած Հեղ. Ռազմ. Խորհրդը, չնայած Տրոցիկու թագուն դիմագրությանը, անցավ լենինի դիրեկտիվի կատարմանը: Նոյեմբերի 19-ին ուկրախնական Հեղ. Խորհրդը Ստալինի գլխավորությամբ ժամանեց Որյոլ հարձակումը ղեկավարելու համար: Յերբ չուտով ստիպված յեղավ Մոսկվա մեկնելու, ընկեր Ստալինը ուկրախնական բանակի հրամանատարական կազրերն ուժեղացնելու համար գործուղեց 20 կոմունիստներ, վորոնք մասնակցել եյին Յարիցինի հերոսական պաշտպանությանը: Ընկեր Վորոշիլովը դիմեց Յարիցինը պաշտպանող 10-րդ բանակի գորքերին մի կոչով, վորն այսպես եր սկսվում: «Տառապած Ռւկրախնայի բերկրայի որը մոտենում ե...»: Նոյեմբերի 22-ին, հենց նոր Մոսկվա ժամանելով, ընկեր Ստալինը հեռագրեց Որյոլ, վոր գլխավոր հրամանատարությանն առաջարկված ե շտապ կարգադրություններ անել ուկրախնական բանակին աջակցություն ցույց տալու վերաբերյալ ե այդ կարգադրությունների պատճեններն ուղարկել


Ժողկոմիսորհ: «Պատճենները մեզ հարկավոր են ստուգման համար, և յեթե վորեւ կեղծություն նկատենք, վոչ վոքի չենք խնայի», հաղորդում եր ընկեր Ստալինը:

Ընկեր Ստալինի միջամտությունն անվնաս դարձրեց Տրոցիկու սարստաժն ու դավաճանությունը: Ուկրաինական խորհրդային բանակը հարձակման անցավ:

Դեպի Կիեվ դիմող առաջին գիլիդիայի գլուխն անցած, հարձակվում եր Շչորսի Բողունի անվան գունդը, վորն այդ ժամանակ ուներ 1100 սվին, 100 թուր, 15 գնդացիր, 3 հրանոթ: Այս գնդից ձախ գեպի Ստարոդուր եր գնում Բոժենկոյի Տարաշյան գունդը, վորը բաղկացած եր 400 սվինից, 150 թրից, 20 գնդացրից, 2 հրանոթից, և Նեժինի գումարտակը՝ 300 սվինից, 80 թրից, 6 գնդացրից, 2 հրանոթից: Դիլիդիայի ծայրակեղ ձախ թեռմ հարձակվում եր Զերնյակի Նովդոբոդ-Սևերսկի գունդը, վորը բաղկացած եր 600 սվինից, 80 թրից, 35 գնդացրից, 4 հրանոթից:

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՓՇՏԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Մինչև Կիենցիի արվարձանը հանդիսացող Արդուն քաղաքացերձ ավանը, վորտեղ կենտրոնացել եյին յերկրից մեկնելու համար գերմանական ոկուպացիոն բանակի 106-րդ հետևակ գնդի բոլոր ուժերը, բողունցիներն առանց էովի անցան, գյուղերում վերականգնելով խորհրդային իշխանությունը: Շչորսը մշտական կապ եր պահպանում 106-րդ գնդի գինալորական պատրամավորների Խորհրդի հետ: Կատարելով լենինի հրահանգները՝ Շչորսը Համառորեն աշխատում եր շիման մեջ լինել Գերմանիայի հեղափոխական զինվորների հետ հայրամակների գեմ միատեղ գրոհելու համար: 106-րդ գնդում ստեղծված «Սպարտակ» բժիջը Շչորսի մոտ կամավորներ եր ուղարկում: Սրանց թիվը շաբունակ աճում եր: Զուրովի հրամանատարության տակ գտնվող գումարտակում դասակներից մեկը բաղկացած եր բացառապես գերմանական վախճանակներից: Բայց գերմանական զինվորների մի զգալի մաս, վոր հոգնել եր պատերազմից և ձգտում եր վորքան կարելի յե չուտ հայրենիք վերադառնալու, դեռ չեյդեմանականների աղջեցության տակ եր, վորոնք հակահեղափոխական սպանների հետ դաշնակցած ոգտագործելով զինվորների ձգտումը զետի տուն, ուժդին կերպով աշխատում եյին նրանց պատրատել Ուկրաինայում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմին «միջամտելու» լողունդը: Շչորսը խորհուրդ եր տալիս զինվորներին ձերբակալել սպաններին, զինվորները խոստանում եյին այդանել, բայց չուտով սկսեցին տատանվելու վորովհետեւ չեյդեմանականները նրանց վախճանում եյին, թե առանց հրամանատարության նրանք չեն կարողանա հայրենիք վերադառնալ և այլն, և այլն: Խոկ գերմանական հրամանատարությունը խոսքով հայտ



Սխեմա 1. Շչորսի բրիգադի հարձակումը՝  
1918 թ. դեկտեմբեր:

նելով իր «Հեղոքության» մասին, գործով ոզնում եր ուկրաինական հակահեղափոխականներին։ Այդ ժամանակ Բոգունի անվան գունդը մոտենում եր Կլինցիին՝ հույս ունենալով, զոր գերմանացիք չեղոքություն կպահպանեն, կայազորի հրամանատարությունը շտամ սպառագինում եր հայդամակներին, պրավոկացիա յեր պատրաստում։

Շչորսը գունդը շարժեց քաղաքի վրա՝ հրամայելով «զերմանացիների հետ յեղայրանալ, հայդամակներին խփել»։ Յերբ բողունցիների 1-ին և 3-րդ գումարտակները մտան Կլինցի, գերմանացիները, վորոնք հանդիսատ կերպով նրանց րաց ելին թողել, հանկարծ խփեցին թիկունքից։ Սպաները զինվորներին խարել ելին, համոզելով, թե կարմիրները կամենում են նրանց զինաթափ անել և թողնել Ուկրաինայում վորպես զերիներ։ Յերկրորդ գումարտակը քաղաքից հեռացավ, մնացածները թափարդի մեջ ընկան։ Ճակատից նրանց վրա տվին հայդամակները, իսկ թիկունքից խփում ելին գերմանացիները։ Շչորսն իսկույն շուռ տվեց գումարտակները և մի չեշտակի հարվածով ճանապարհը մաքրեց։

Բոգունի անվան ջոկատը նորից յետ քաշվեց իր յերման կետը։ Գերմանական հրամանատարության ստոր պրովոկացիան ստիպեց Շչորսին տակտիկան փոխնել։ Դեկտեմբերի 5-ին նա Կլինցիի հայագորին ուղարկեց՝ պահանջնով անմիջապես մաքրել քաղաքը։ Պատասխան չստանալով՝ Շչորսը հրամայեց ճարաշայի դնդին, վորը զեռ նոյնմերի 25-ին դրավել եր Ստարոգուրք քաղաքը, շուռ գալ գեղի հյուսիս արեմուտք և գուրագալով գերմանացիների թիկունքը՝ կտրեց Կլինցի-Նովոգիրեցի յերկաթուղին։ Դեկտեմբերի 9-ի յերեկոյան Տարաշայի դնդի առաջին գումարտակը և Տարաշայի դնդի մի եսկադրոնը այդ հրամանը կտարեցին՝ գրավելով Սվյատեց կիսակայարանը։

Կլինցիի գերմանական կայազորը շրջապատման սպառնալիքի տակ ընկավ։ Կլինցիից անմիջապես Սվյատեց կիսակայարանն ուղարկվեց մի ջոկատ՝ հրետանու և գնդացիների հետ միասին։ Գերմանական հրամանատարությունը հրամայել եր զինաթափ անել տարաշանցիներին, բայց զինվորները գերադասեցին զինաթափի անել հայդամակներին, վորոնք գրավում ելին հարևան


Տուրածնա գյուղը: Հայդամակներին զինաթափ անելով՝ գերմանական զինվորները նրանց հայտարարեցին.

— Իսպական և մեր հետեւ քողարկվեք, փախե՛ք՝ քանի շուտ եւ, մենք այլևս ձեզ չենք պաշտպանում:

Այս մասին հեռագրով գեկուցելով դիմիդիայի շտարին (Ստարութ քաղաքում), Շչորսը հայտնում եր. «Տուրոսնայում մեր ապահովմբները միացել են գերմանական զինվորների հետ և կերպավում են մի խոհանոցից, յերգում են ինտերնացիոնալ շիմնը»:

Հենց վոր գունդը սահմանագիծն անցավ, խոկույն սկսվեց կամագորների հոսանք գեպի Շչորսը շրջակա գյուղերից: Շչորսը դեկուցագրով հայտնում է. «Բնակչությունն ամենուրեք ուրախ կերպավ և դիմավորում: Նկատվում ե կամավորների մեծ հոսանք, կամավորներ, վորոնց համար յերաշխավորում են խորհուրդներն ու շքավորության կոմիտեները»: Ամեն մի գյուղում և խուստորում Շչորմը տասնյակ հուսալի հետախույզ դյուզացիներ ուներ: Նրանք ամենաճշգրիտ տեղեկություններն եյին հասցնում շտարը գերմանացիների ու հայդամակների դասավորման մասին Կլինցիի ռայոնում: Դեկտեմբերի 8-ին Կլինցի յեկավ յունկերների ու սպաների 400 մարդուց բաղկացած մի ջոկատ: Գյուղացիներն այդ մասին խոկույն հայտնեցին Շչորսին: Յերբ Բոժենեկոն առաջին գումարտակը շարժեց գեպի Սվյատեց կիսկայաքանը, Շչորսը գյուղացիական հետախուզության տվյալների համաձայն նրան հայտնեց իրերի գրության հետեւյալ մանրամասնությունները. «Զայմեշչեյից յեկող ճանապարհին առանձին տնակում կանգնած ե հայդամակների մի պոստ չորս գնդացիրով: Կայսրանք հետեւ ձախ կողմը, կեչուտում կա փշալարով պատած յերկու գայլագուր: Սկաչով խուտորից վերև կա մի դիտող ծառի մը: Անտառում Սկաչով խուտորի հետեւ կանգնած ե մի ուղեկալ առանց գնդացրի: Տուրոսինի կամուրջի վրա մի հրանոթ և 6 մարդ կած:»

Դեկտեմբերի 10-ին վերջացան Շչորսի բանակցությունները 106-րդ գնդի և 107-րդի ներկայացուցիչների հետ: Համաձայնության արձանագրություն ստորագրվեց: Ֆերմանական կայազորը դարձագորվեց գեկտեմբերի 11-ին մաքրել Կլինցին և իր նահան-



#### Ն. Ա. Շչորսի ստորագրած մի փաստաթուղթ:

Ջի ճանապարհին միանդամայն անվնաս թողնել բոլոր կամուրջները, հեռախոսը և հեռագիրը: Բողունցիներն իրենց հերթին պարտավորվեցին գերմանացիներին ապահովել ազատ եվակուացիա և յերաշխավորեցին, վոր իրենց զորամասերից յետ մնացող վինդորները չեն կասեցվի և չեն զինաթափվի:

Կլինցիում սկսվեց շտապ եվակուացիան: Շչորսը գերմանացիներին շտապեցնում եր, սպառնալով, վոր համաձայնությունը խախտելու գեպքում կկարի գեպի նովոզիրկով տանող ճանապարհը: Տարաշչանցիներն ամբողջ ժամանակ կանգնած եյին յերկաթուղու գծի վրա: Հայդամակները զրկվելով գերմանական կայազորի պաշտպանությունից՝ քաղաքից փախան: Դեկտեմբերի 13-ին Շչորսը հեռագրեց գիվիգիայի շտարին. «Կլինցին գրավված ե հեղափոխական զորքերի կողմից առավոտյան ժամը 10-ին: Զորքերին գիմավորեցին բանվորները դրոշակներով, աղ ու հա-



բական դորքերի ընդհանուր թիվը բազմապատիկ անդամ գերազանցում եր առաջին ուկրաինական դիմիլիայի ուժերին։ Նույն եր նաև Խարկովի ուղղությամբ։ Այս կապակցությամբ դավաճան Տրոցկին փորձում եր յետ պահել Ուկրաինայի խորհրդային դորքերն ակտիվ գործողություններից, պնդելով, թե նրանք իր թե դրա համար թույլ են։ Նույն տեսակետին եյին նաև Տրոցկու գործակալ մի քանի ռազմական մասնագետներ, վորոնք չեյին հասկանում քաղաքական իրադրությունը, վորոնք հաշվի չեյին առնում խորհրդային դորքերի թշնամու թիկունքում յեղած ապստամբ ռեզերվների հսկայական ուժերը։ Շչորսը, վորը լավ գիտեր Ուկրաինայի դրությունը, համարձակ, անվախ կերպով դարձացնում եր իր շեշտակի հարձակումը Կիեվի վրա։


## ՀԱՐՁԱԿՈՒՄ ԿԻԵՎԻ ՎՐԱ

Զմեռն արգեն իրեն ցույց եր տալիս։ Այդ ձմեռը գաժան եր չյունաշատ, սաւնաշունչ քամիներով։ Կամավորների հոսանքը քանի գնում ավելանում եր, իսկ զգեստավորման գործը շատ վատ եր։ Շչորսը զեկուցում եր։ «Բոգունի անվան գունդը մերկ ե, բորիկ։ Դրությունը միանդամայն կրիտիկական ե... Նույն ե նաև Տարաշչայի գնդում»։ Բայց զգեստավորում ստանալու հույսը շատ թույլ եր։ Թիկունքային մատակարարող բազաները շատ հեռու եյին մնացել բողունցիներից և տարաշչացիներից։ Սկզբեցին պոստում սառչելու դեպքեր։

— Կիեվում կզգեստավորվենք, — հանդստացնում եր մարտիկներին Շչորսը և որսատորե արագացնում եր հարձակումը։

Անտառային ճանապարհներով սլանում եյին սահնակների վրա նստեցրած գումարտակները։ Յերբ բուք ու բորանը սկսվում եր, նրանք չեյին յերեսում, ալինները գուրս ցցած գումակը ծածկվում եր ճյունի տակ։ Լավում եր միայն, թե ինչպես են մի ինչ վոր տեղ հոգնածությունից խոխառում ձիերը, իրար դիպչելով շիշկում, ճոճում սահնակները։ Ալջեկց սլանում եյին դընդացրոբները՝ գործարանից հենց նոր բաց թողած իրենց սահնակներով։

Դեռ այն ժամանակ, յերբ Շչորսն Ունեչայում կազմակերպում եր Բոգունի անվան գունդը, նրա մոտ յեկան սահմանն անցած մի խումբ յերիտասարդներ՝ Արգոն քաղաքամերձ ավանի ռազմական գումարտակների գործարանի բանվորներ։ Շչորսը, իմանալով, թե նրանք ովքեր են, իսկույն հրամայեց նրանց յետ դառնալ։ Նու խոտիվ պատիրեց նրանց վոչ մի տեղ չգնալ իրենց գործարանից, աչքի լույսի նման պահպանել այդ գործարանը։



Սխեմա 2. Շչորսի բրիգադի հարձակումը:  
1919 թ. հունվար:

յերբեք թույլ չտալ, վոր գերմանացիները սարքավորումը գուրուտանեն:

Յերբ Բոգունի անվան գունդը մտավ Կլինցի, Արդոնի գուրմակի գործարանը Շչորսից շտագ պատվեր ստացավ գնդացրային սահնակներ պատրաստելու: Յերկար ժամանակ անզործության մատնված ցեխերում աշխատանքը յեռաց: Սահնակները պատրաստվում եին համաձայն Շչորսի գծագրերի:

Այժմ այդ սահնակների վրա նստած, բուք ու բորանի միջով՝ ձյունակույտերի մեջ սուզվելով, ուղանում եին բոգունցիները: Բոգունցիները գեռ նոր գյուղ մտած՝ մեկ ել տեսար հրապարակում արդեն շարպել են ապստամբների մի դասակ կամ վաշտ, վորոնք սպասում են Շչորսի հրամանին՝ նրանց գունդ ընդունելու վերաբերյալ: Առանց կանգ աւնելու դասակներ ու վաշտեր ընդունելով՝ Շչորսը հարցնում եր.

— Գի՞տեք, թե ինչի համար եք դալիս պայքարելու:

— Գիտենք, ընկե՛ր Շչորս, — խմբովին պատասխանում եյին ապստամբները:

— Դե, ուրեմն, ձեզնից ով վախկոտ ե, թող իսկույն պոկտա, վորովհետեւ բոգունցիները հարձակման են գնում:

Յեվ գունդը սլանում եր առաջ, վորպես մրրիկ, իր առջևից քշելով հայդամակների ջոկատները, վորոնք անհայտանում եյին բուք ու բորանի մեջ: Սակայն Շչորսը դրանով բոլորովին գոհ ըուրանի լուրջ կուիլ չի ընդունում: Նա հաճախ կրկնում եր. «Դեպէ կիեվ պետք ե նահանջի թշնամու վորքան կարելի յե քիչ զորք, վորքան կարելի յե քիչ»: Շչորսը լինակատար հաղթանակ համարում եր միայն թշնամու կենացնի ուժերի վոչնչացումը:

Գնդի շտաբում, յերբ այն տեղակլորվում եր գյուղում, գյուղացիներից աղատվելու ճար չեր լինում: Նրանք խմբերով ներս ընկնում, աչքերը սենյակում մանածելով, փորձելով ճանաչել Շչորսին:

— Ի՞նչ ե պատահել, քեռիներ:

— Մենք ընկե՛ր Շչորսի մոտ ենք յեկել, — պատասխանում եյին նրանք:

Յեթե Շչորսը չեր լինում, նրանք նստում եյին հատակին և

համբերությամբ սպասում ելին նրան։ Շտար գալիս ելին նաև կեռավոր գյուղերից սուրհանդակներ։ Նրանք գալիս ելին ձի նըռատած, սառցակալած միրուքներով և նույնակա ասում ելին, թէ «մնաք ընկեր Շչորսի մոտ ենք յեկել»։

Ի՞նչ հարցով ասես, վոր այդ որերը Շչորսը չեր դրազվում։ Դեռ նոր եր կարողացել թելադրել հրամանը, գումարտակի հրամանատարներին մատնանշել հարձակման ուղիները, հեծյալ հետախուզությանն առաջադրանք տալ, նոր դասակը կամ վաշտն ընդունել, վոր նրա շուրջն արդեն դյուլացիների ամբոխ եր համարվում և ամեն մեկը իր կարիքների մասին եր հարցնում, համառորեն ողնություն, խորհուրդ խնդրում։ Գյուղացիների հետ խոսելիս նա մնում եր այնպես, ինչպես մշտապես գնդումն էր— զուսպ, խոսքերով խիստ, ամեն ինչ ուղղակի, բացեիրաց, ասող, առանց զարդարանքների, առանց մտածելու այն մասին, վոր մարդկանց իր ողտին տրամադրի, հարմարվի նրանց հասկացողություններին ու ցանկություններին։ Սակայն, Շչորսի ժեղած գյուղացիներն իրենց համարդուղացիներին հարգանքով ելին պատմում «կարմիրների յերիտասարդ հրամանատարի մասին, վորն արտաքուստ շատ խիստ ե, բայց արդարամիտ, ուղիղ մարդ ե»։

Գյուղերից մեկում շտար եր յեկել գյուղացիների մի խումբ պահտակամորուս պարթեահասակ մի գյուղացու գլխավորությամբ։ Նա Շչորսին մատուցեց խորպոցով լի մի մեծ թուղթ։ Շչորսն այն կարդաց և վոչինչ չկարողացավ հասկանալ։ Ինչ-վոր պղանունների ցուցակ և կողմին կովկերի, ձիերի, խոզերի թվարկում, իրենց անուններով, գույնով, նշաններով հանդերձ։

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց Շչորս։

— Ճիշտաղներն ամբողջ անասունը քշել տարել են, — ասաց մեկը։

— Գերմանացիք ու հայդամակները, — բացատրեց ծերունին։

— Վողորմած յեղի՛ր, ամբողջ հասարակությամբ ենք քեզ խնդրում, մեր հարդելի ընկեր Շչորս։ Անիծյալ ճիշտաղները հեռու գնացած չպիտի վոր լինեն։ Բանի՛ր նրանց և անասունը խլի՛ր։ Անմիտ բան է գյուղացի լինել և անասուն չունենալ։

— Խոնարհաբար խնդրում ենք, կարմիր հերոս։ Խլի՛ր թալան-չիների ձեռքից։

— Իսկ այս նշանակում ե, — բացատրում եր ծերունին, թուղթը ցույց տալով, — վոր մենք ցուցակ ենք կազմել, թե ուժից ի՞նչ անասուն ե տարված, նշաններով հանդերձ, վորպեսզի թյուրլիմացություն չլինի, յերբ այդ անասունը մեզ կվերադարձնեմ։

Շչորսն ուշադրությամբ ունկնդրում եր գանդատակորներին։ Այդ որերը նա վոչ միայն հրամանատար եր, այլև խորհրդային իշխանության կազմակերպիչ Ուկրաինայի՝ իր գնդի կողմից ազատագրված տերիտորիայում։

Գորոդնյայից Շչորսը տարաշչացիներին ուղարկեց Գոմել-Բախմաչ յերկաթզի յերկայնքով՝ Մենա կայարանի վրայով, իսկ ինքը բոդունցիների հետ ուղղություն վերցրեց ուղիղ դեպի Զերնիգով։ Յերբ բոգունի անվան գնդի առաջալոր մասերը 15 կիլոմետր հեռու ելին Սեղնյովից, հետախուզությունը հայտնեց, վոր ավանը հայդամակները զրավել են, բայց վոր նրանց ուժերն այստեղ աննշան են, ինչպես հետո պարզեց՝ 250 ալին։ Շչորսը վորոշեց ավանը զրավել հեծյալ հետախուզության հանկարծակի հարձակումով։ Սահնակներով շարժվող գունդը հետեւում թողնելով, Շչորսը դուրս թուալ զեպի Սեղնյով 38 ձիավորներով, նրանց ձիուց իջեցրեց և ձիերը թողնելով ձիավաններին, սկսեց հարձակումը։ Հետիուն ձիավորները ձյունապատ դաշտով վագելազ հետեւում ելին Շչորսին, վորն իր ձեռքի գնդացրով շարունակ առաջ եր ընկնում։ Հինգ մարտիկներ, վոր Շչորսն առանձնացրել եր վորպես հատուկ խումբ, անընդհատ նոնակներ նետելով ցնցիչ զդրունով միանդամայն բարոյալքեցին հայդամակներին։ Կարելի յեր կարծել, թե հարձակվում են կարմիրների հակայական ուժեր։ Թողնելով մի հրանոթ, 2 գնդացիր և գումարկը՝ հայդամակները խումապի մատնված Սեղնյովից փախան։

Գունդը գրոհի տանելու ժամանակ Շչորսը միշտ առջնից եր գնում։ Նա ուներ մի քանի վոչ մի տեղ չգրանցված, բայց հաստատուն, բոլորի համար պարտապիր կանոններ։ Այդ կանոններից մեկն ասում եր. «Հրամանատարներն ու կոմունիստները միշտ թետք ե առջևում լինեն»։

Այն մարդկանց, վորոնք այդ կանոնից շեղվում ելին, Շջորսն արհամարհում եր, այդպիսիները գնդում յերկար չելին մնում։ Սակայն նա բոլորովին ել այն հրամանատարներից չեր, վորոնք սիրում են իրենց անվեհերությամբ փայլել։ Ճակատ առ ճակատ կատարվող քաջարի գրոհներից նա գերազասում եր մտածվածությունը և հաշվը, գործողությունների շեշտակիությունը և թագունությունը, հարձակման շշմեցուցիչ հանկարծակիությունը։ Զերինդովի համար մղվող մարտում Շջորսի այս տակտիկան, վորը մշակվել եր դեռ գերմանական ոկուպանսների դեմ մղած պարտիզանական կովում, վճռեց հայդամակների կորպուսի, նրա շտաբի և հրամանատարի բախտը։

Հունվարի 11-ին Բողոքունի անվան գունդը, գիշերն անցկացնելով Սեղնյովում, հարձակման անցավ Զերնիդովի վրա։ Տարաշացիներն այդ ժամանակ թիկնանցում ելին իրենց ձախ թերվով։ Մրանց մի գումարտակը գրավում եր Բերեզնա ավանը, իսկ յերկրորդն արդեն կտրել եր Զերնիդով-Նեժին յերկաթուղին Վերեսոչ կայարանի մոտ։ Այսպիսով հայդամակների նահանջի ճանապարհը յերկաթուղով՝ կտրվել եր։ Նրանք կարող ելին նահանջել միայն խճուղով Դեսնայի այն կողմը՝ գեղի կողելեց։ Շջորսը ձգտում եր կտրել հայդամակների այդ ճանապարհն ևս, Յերբ 2-րդ և 3-րդ գումարտակներն անցան ճակատային հարձակման, Շջորսն 1-ին գումարտակն ուղղեց գեղի հայդամակների թիկունքը Դեսնայի գետանցները գրավելու համար։

Բողոքունցիների շեշտակի առաջնաղացումը Սեղնյովի կողմից հայդամակների համար անսպասելի յեր։ Հունվարի 12-ին, լուսարացին կարձատե կովից հետո 2-րդ և 3-րդ գումարտակները, գեն շղրտելով Զերնիդովը պաշտպանող հայդամակյան զորամասերը, քաղաք ներխուժեցին։ Ակսից փողոցային կոփիվ։ Հանկարծակի յեկած հակառակորդը չկարողացալ լուրջ գիմադրություն ցույց տալ, թեև մի քանի զրահապատ ավտոներ ուներ։ Այդ զրահակիրներից յերեքն խկույն և եթ բողունցիները գրավեցին։ Հայդամակների՝ Զերնիդովի կորպուսի հրամանատար գեներալ Տերեկովիչը գերի ընկալ։ Փողոց զուրս գալով՝ այդ գեներալը կարմիրներին ընդունել եր պետլյուրականների տեղ, վորոնց զորամասերը նույնակես Զերնիդովի մոտ ելին, և սկսել եր

նրանց համոզել, վոր ներքին պատերազմին վերջ դնեն։ Փողոցներից մեկում հայդամակների նվազախումբն ընկել եր գնդացրային կրակի տակ և փուլել եր սալահատակին։ Յերաժիշտները գլուխները թաղցրել ելին պղնձե փողերի հետեւ։ Բողունցիները կրակը գաղարեցնելով հրամայեցին յերաժիշտներին վեր կենալ և նվազել «ինտերնացիոնալ»։ Հրամանն իսկույն կատարվեց։ Ուրախացած յերաժիշտները գրավեցին իրենց տեղերը։ «ինտերնացիոնալ» լավ նվազեցին։ Բողունցիները գոհ մնացին նվազախմբից։ Շջորսը նվազախումբը մտցրեց գնդի շտատի մեջ։ Այս նվազախումբը բողունցիների հետ անցավ համարյա նրանց ամբողջ մարտական ուղին։ Այդ նվազախմբի նվազակցությամբ բողունցիները մաքրեցին Զերնիդովը, հայդամակներին շպրտելով գեպի ֆեալի ֆենայի սառուցը, վորտեղ նրանց պիտաք և գիմազորեր Շջորսի կողմից չըջնցելու ուղարկված գումարտակի կրակը։ Բայց գումարտակի հրամանատարը սխալվեց՝ վաշտերը բացաղատեց ավելի վաղ, քան այդ հարկավոր եր, չըջնցային շրթումը գանդաղեց, և հայդամակները կարողացան ծլկվել Դեսնայի այն կողմը։ Աջ ափին նրանք փորձեցին գիմադրություն կազմակերպել։ Շջորսը պառլամենտյոր ուղարկեց առաջարկելով անձնատուր լինել։ Հայդամակները կամուրջի վրա պատգամավորություն ուղարկեցին բանակցություններ վարելու համար։ Շջորսը «Լյուիսն» ուսին դրամ՝ ընդառաջ զուրս յեկալ։ Հանդիպումը տեղի ունեցավ կամուրջի մեջտեղը։ Հայդամակները մտածելու համար խնդրում ելին 15 ժամ։ Շջորսը միայն 15 րոպե ժամանակ տվեց և նախազգուշացրեց, վոր յեթե այդ ժամանակամիջոցում գլխի չընկանանձնատուր լինելու, ապա կլոչնչացվեն։ Պառլամենտյորները գնացին։ Անցավ 15 րոպե։ Շջորսը ձեռքի գնդացիրն ուսից իջեցրեց և հրաման ավելց պատրաստ կանդնած գումարտակին։

— Իմ հետեւից ասա՞՞յ:

Փոթորկալից կրակի տակ բողունցիները Դեսնայի սայթաքուն սառուցի վրայով հակառակորդի վրա նետվեցին։ Գրոհին չդիմանալով հայդամակները փախան կողելեց տանող ճանապարհով։ Նրանց հետապնդումը և վոչնչացումը շարունակվեց մինչև մութին ընկնելը։

Արագորեն նահանջող թշնամուն հետապնդելով, Շջորսը հա-

ձախ սահնակի վրա յեր նստեցնում ամբողջ գումարտակներ : Սա-  
կայն առանց հեծելազորի դժվար եր կառավարվելը : Իրազբու-  
թյունը պահանջում եր հեծելազոր, և Շչորսը շարունակ ուժե-  
ղացնում եր այն : Վոչ մի հետեւակ գնդում այնքան հեծելազոր  
չկար, վլորքան Բողոքնի անվան և Տարաշչայի գնդերում : Մրան-  
ցից յուրաքանչյուրն արդեն ուներ 300 թուր : Բացի հեծյալ հե-  
տախուզության եսկարոնից, գնդում մի քանի հեծյալ միավոր-  
ներ կային՝ շտարի զորախումը, պարետայինը և այլն : Յեր  
պետք եր լինում, Շչորսն այդ միավորներն իրար եր միացնում :

\* \* \*

Հունվարի կեսերին, յերբ բողոքները գրավեցին Զերնի-  
դովը, ուկրաինական հակատում հետեւալ դրությունն եր տի-  
րում : Բողոքնի գունդը հարձակվում եր կողելեցի վրա, Տարաշ-  
չայի գունդը Բերեզնայից՝ դեպի Վերկեյեվկա, Նեժինի գունդը՝  
Առանցից դեպի Բախմաչ, Նովգորոդ-Ռևերսկի գունդը՝  
Կրոլևեցից դեպի Կոնոտոպ : Առանցից գրաված եր Հունվարի  
8-ին, Կրոլևեցը՝ 13-ին, Կոնոտոպը և Բախմաչը՝ 20-ին : Ուկրաի-  
նական ճակատի ճախից գտնվող հարեւան զորամասերն այդ մի-  
ջոցին մարտեր եյին մղում Պոլտավայի ուայնում : Աջ կողմից,  
Դնեպրի այն կողմը, արևմտյան ճակատի զորամասերը, վորոնք  
հարձակվում եյին Կորոստենի ուղղությամբ, հասել եյին Ռիվու-  
չին : Այսպիսով Շչորսի բրիդադի՝ Բողոքնի անվան և Տարաշ-  
չայի գնդերն առաջ եյին շարժվում Կիեվի ուղղությամբ : Պետ-  
րուրայի հրամանատարությունը ճակատում յեղած դրությունը  
գնահատելով՝ Հունվարի 17-ին մատնանշում եր . «Զերնիդով-Կիեվ  
ուղղությամբ դրությունն սպառնալից ե», և միաժամանակ նշում  
եր, վոր «Բնակչությունը բոլեկիներին համակրում ե և պար-  
տիզանական ամբողջ ջոկատներ և Հանում» : Սակայն Պետլյուրան  
Կիեվը հանձնել չեր պատրաստվում : Կիեվի մատուցներում նա  
կենտրոնացնում եր իր ամենալընդունակ զորամասերը և Հույս ու-  
ներ այսուղ գլխավոր ճակատամարտում ջախջախել խիստ առաջ  
ընկած բողոքներին ու տարաշչացներին :

Առաջին ուկրաինական խորհրդային դիվիզիան խնդիր ստա-  
ցավ՝ դրամիւ նեժին քաղաքը, դուրս գալ Բախմաչ-Կիեվ յեր-  
իաթուղին և առաջին բրիդադի զորամասերով յերման դրություն

գրավել Ռստյոր-Կողելեց գծում : Այս խնդիրները կատարելով՝  
Շչորսը հարձակումն այսպիս եր զարգացնում . տարաշչացիների  
առաջին գումարտակը նետվեց Կրուտի կայարանը, վորի ուղղու-  
թյամբ յերկաթուղով շարժվում եր պետլյուրականների մի քանի  
էշելոն : Տարաշչայի գնդի մնացած ուժերը հարձակվում ելին ուղ-  
ղակի Վերկեյեվկայի վրայով գեպի նեժին : Այսուղ կենտրոնա-  
ցած եյին մոտ յերկու հազար պետլյուրականներ : Զապասելով՝  
մինչև Բոժենկոն կղբավի նեժինը, Շչորսը շեշտակի կերպով բո-  
ղուցնցիներին նետեց խնդրում ցույց տված յերման կետը : Հուն-  
վարի 23-ին, յերբ տարաշչացիների հիմնական ուժերը գեռ Վեր-  
կեյեվկայի ուայոնումն եյին, Բողոքնի անվան գունդը կովկավ գրա-  
վեց Կողելեցը : Նահանջող և հրետանու ոմբակոծությամբ պաշտ-  
ուանվող հակառակորդին հետապնդելու համար Շչորսն ուղարկեց  
մի եսկարոն և յերրորդ գումարտակը : Հունվարի 24-ին բողուն-  
ցիները գրավում եյին արդեն Ռստյոր-Կողելեց-Բորբովեցի գիծը :  
Հեծելազորը կտրել եր նեժին-կիեվ յերկաթուղագիծը : Նոսով-  
կա կայարանի մոտ յերկաթուղին քանդված եր : Պետլյուրական-  
ների՝ Կրուտի-նեժին ճակատամասում գտնված եշելոնները կա-  
րող եյին դուրս գալ դեպի Կիեվ միայն կողմնակի ճանապարհով  
Դրեյվոնկա կայարանի վրայով : Հունվարի 25-ին, յերբ տարաշ-  
չացիներն ութժամյա կովկաց հետո նեժինը գրավեցին, խելով  
ահազին քանակությամբ ավար և բաղաթիվ գերիներ, Բողոքնի  
անվան գունդը ջախջախիչ հարված հասցեց պետլյուրականներին  
Սեմիալուկիի մոտ տեղի ունեցած կովում  
Շչորսն ոգտագործեց իր սիրած մանյովը : Առաջին գումարտակը  
սահնակներ նատեցնելով, նա գիշերն ուժեղ բուք ու բորանի պայ-  
մաններում գումարտակի գլուխն անցած՝ ուղացավ հակառակորդի  
դասավորության խոր թիկունքը : Մնացած յերկու գումարտակը  
հարձակվում եյին ճակատից : Զախջախված պետլյուրականները  
փախան դեպի Ռուլնյա, հետապնդելով հեծելազորի կողմից :  
Մի քանի հարյուր մարդ անձնատուր յեղան վորպես գերիներ :  
Շչորսը հրամայեց գերիներին շարել դյուլից գուրս գտնված դա-  
տարկ տեղում և նրանց առաջ հանդիս յեկալ մի ճառով, բա-  
ցալուրելով, թե ինչ է Կարմիր Բանակը և ինչի համար է պայ-  
քարում : Պետլյուրայի հրամանատարությունը, աշխատելով պահ-

պանել իր զորամասերի մարտունակությունը, ամենահրեշտավոր լուրերն եր տարածում խորհրդային զորքերի վերաբերյալ։ Ուստի Շչորսը հսկայական նշանակություն եր տալիս Պետյուրայի կողմից մորիլիպացիայի յենթարկված գյուղացիների միջև տարվող բացատրական աշխատանքին և այդ նախակով հաճախ ողտագործում եր հենց գերիներին իրենց։ Սրանց մի մասին նա ազատ արձակեց և հրամայեց պատմել այն, ինչ նրանք իր մոտ տեսել և լսել եյին։ Հունվարի 25-ին Շչորսը գեկուցում եր գելիդիայի շտարին։ «Մեր 15 հետախույզները Մոստիչչե գյուղում գերի յեն վերցրել 200 պետյուրականներ, վորոնց մի մասն առաջ են ուղարկվել աղիտացիայի հսմար»։

Ազատված գերիներից վոմանք Շչորսից մոտավորապես այսպիսի բովանդակությամբ տեղեկանքներ եյին ստանում։

«Այս ինչ քաղաքացին, վորը խարվել է Պետյուրայի կողմից, գերի յե վերցվել և տուն ե թողնվել ազնվորեն աշխատելու պարտավորությամբ»։ Շչորսի այսպիսի «տեղեկանքները» զգալի գեր եյին խաղում Պետյուրայի զորքերը կազմալուծելու տեսակետից։

Հունվարի 27-ին Բողոքնի անվան դունքը, վորը հարձակվում եր գիվիդիայի ավանդարգում, Շչորսն այսպես եր դասավորել։ Սեմիպոլիկում 3-րդ գումարտակը, Ռուդնյայում՝ առաջին գումարտակը, մի մարտկոց և մի հսկադրոն, Բոբրիկի կայարանում՝ 2-րդ գումարտակը։ Հետախույզություն ուղարկել եր գետի աջ՝ Լյոտի գյուղի կողմը, և գետի առաջ՝ Դիմիրկա գյուղի կողմը։ Հեծյալ հետախույզությունները բռնոտում եյին Պետյուրայի զորամասերի այն մասցը ընեցրները, վորոնք թափառում եյին գնդի թիկունքում Բորբովիցին, Սեմիպոլիկի և Կողելեցի միջև ընկած գյուղերում։ Տարաշչայի գունդն այդ ժամանակ բեռնվում եր հեծյալ վագոնները Նեֆին կայարանում, վորոնք թափառում եյին գնդի թիկունքում Բորբովիցին, Սեմիպոլիկի և Կողելեցի միջև ընկած գյուղերում։

Յերկրորդ բրիդագըլը՝ Նովգորոդ-Սկերսկի և Նեժինի գնդերը՝ Բախմաչը և Կոնոտոպը գրավելուց հետո գուրս եյին գալիս գետի Պրիլուկի, կտրելով պետյուրականների ճանապարհը, վորոնք փորձում եյին ճեղքել և անցնել Կիեվ՝ Գրեբյոնկայի վրայով։

Սեմիպոլիկից մինչև Կիեվ մնում եր 40 կիլոմետր։ Պետյուրայի զորքերը խմբված եյին Բորվարի ուայոնում։ Գերիների ցուցմունքի համաձայն նրանց ուժերը բաղկացած եյին հինգ հետեակ և մեկ հեծյալ գնդից։ Հունվարի 29-ին պետյուրականները փորձեցին հակահարձակման անցնել և մոտ բերին մի զրահագնացք։ Այդ գնացքը գնդակոծեց բողոքների գըրաված մուղնյա գյուղը, բայց ստիպված յեղավ նահանջել, յերբ մարտի բռնվեցին Շչորսի «սևիական արտադրության» յերկու զրահագնացքները, այսինքն յերեք զույցանի հրանոթներով սովորական յերկաթուղային պլատֆորմներ, վորոնք պաշտպանվում եյին կոճերից և ավագով մեջոկներից կազմված ծածկաբանով։ Նույն որը մի գումարտակ հետեակից և մի հսկադրոն հեծելազորից բաղկացած պետյուրականները գրունցին Բողոքանովկան։ Գրոհը յետ մզվեց 2-րդ գումարտակի մի վաշտի և բողունցիների մի հսկադրոնի միջնորդ, վորոնք արդեն զինամթերքի պակասություն ելին զգում։ Շչորսն այդ ժամանակ ուժեղ կերպով զգում եր իր զորամասերի կարգածությունը ճակատի թիկունքային մասերից։ Հունվարի 31-ին, հայտնելով գիվիդիայի շատրին, վոր «փամփուշտական վերջանում են», նա խնդրում եր «շտապ ցույց տալ, թե վորտե՞ղ և ի՞նչ կերպ կարելի յե ստանալ բրիդագին մշտական մարտերի պատճառով անհրաժեշտ փամփուշտական»։ Պետյուրականների աճող գիմադրությունն ստիպում եր Շչորսին համառ պայքարի պատրաստվել Կիեվի համար։ Բրիդագի ճախ թիկին վտանգ եր սպառնում, վորովհետեւ Բարիչովկայի վրայով գեպի Կիեվ եյին շարժվում Պետյուրայի այն զորամասերը, վորոնք հաւանանջում եյին Գրեբյոնկայի կողմից։

Մինչդեռ տարաշչացիներն սկսեցին բեռնաթափել Բորբիկի կայարանի ուայոնում։ Շչորսը սրանց ուղղեց դեպի Բորիսապոլ, վորպեսզի հունվարի 31-ին կարեն Գրեբյոնկա-Կիեվ յերկաթուղին։ Պետյուրականները, ըստ յերեւթին, մանյովը գուշակելով՝ հարձակում սկսեցին Սվյատինովի վրա 4 հազար հետեակով և մեկ հեծյալ գնդով, յերկու ծանր և չորս թեթև հրանոթների կրակի ոժանդակությամբ։ Ավանը գրավել եր Տարաշչայի գնդի մեկ զումարտակը։ Զնայած հակառակորդի թվական գերազանցության, ուժեղ հրետանային և գնդացրային կրակին, տա-

բաշացիներն անցան հակահարձակման։ Պետլյուրականները փախան դեպի Գոգոլե դյուզը։

Փետրվարի 1-ին առաջոտայն Սեմիպուլկիի վրա յերեաց Պետլյուրայի ինքնաթիւներից մեկը, վորից վայր եյին նետում Փանտաստիկ սպառնալիք պարունակող թոռոցիկներ, վոր իր թէ «բաց պիտի թողնեն մանուշակագույն ճառագայթներ, վորոնք մարդկանց կուրացնում են»։ Սպառնալիքն ավելի ևս համոզիչ դարձնելու համար պետլյուրականները խորհուրդ եյին առաջնակչությանը թագնվել նկուզներում։ Այդ նույն որը Շչորսը Բողունի անլան գունդը հարձակման տարավ անտառի միջով, վորը տարածվում է Սեմիպուլկից մինչև Բրովարի։ Առաջին գումարտակը գրավեց Պախովկա, Զաղիմյե, Գոգրերի գյուղերը։ Շչորսն այդ գումարտակը թողեց այստեղ՝ աջ թեր պաշտպանելու համար, իսկ մյուս յերկու գումարտակներով գրոհեց Բրովարին, վորը հետախուզության տեղեկություններով գրավել եյին Պետլյուրայի յերկու հետեւակ և մեկ հեծյալ գնդերը։

Առջեց սահմանների վրա գնում եյին գնդացրողները։ Հենց վոր նրանք սկսեցին անտառից գուրս գալ, պետլյուրականները, վորոնք ամբացել եյին գյուղի ծայրին, նրանց դիմավորեցին փոթորկալից կրակով։ Շչորսը տվից իր սիրած հրամանը՝ «Հրշեջներն առաջ»։

«Հրշեջներն» արագ հանգցրին պետլյուրականների կրակը։ Բողունցիների շղթաները բացաղատվեցին բաց ձյունապատ գաշտում։ Շչորսը ձեռքի գնդացրով գնում եր առաջավոր շղթայի մեջտեղում, կարծես զրոսանքի յերած լիներ, բարձր խոսելով, ծիծաղելով, ցույց տալով հակայական հետքեր, վոր իր հետեւից թողել եր ձյան մեջ թաղիքե բոլորովին պատառուստ կոշիկներ հաղած հրամանատարներից մեկը։ Միայն յերբ բողունցիների շղթաները մոտեցան գյուղի ծայրին, Շչորսը գործի վրեց իր «Լուիսը», գնդակոծելով պետլյուրականների վերջին, Բրովարիից փախչող խմբակները։

Շուտով զրահակնացքի պաշտպանության տակ նրանք մի անգամ ևս փորձեցին հակահարձակման անցնել։ Մարտի ժամանակ մի հետաքրքրի միջաղեալ պատահեց, վորը պատկերում է Շչորսի վարքագիծը մարտական պարագայում։

Լարված մոմենտներից մեկում, ինչպես պատմում է ականատեսը, Շչորսը դիտում եր մարտաղաշաը։ Մոտակայքում նկատելով Պետլյուրայի գնդացիրը՝ նոր մտրակով ցույց տվեց այն երամայեց։

— Այն վերացնե՞լ։

Դեռ այս խոսքը բերնից չթուած՝ մտրակն անհայտացավ։ Զեռքում մնաց միայն մտրակի ջարդված կոթը։ Մտրակը կարեց մոտեքը պայթած յերեք գույշանի արկի կտորը։ Շչորսը զարմացած նայեց ձեռքում սեղմած մտրակի կտորին և ասաց։

— Կարծես թե ականջներումս ինչ-վոր ուժեղ զրնդոց երմում, — և նորից աչքերին մոտեցրեց յերկդիտակը։

Պետլյուրականները յետ չոլրավեցին գեալի ֆնեպը։ Շչորսը գյուղական յեկեղեցու զանդակատնից դիտելով կապույտ մշուշի մէջ յերեացող կիեվը՝ գեռ ևս վճռական կովի յեր սպասում։ Մարտկոցները պատրաստվում եյին պետլյուրականների՝ կիեվի դիրքերը ոմբակոծելու։ Հրետավորները տախտակներ եյին դնում հրանոթների տակ նրանց հասահարությունն ալելացնելու համար։ Բրիւլագի գորսամասերը յերման գիրք եյին բանում Ռեկրախնայի մայլաքաղաքի համար վերջին մարտ մզելու համար։ Առ Յն փետրվարի Բողունի անլան գունդը տեղավորվել եր հետեւալ գյուղերում՝ Պախովկա, Զաղիմյե, Գոգրերին գումարտակը, Բրովարիում՝ 2-րդ և 3-րդ գումարտակները, թեթև մարտկոցը, 2 ծանր հրանոթ և մի զրահազնացք։ Տարաշչայի գունդը յերկաթուղուց հարավ գրավում եր հետեւալ գյուղերը՝ Կնյաժեչի՝ առաջին գումարտակը, Ալեքսանդրովկա՝ 2-րդ գումարտակը, Բորիսպոլ՝ 3-րդ գումարտակը և մի մարտկոց։ Հեծելազորը կենտրոնացած եր Գլադուկում և Բորիսպոլում։

2-րդ բրիւլագի Նովկորոպ-Սևերսկի և Նեժինի գնդերն այդ միջոցին եւելոններով շարժվում եյին գեալի Բրովարի՝ Բախմաչի կողմից։

Փետրվարի 4-ին Բրովարի ժամանեց ուկրախնական բանակի հրամանատարը՝ գիվիղիային այցելության։ Բողունցիների գյուղում տեղավորված գումարտակները Շչորսի գլխավորությամբ խճուղու վրա շարվել եյին։ Թեև բողունցիների գգեստավորումն անհախանձելի յեր, չինելները հին եյին, քրքրված,

վոմանք ել նույնիսկ տրեխներով, բայց իրենց հավաքությամբ, խստ ուղղական կեցվածքով նրանք դիվիզիայում աչքի ելին ընկնում։ Մինչդեռ նրանց մեծամասնությունը գունդ եր մտել ապստամբ ջոկատներից հարձակում գործելու ժամանակամիջոցում։ Բողունցիների հին կաղըերը, վորոնց Շչորսը հավաքել եր Աւնեչայում, այժմ արդեն փոքրամասնություն ելին կաղմում, գնդի կմախքն ելին, մի գունդ, վորը մի ամսվա շեշտակի հարձակման ընթացքում համարյա յերեք անդամ աճել եր։ Նախին ապստամբ պարտիզանները մի քանի շարաթվա ընթացքում Շչորսի մոտ գործել ելին կանոնավոր կարմիր Բանակի կարգապահ զինվորներ։

Զորատեսից հետո առաջին դիվիզիան մի հրաման ստացավ, չոր մեջ ասված եր. «Հակառակորդի ուժերը կիեվում քայքայվում են։ Վորոշ նախապատրաստություն և պաշտպանություն նկատելի յեն Պեչորայի լեռան վրա, վորտեղ տեղավորված են մարտկոցներն ու 6 հրանոթ Դնեպրի վրայով անցնող յերկաթուղային կամուրջի վրա։ Հակառակորդի աննշան ուժեր գրավում են Դարնիցան, ավելի զդալի ուժերի կուտակում նկատվել ե Բարիչովկայի մոտ, ուր, ըստ յերեսութին, նահանջել են Գրեյոնկայից յեկած զորամասերը»։

Այդ հրամանով առաջարկվում եր Բարիչովկայի կողմը մի առաջակալ առանձնացնել 2-րդ բրիդագից։ Այդ բրիդագի եշտոնները մոտենում ելին Բրովարին։ Շչորսի առաջին բրիդագր պետք է փետրվարի 6-ի լուսարացին գրոհեր և գրավեր կիեվը։ Դիվիզիայի բոլոր զորամասերի կենտրոնացումը յելման կետում գրոհի համար՝ առաջարկվում եր կատարել փետրվարի 5-ի լույս 6-ի գեշերը։ Բայց արդեն 5-ի առավոտյան կիեվ ուղարկված հետախուզությունը զեկուցեց, վոր պետյուրականները քաղաքը թողել են և նահանջում են դեպի Վասիլիկով, Թաստով։ Հետախուզության հետ միասին կիեվից Բողունի անվան շտաբը ժամանեց գործկոմի պատգամավորությունը։ Իշխանությունը քաղաքում արդեն նրան եր պատկանում։

Շչորսը Բողունի անվան և Տարաչայի գեղերը տարավ կիեվ։ Առավոտյան ժամը 10-ին Պողոլից յեկող բրիդագի առաջավոր

ժամերը յերեացին կրէչչատիկում։ Բանվորների խմբերը նրանց վողջունեցին «ուռա» աղաղակներով։

Փետրվարի 8-ին դիվիզիայի շտաբը Խարկովից ստացավ ուկրաինական կառավարության հեռադիրը. «Կառավարության փետրվարի 7-ի վորոշումով Բողունի անվան և Տարաչայի գնդերին բանվորների ու գյուղացիների թշնամիների գեմ վարած հերոսական և քաջարի գործողությունների համար հանձնվում են կարմիր զրոշներ։ Այդ գնդերի հրամանատարներին (Շչորսին և Բոժենկոյին)՝ Հեղինակները հմուտ դեպարտամենտներին և իրենց վստահած զորամասերում կարգապահություն պահպանելու համար հանձնվում ե վոսկե պատվավոր զենք։ Բողունի անվան և Տարաչայի գնդերը սրահպանում են իրենց անունները»։

## ՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԼՅՈՒՐԱՅԻՆ

Մոտ յերկու շաբաթ բողոքները և տարաշչացիները կանգնած եյին կիեվում՝ կայազորային ծառայություն կատարելով։ Ծորսը նշանակվել եր քաղաքի պարետ։ Նրա պարետային վարչության դռանը մշտապես խմբված եյին պատրուներ, վորոնք բերում եյին զենքը ձեռքին բռնված պետլյուրականներ։ Կիեվում մնալով դիվերսիոն աշխատանքի համար, նրանք թագնվում եյին բուրժուական վիլլաներում։ Գիշերը քաղաքում մեկ այսեղ հրաձգության ձայն եր լսվում։ Մի քանի տներ պետք եր մնում կովով վերցնել, վորակես ամրոցներ՝ կարգին ճակատամարտներ եյին տեղի ունենում։ Գիշերները բողոքները պաշարում եյին վիլլաները, իսկ յերեկն այդ վիլլաների մեջ տեղափորվում եյին բանվորները։ Կիեվում Ծորսի կողմից արձակված առաջին հրամաններից մեկում ասված եր. «Ռայոնական պարետներին՝ հաշվի առնել բուրժուական տները, վիլլաները, Փլիբելները։ Հաշվի առնել, թե՛ սորատեգիտական տեսակետից և թե՛ բանվորներին այդ տները տեղափոխելու համար այն նկուղներից, վորակեղ նրանք մինչև այժմ ել փոտում են»։ Այս հրամանը դրվել եր դեռ հրովարիում, վորակեղ Ծորսն արդեն նշել եր իր միջոցառումները կիեվում հեղափոխական կարգ հաստատելու վերաբերյալ։

Ծորսին գժվար եր սորատային վարչության մեջ գտնելը։ Ահա նա ոլանում է ավտոյով դեպի այն թաղը, վորակեղ բողոքները պաշարել են հայանարերված պետլյուրական բանդան։ Ֆեղ ահա նա արդեն, ինչպես Ռւենէչյում, բլոկ-նոտը ձեռքին ման է գալիս պահեստները և դրի յե առնում գրավված ալվարը։ Վորեւ գործարանում միտինգ եւ այստեղ էս հանկարծ հանդես

է գալիս Ծորսը, վորին գիմայվորում են փոթորկալից ովացիաներով։ Կամ ահա նա քաղաքային բաղնիսի մոտն է, վորակեղ խմբվել են բողոքները, վորոնց հրամայված և բնակարաններում տեղակարգություն այն ժամանակ, յերբ կլողանան։ Ահա ինչ-վոր տեղ վաշտի ժողով և տեղի ունենում, վորակեղ քննվում է իր տանտիրուհուցուց արծաթե գդալ գողացող մի կարմիր բանակայինի արարքը։ Վոչվոք չնկատեց, թե ինչպես ե ներս մտել Ծորսը։ Կանգնած լսում է, աչքերը չոր փայլում են։ Բոլորը լուսմ են։ Ծորսն ասում է.

— Այսակեղ շաղակրատության վոչինչ չկա։ այդ մարդը կինդակահարվի։

Ֆեղ Ծորսն այնպիսի տեսք և լնդժմում, վոր վոչվոք սիրու չի անի այդ կողոպատիչին խնայելու մասին խոսք բաց անել։ Ահա նա կինոթատրոնումն է, վորակեղ ցուցադրվում է «Բողոքները կիեվում» կարճամետրաժ Փիլմը, վորի նկարահանումը կազմակերպվել ե քաղաքի պահատագրման հենց առաջին որը։ Եկրանի վրայով անցնում է վաշտի հետեւից, իսկ բանվորները վողջունում են նրանց։ Բողոքներները հրձվանքից մռնչում են։ Ամեն մեկն եկրանի վրա իրեն և ճանաչում։ Դեռ կարմիր-բանակայինները կինոթատրոնից չցրված Ծորսն արդեն նստած և բարձր հրամանատարական կազմի՝ բանակի շտարի կողմից հրավիրված խորհրդակցության նիստում։ Նստած և հետեւ շարքերում, համեստ, ուշադրությամբ լսում է, իսկ մի-յերկու ժամ հետո նա արդեն Պեչորայի գորանոցների խոհանոցում փոթորիկ և բարձրացնում կեղտոտ կաթսաների պատճառով։ Ահա նա հարեւանցիորեն այցելում է գնդի շտարը և ադյուտանտին խնդրում է ջութակ նվագել։ Մի քանի բռակ նստած, մտածկու կերպով գլուխը կախ զցած լսում է։ Ապա գլուխը բարձրացնում է և նրա մեծ թուխ աչքերն այնպես ուրախ փայլում են։ Ծորսը կարծես ուրիշ մարդ և դարձել։ Նրան ճանաչել չի լինի։

Մի անգամ Ծորսին, վորը նոր եր յեկել իր սորատային վարչությունը, ադյուտանտը զեկուցեց, վոր նրան սպասում է առաջա-ֆելդչերական դպրոցի կուրսանտների պատգամավորությունը։

— Կարծեմ, այդ դպրոցում դուք մի ժամանակ սովորել եք, — ասաց աղյուսանալու:

— Են ել վո՞նց, — բացականչեց Շչորսը: — Զե՞՞ վոր այդ իմ կյանքում մի ամբողջ ժամանակաշրջան է յեղել: Ազնիվ խոռք եմ ասում ձեղ՝ ինձ համար այժմ ավելի հիշտ կրիվը գրավել, քան այն ժամանակ այդ դպրոցը մտնել: Թող այստեղ դան, այստեղ:

Կես ժամ անց՝ իր մոտ յեկած պատղամայլորության հետ միասին Շչորսն ավտոմոբիլով մոտեցավ ուղիւածութեական դպրոցի արքունական տիպի անհրապույր շենքին: Ծանր յերկաթե դռների մոտ նրան ձևապատել եր սովորողների ամբոխը: Աչա և ծանոթ կիսամութ միջանցքը: Տասնչորս տարեկան մի պատանի յեր, յեր այստեղ կանգնել եր վախեցած հոր հետ, գորն ամենեին սիրո չեր անում զրասենյակ մտնելու:

Յեշ այդ բոլորն ընդամենը 9 տարի առաջ:

Սովորողները Շչորսին զանգաւում ելին, վոր Պետրուրան նրանց կիսաքաղց եր պահում: Նրանք որական ստանում ելին քառորդ Փունտ հաց և, վորպես կերակուրի այանք, միայն նեխած կաղամբ: Շչորսը մեկնելիս խոստացավ ողնել: Հետեյալ որը դպրոց յեկալ մի քանի սայլ պարեն: Իսկ մեկ օր հետո յել Շչորսը յեկալ ստուգելու, թե ինչպես են կատարվում նրա հրամաները:

Հանդստի հազվագեղ բոպեներին Շչորսը չեր սիրում մենակ մնալ: Սովորաբար զսպիած, խոսք ու զրույցի տեսակետից ժշտալինելով, նա իր մոտիկ ընկերների շրջանում որամիտ զրուցակից եր: Շատ դիտող լինելով՝ նա մարտի ժամանակ նկատում եր ամեն մեկի վարքագիծը, և յեր հրամանատարները հանդստի ժամանակ միասին ելին հավաքվում, Շչորսը զրույցի ժամանակ հանկարծ հիշում եր ներկա յեղողներից վորեւ մեկի վորեւ զվարճակի գիծը և սկսում եր այնպես պատկերել այդ գիծը, վոր բոլորը ծիծաղու մեռնում ելին: Ինքը Շչորսն ել եր ծիծաղում և մեկ ել հանկարծ սկսում եր հաղալ և մի տեսակ միանգամից:

— Դե՞հ, յես դնացի, — այստեղ ձեզ հետ շատ շաղակրատեցի:

Շչորսին լավ չճանաչող նոր մարդկանցից վորեւ մեկը մեկ ել տեսար ասաց.

— Լավ կլիներ, վոր հանդստանայիք, ընկեր հրամանատար, մի փոքր բժշկվեյիք:

Շչորսը ցալակցություն տանել չեր կարող:

— Անհանգիստ մի՛ լինեք, յերիտասարդ, յես ձեզնից շատ կդիմանամ:

Բայց վորքան ել նա թաքցներ իր հիվանդությունը, այն ժամանակ առ ժամանակ իրեն զգալ եր տալիս: Պետք եր լինում անկողին պառկել: Այդպիսի որեր նա գրում եր ֆրումա թոստովային:

«Մի փոքր տկար եմ, այնպես վոր մի՛ քիչ պառկում եմ և հաղ ունեմ: Յերեխ մըսել եմ, բայց վոչինչ... Յես ինձ բավարար եմ զգում»:

Սակայն նրա առողջության վիճակն ամենեին ել բավարար չեր: Կիեվի վրա հարձակվելիս Շչորսի մըսելը սրել եր թոքերում յեղած պրոցեսը: Բժիշկները պնդում ելին, վոր հանգիստ առնի: Վերջիվերջո Շչորսն ստիպված եր համաձայնվել: Հրամանատարությունը նրան արձակուրդ տվեց, նա տուն մեկնեց, բայց չուտով հեռազրով յետ կանչվեց և հրաման ստացավ անմիջապես ընդունել դիվիզիան:

Յ. Յ. Յ.

Արդեն մարտ ամիսն եր: Հենց ձիչտ այդ ժամանակ մի տարի առաջ Շչորսը Սնովսկում սկսեց ապստամբական ջոկատ կազմակերպել: Մի տարվա ընթացքում նա անց կացալ փոքրիկ ջոկատի հրամանատարից մինչև դիվիզիայի հրամանատարը տանող ուղին:

Շչորսի առաջին ուկրաինական դիվիզիայի հրամանատար դառնալուց առաջ այդ դիվիզիայի գնդերում հաշվվում եր՝ Բոդգունի անվան գնդում՝ 2413 մարտիկ, Տարաշչայի գնդում՝ 3113, Նովորոդ-Սևերսկի գնդում՝ 1813, Նեժինի գնդում՝ 3354: Շչորսը պետք ե գնդերը ծավալելով բրիդագների վերածեր:

Յերեք ամայիս անընդհատ հարձակման ընթացքում, չնայած ժարտերում ունեցած կորուստներին, առաջին ուկրաինական դիվիզիան աճեց համարյա չորս անդամ: 1918թ. դեկտեմբերի

սկզբին այդ գիլելիայում կար ընդամենը 3250 մարտիկ, իսկ 1919 թ. մարտի սկզբին, ներառյալ հեծելազորը, հրետանին և տեխնիկական զորամասերը՝ 12690:

Այսպես մարտերում աճում էր Լենինի-Ստալինի կուսակցության ստեղծած Բանվորա-դյուլացիական Կարմիր Բանակը: Այսպես ելին կենսագործվում Շչորսի յերազանքները: Հեղափոխական ալիքի կատարին նա քանի վնում այնքան ավելի վեր եր բարձրանում, յուրաքանչյուր որը նրա համար նոր հորիզոններ եր բացանում: Խնդիրները բարդանում ելին, պահանջում ելին վոչ միայն եներգիայի մեծ լարում, այլև ավելի լուրջ գիտելիքներ: Շչորսն իր ուղմական ու քաղաքական մտահորիզոնն ընդարձակելու համար ուղարկում եր ամեն մի հնարավորությունից: Նա միշտ իր հետ գրքեր ուներ, և ուղմական պարագայում նա ժամանակ եր գտնում այդ գրքերը ուներ, և ուղմական պարագայում նա ժամանակ եր գտնում այդ գրքերը վոչ միայն կարգալու, այլև նըրանցից քաղվածքներ անելու:

Իր ամերով ուժը նվիրելով իր հայրենիքը գերմանական ոկտապաններից և ուկրաինական հակահեղափոխականներից աղասիքելու համար մղվող պայքարին, Շչորսը լարված կերպով հետևում եր, թե ինչ և կատարվում արտասահմանում: Նա չերմ կերպով, վորպես իր հարազատ գործով, հետաքրքրվում եր Գերմանիայի հեղափոխական դեպքերով, զունդարիայի պլույետատրիատի պայքարով: Նրա անձնական նամակները նման ելին լրագրական ինֆորմացիայի, մարտական գեկուցագրերի: Հեռադրով հաղորդադրություն ստանալով կարլ Լիբրենեխտի ու Ռոզա Լյուքսեմբուրգի սպանության մասին; նա ցնցված՝ իսկույն կնոջը հեռադիր և ուղարկում.

«Շատ տխուր լուր եմ հաղորդում քեզ. Կարլ Լիբրենեխտը և միուլ լյուքսեմբուրգը բարբարոսաբար սպանվել են: Անխնա տեսորը պատճառաբանվում ե վիախչելու փորձով»:

Հունդարիայում պրոլետարական դիկտուտուրա հաստատելու հաղորդադրությունն առաջ բերեց Շչորսի ուժերի անսովոր վերելք:

Բողոքներ, աչքներդ դեպի արևմուտք, — ասաց նա այդ որը կարմիր-բանակայինների միտինդում: — Խորհրդային

Ուկրաինան յեղբայրական ձեռք կմեկնի խորհրդային Հունդարիային:

Շչորսը յերբեք ուազմական աշխատանքը չեր բաժանում քաղաքական աշխատանքից: Նա իրեն դիտում էր ամենից առաջ վորպես բոլցիկի: Գրականության, կենտրոնական լրագրերի սուրպակառություն զգալով, վորոնք գնդերին հասնում ելին մեծ ուշացումներով, ընդհատումներով, Շչորսը գեռ կիւլի վրա հարձակվելու ժամանակամիջոցում իր բրիգադում ստեղծեց բոլցերկյան մարտական „Կրանա պարագարագարագործությունների մեջ այդ հարկավոր ե, պեսաք և լինի», համախ կրկնում եր նա և թեև զորամասերում քաղաշխատողների պակաս կան, Շչորսը լրագրի համար աշխատողներ գտավ: Սկզբներում լրագիրը դժվարությամբ եր լույս տեսնում, վորովհետեւ սեփական տպարան չունելին: Շչորսը հրամայեց առաջին համարը տպագրել մի մասնավոր ավանային տպարանում:

Եեր համարը շարված, կապված, տպված և լրագրի առաջին որինակները մեքենայի տակից գուրս ելին յեկած, տպարանատերը նկատեց, վոր վերջին յերեսում տպված և «Բողոքնի անվան բրիգադի տպարան»: Նա սկսեց վրդովիկել ու բոլորել, ասելով, թե «իր պատվիրատուններից վո՞չ մեկը յերբեք այդպես չի վարվել», բայց նրան համոզիչ կերպով ասացին, վոր Շչորսը բոլորովին այլ տեսակի «պատվիրատու» յե:

Մի քանի համար լույս տեսնելուց հետո «Կրանա պարագարագարագործությունների առաջին ուկրաինական դիմիլիայի քաղբաժնի որգանը»:

Այդ ժամանակ Պետլյուրայից Շչորսի խրած հսկայական ավարի մեջ մի վագոն-տպարան գուրս յեկավ: Շչորսն այդ տպարանը նվիրաբերեց իր զավակին՝ դիմիլիայի լրագրի խմբագրությանը: Կարմիր-բանակայիններն առաջավոր դիրքերում սկսեցին լրադիր ստանալ ավելի հաճախ և առանց ընդհատումների:

Աջակնյա Ուկրաինայի շատ կայարաններում կարելի յեր տեսնել պահեստի ուղիներից մեկի վրա, կայարանից հեռու պատսպարված այս վագոն-տպարանը: Որ ու դիչեր այստեղ յեռում եր „Կրանա պարագարագարագործության և տպարանի կյանքը: Ճրագվե մոմի լույսով գրաշարները սառը արճճե տառերից բոցավառ տողեր, այսունակներ և յերեսներ ելին

կազմում բոգունցիների, տարաշչացիների, նովդորոդ-սևերցիների հերոսական մարտերի ու հաղթանակների մասին:

Հենց այդ տպարանում ել տպվում ելին կոչեր, լողունդներ և բրոշյուրներ՝ ուռու և ուկրաինական լեզուներով:

Կարմիր սավառնորդները հաղարավոր այդպիսի «արկեր» նետում ելին պետլյուրական զորքերի բանակը, և դրանք հաճախ պակաս ազդեցություն չելին գործում, քան հրետանային արկերը: Պետլյուրայի կողմից խարված զինվորների խմբեր զենքի հետ միասին թողնում ելին իրենց զորամասերը և անցնում ելին Կարմիր Բանակի կողմը:

Մի անգամ Պետլյուրան ևս մտածում է պայքարում գործադրել այն զենքը, վոր այդքան հաջող կերպով գործադրում են Շչորսը: 1919 թ. մարտի վերջին նա դիմում է մի կոչով «տարաշչացիներին», բոգունցիներին և այլ ուկրաինական կողակներին», կոչ անելով նրանց ցրվել իրենց տները: Իհարկե այդ պրովոկացիոն կոչը զնդերում միայն ծիծաղ առաջացրեց, բայց Շչորսն այնուամենայնիվ վորոշեց Պետլյուրային կարմիր մարտիկների անունից մի պատասխան զրել: Այս պատասխանը մեծ դեր խաղաց Պետլյուրայի զորքերի կազմալուծելու գործում: Այդ կոչի ամեն մի տողը, վորը ներշնչված եր անհաշտ ատելությամբ հեղափոխության թշնամիների նկատմամբ և խեկանա բոլշևիկյան ինտերնացիոնալությամբ, խվում եր իսկը նշանին:

Միա չչորսյան արտահայտչությամբ հիանալի այդ փաստաթուղթը:

«Մենք, տարաշչացիներս, բոգունցիներս և այլ ուկրաինացիներս, կողակներս, կարմիր-բանակայիններս, ստացանք քուլտի դիմումը:

Ինչպես հնում զապորօժցիները տաճկական սուլթանին, այնպես ել մենք պատասխանում ենք քեզ:

Մի գետման Սկորոպաղսկի ունելինք՝ նստել եր գերմանական սպինների վրա, նզովյալը վոչնչացավ:

Նոր պան-գետման է գուրս յեկել՝ Պետլյուրան: Զքավոր գյուղացիներին վաճառել ե լեհական պաներին, պան-կալվածատերերի հետ հաշտություն է կնքել:

Ուկրաինան ծախել է ֆրանսիական, ուռմինական, հունական

գայլաձուկերին, նրանց հետ միասին մեր դեմ և դուրս յեկել, Ուկրաինայի աշխատավոր չքավորների դեմ: Մայր հայրենիքը ծախել է, չքավոր ժողովուրդը ծախել է:

Ասա՛, Հուղա՛, վորքա՞ն փողով ես ծախել դու Ուկրաինան: Վորքա՞ն ես վճարում քո վարձկաններին, վորպեսզի շան լեզվով գրգռեն գյուղացիությունը, նրան բարձրացնեն աշխատավոր չքավորության իշխանության դեմ:

Ասա՛, գալաձան: Միայն իմացի՛ր, վոր այլես պաները պառություն չեն անի Ուկրաինայում:

Մենք, Ուկրաինայի վորդիներս, չքավոր աշխատավորներս, գլուխներս կղնենք և Ուկրաինան կպաշտպանենք, վորպեսզի նրա ազատ հողում ծաղկի ցորենը, ազատ պայմաններում հնձեն ազատ գյուղացիներն իրենց ոգտին և վոչ թե ագահ թալանչիների, արյունաբուների, կուլակների, կալվածատերերի ոգտին:

Այս՛: Մենք ոռուական բանվորների ու գյուղացիների յեղայիններն ենք, ինչպես և յեղբայր ենք այն բոլորին, ովքեր պայքարում են աշխատավորների ազատադրման համար:

Իսկ քո յեղբայրները լեհական շլյախտիչները, ուրկրաինացի աշխարհակուլ-կուլակները, ցարական գեներալները, Փրանսիական բուրժուաներն են:

Դու ինքդ ել կեղծ ես ու անառակ, ինչպես շլյախտիչները, յերբ ասում ես, թե իրը բոլորին կկոտորենք:

Զուր չտեսած՝ մի՛ բորկացիր: Զրավոսը քեզ համար պատրաստ ե, ֆրանսիացոց ու լեհերի չնորհիվ նոր բուսած՝ բուրժուաների պան դեմումն:

Մինչև այս ամառ չես հասցնի: Մենք քո կողերդ լավ ջարդեցինք կորոստենի, բերդիչովի և Պրոսկուրովի մոտ: Քո դաշնուկիցներն արդեն լքել են Ողեսսան...

Ազատագրված Հունդարիան դեպի մեզ և մեկնում իր յեղբայրական ձեռքերը և պաներից թալանված, լեհաստանի, Գալիցիայի գյուղացիությունը ձեռքերը պարզում է դեպի քո կոկորդը, Հուղա՛:

Հեռո՛ւ մեղանից, դու անիծյալ, խեղդվի՛ր դու, չուն:

Գյուղացի կողակ-ուկրաինացիների անունից կարմիր կողակների իրամանատարներ, առամանեներ՝ Շնորս, Թոժեմկո և այլն:

## ՎԻՆԻՑԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Կիեվի մոտ ջախջախված պետլյուրականները նահանջում ե-  
յին ֆաստովի, Բերդիչովի, Ժիտոմիրի ու յոնները։ Պետլյուրայի  
կայանը տեղափոխվել եր Վինիցա։ Հետախուզության տվյալնե-  
րով փետրվարի 20-ին պետլյուրականների աշ թևում Ումանի  
ու յոնում, զավորության կորպուսի զորամասերը ի մի եյին հա-  
վաքում և վերածվում եյին հարվածային մի խմբի ատաման  
Վոլոչենկոյի հրամանատարությամբ։ Այս խումբն ուներ 10—15  
հազար զինվոր։ Իր ձախ թևում, կորոստենի ու յոնում, Պետ-  
լյուրան պաշտպանվում եր յերեք գնդով և մի քանի մանր մասե-  
րով։ Այստեղ նա ուներ ընդամենը մոտ յերկու հազար սլին։  
Ժիտոմիրում տեղափոխված եր Պետլյուրայի 1-ին կորպուսի և  
նրա 5 հետեւակ և 2 հեծյալ դնդերի շտաբը։ Կորպուսի մնացած  
մասերը ցրված եյին թիկունքում (Լուցկ, Ռուբնո, Դուբնո, Կրե-  
մենեց, Ռուբրոդ, Խոյաւլավլ, Ստարոկոնստանտինով քաղաքնե-  
րում)։

Որ որի վրա Պետլյուրան կարող եր լրացուցիչ ուժեր ստանալ  
Գալիցիայից, վորաեղ նա շտապ կուլակային, այսպես կոչված  
աեւելիկների գնդեր եր կազմակերպում։ Պետլյուրայի դիրեկտո-  
րիան բանակցություններ եր վարում լեհերի հետ։ Արդեն կազմ-  
վում եր ուկրաինական համահելափոխականների և լեհական  
պաների միատեղ գործողությունների պլան։ Ողեսան դրաված  
ինտերվենտներն աշխատում եյին Ուկրաինայում սոնեղծել հակա-  
հեղափոխության միասնական ճակատ։

Պետլյուրան, վորը ստիպված եր մաքրել ձախափնյա Ուկ-  
րաինան, այժմ հույս ուներ իր ոտարերկրյա դաշնակիցների ող-  
նությամբ հարձակման անցնելու։ Նրա պլանն այս եր աշ թևով՝  
Վոլոչենկոյի հարվածային խմբով—հարձակվել Յվետկովո կայ-


րանի վրայով գետի Ջերկաս, իսկ ճակատի կենտրոնով—կոնվազ-  
ցելի հրամանատարության տակ յեղած զորամասերով— Կիեվի  
վրա տալ ֆաստովի վրայով։ Մինչդեռ ուկրաինական ճակատի  
խորհրդային հրամանատարությունը, հարձակողական գործողու-  
թյուն զարգացնելով, վորոշել եր իր աջ թևում առաջակալ դնելով  
Սարնիի և Ժիտոմիրի կողմը, հիմնական ուժերով Վինիցիայի  
վրա տալ։ Խնդիրն եր՝ Գալիցիայից և Ողեսայից Պետլյուրայի  
հարվածային խումբը կտրել և այն վոչնչացնել։

Փետրվարի 15-ին ուկրաինական ճակատի կարմիր Բանակի  
այն զորամասերը, վորոնք գործում եյին Կիեվի ուղղությամբ—  
առաջին և յերկրորդ դիվիզիաները և առանձին բրիգադը—միաց-  
վեցին և մի հատուկ խմբի վերածվեցին։ Կարմիր զորքերի այս  
խմբի հրամանատարությունը հետեւյալ դիրեկտիվն ստացավ։  
«Կիեվի մոտ ջախջախված հակառակորդը յետ ե քաշվում ֆաս-  
տով, Ժիտոմիրը, կազմատին ույոնը։ Նրա թիվն ե 12 հազար սլին  
և մի քանի մարտկոց։ Ոժանդակ ուժեր են սպասվում Գալիցիա-  
յից։ Հակառակորդի աննշան մասեր դեռ դիմանում են կորոստենի  
մոտ և Կիեվի մերձակա մատուցյուներում... Զեր մոտակա խնդիրն  
ե... կազ հաստատել արևմտյան բանակի հետ կորոստենի վրա-  
յով, հուսալի կերպով պաշտպանվել Ժիտոմիրի կողմից և տիրել  
ֆաստովին»։

Կիեվի խմբի հրամանատարությունն այս խնդիրը կատարե-  
լով՝ Կիեվից դեպի Ֆաստով շարժեց առաջին դիվիզիան։ Առան-  
ձին հրամակութ բրիգադն այդ դիվիզիայի շարժումը պաշտպանում  
եր Ժիտոմիրի վրա տալով, յերկրորդ դիվիզիան, վորը գործում  
եր ձախ թևում, կենտրոնանում եր Յվետկովո-Սմելի ույոնում՝  
դեպի Ֆաստով թևային յերթ կատարելու համար։ Ումանի ուղ-  
ղությամբ այս դիվիզիան պաշտպանվում եր իր յերկրորդ բրի-  
գադի միջոցով։

Այժմ հետեւենք, թե ինչպես եր զարգանում այդ ոպերացիան,  
ոլորի մեջ վճռական դեր խաղացին Շչորսի զորամասերը։

Փետրվարի 15—17-ին Բոգունի անվան և Տարաշչայի գնդերը  
Պիեվից դուրս յեկան, հրաման ստանալով առաջին ուկրաինա-  
կան ամբողջ դիվիզիայի հետ միասին Ֆաստովի ույոնը գուլք-  
գալու։ Հարձակումը շէտակի յեր զարգանում։ Հաղորդագրու-



Բիուստ Յ. Գևարգիշվիլի ջախչախումը Վիննիցայի մոտ:

Քյունը հայտնում եր «Հակառակորդը խուճապի ժամանված» նահանջում եր:

Հեռագրական ժապավենի վրա պահպանվել է խոսակցությունը յերկու պետլյուրական գեներալների՝ Ասկիլկոյի և Կոնովաչեցի միջև։ Ոսկիլկոն գեկուցում եր. «Բոզունի անվան գնդի մի քանի կողակներ յերեալիս իմ զորքերը հարյուրներով զեղ նն կենում և փախչում են։ ի՞նչ անենք»։ Գեներալ Կոնովալենցն առաջարկում ե զտում անցկացնել։ Ոսկիլկոն հարցնում է։ «Ի՞նչ է նշանակում զտումը»։ Կոնովալենցը պատասխանում է. «Զտումը նշանակում է զտում։ Գնդակահարել, մերկացնել, կախել, մտրակով պատժել, իսկ լավագույն մասը թողնել մարտի համար»։

Վոչինչ չեր ոգնում։ Փետրվարի 19-ին բոգունցիները պետլյուրականներին ջախչախեցին թաստովի մոտ, տարաշշացիները՝ Փովոլոչ ավանի մոտ։ Փետրվարի 21-ին ուկրաինական առաջին դիվիզիան, ամրանալով ֆաստովի ռայոնում, հարձակում սկսեց գեպի կազմատին, Բերդիչով։ Խողովակայում բոգունցիներին զիմավորեց կարմիր պարտիզանների մի ջոկատ։ Յերբ գունդը ժուազ ավանը, պարտիզանները հրացանները պատվի առան։ Բոգունցիները նրանց մոտից հանդիսավոր մարշով անց կացան։ Յեղանակն արդեն գարնանային եր։ Բնակիչներն սպիտակ սփոռցներով ծածկված մեղաններ ելին հանում հրապարակը։ Բոգունցիների համար սոսնական ճաշ եր պատրաստված։

Քանդելով կամուրջները, ճանապարհները և ջրհանները, պետլյուրականները յերկաթուղարծով փախչում եյին գեղականական վիճակացուցանքով։ Պատրիարքին այս պատճենը կոչվում է Վիննիցա։ Կազմալինը գրավեց առանց կովի։

Մարտի 6-ին, յերբ Շչորսը ստանձնեց առաջին գիշեալիայի հրամանատարությունը, դիվիզիայի մասերը գրավում եյին արդեն Սախնովկա-Զարուդինցի դիմը։ Այդ ժամանակ Առանձին հրածիկ բրիդագը հասել եր Բերդիչով։ Յերկրորդ դիվիզիայի առաջին բրիդագը գրավել եր Բելայա Յերկով, իսկ յերկրորդ բրիդագը հաջողությամբ առաջ եր խաղում Յլետկովոյի կողմից գեպի Տալնոյն։

Մարտի 7-ին Շչորսն ստացավ մի հրաման, վորով պետլյուրականներին վերջնականապես ջախչախելու համար հրամայվում եր. առաջին հրածիկ դիվիզիային՝ հարձակման անցնելը Մախնով-

կա-Զարուղինցի գծից կալինովկա-Ստրիմավկայի վրայով և ամ-  
բանալ Բրահիով (բացառյալ) — վիճնիցա (ներառյալ) գծի վրա:  
Այս գիվիզիայից ձախ պետք և հարձակվեր 2-րդ գիվիզիայի ա-  
ռաջին բրիգադը, վորը հրաման եր ստացել վրավել վիճնիցա (բա-  
ցառյալ) — Գումեննոյ (ներառյալ) գիծը: Աջից գործում եր Առան-  
ձին հրաձագային բրիգադը, վորը խնդիր ուներ զուրս դալու Շրաի-  
լով (ներառյալ) — Մեժիրով (բացառյալ): Հեծյալ զորամասե-  
րը, մոտ յերեք գունդ, միացրած և Հատուկ հեծյալ բրիգադի  
վերածած՝ հարձակվում եյին Բերդիչովի ույայոնից Յանովի,  
Միտինի վրայով դեպի Բար, այն հաշվով, վոր կտրեն Ժմե-  
րինկա-Պրոսկուրով յերկաթուղային գիծը: Ժմերնիկայի յերկա-  
թուղային կազի Ողեսայի հետ պետք և կտրեր 2-րդ գիվիզիա-  
յի 2-րդ բրիգադը, վորը գործում եր Տալնոյե գյուղի կողմից  
գեղի Վապնյարկա:

Այսպիսով Վիճնիցային հիմնական հարվածը հասցնում եր  
Շչորսը:

\*\*\*

Մարտի 11-ին լուսարցին Շչորսի գնդերը հարձակման  
անցան: Հեշտությամբ քելով պետլյուրականներին՝ նրանք  
շարժվում եյին յերկաթուղու յերկայնքով՝ պրիմիտիվ, սեփա-  
կան արտադրության «զրահագնացքների» պաշտպանությամբ:  
Ճանապարհները սաստիկ խանդարվել եյին, յեղանակն անձրեա-  
յին եր, բայց չնայած դրան, Շչորսը հարձակումը զարդացնում  
էր բացառիկ ուժգնությամբ: Մարտի 14-ի մոտերքը գիվիզիան-  
յերկաթաճպիել եր Կազատին, Գոլենդրի, Սամգորոդոկ, Պրի-  
լուկի գծով, այսինքն՝ նրա սուաջալոր մասերը վիճնիցայից ար-  
դեն 20 կիլոմետր հյուսիս-արևելք եյին դժոնիում: Պայթեցնելով  
յերկաթուղային կամուրջը, պետլյուրականները դիրք եյին բռնել  
բուգի վասակ Դեսնա գետի այն կողմը: Յերկաթուղու յերկայն-  
քով հարձակումը դանդաղում եր: Շչորսն իսկույն և ի կազմա-  
կերպեց կամուրջը վերականգնելու աշխատանքը և անձամբ դե-  
կավարում եր այն: Գետի մոտ ցույց սարքելով՝ նա Տարաշայի-  
գունդն ուղարկեց շրջանցի, հրամայելով Բոժենկոյին գրուհի  
վիճնիցան հարավ-արևելքից: Բողունի անվան գունդը հարձակ-  
վում եր անտառուղու յերկայնքով Կալինովկայի, Ստրիմավկայի-

վրայով: Կրավլած լինելով Շչորսի կողմից կամուրջի մոտ սար-  
քած ցույցով, պետլյուրականները յերեկի առանձին ուշադրու-  
թյուն չելին դարձնում թևերի վրա: Տարաշացիների ու բո-  
գունցիների սրընթաց հարվածը նրանց հանկարծակի բերեց:  
Պետլյուրականների ճակատը կայծակի արագությամբ ջախչախ-  
վեց:

Կալինովկան բողունցիները գրավեցին հետեւյալ որը՝ պետ-  
լյուրականների կողմից կատարված հրեական ջարդից հետո:  
Ավանը լիքին եր գիակներով և ձյունի նման ծածկված եր բարձե-  
րի ու գոշակների բմբուլով ու փետուրներով: Գարնան ջրավո-  
սերն ու ցեխը տեղադրեց արյունով ներկված եյին:

Բնակչությունից իմանալով, վոր պետլյուրական բանդանները  
կոտորում են Ստրիմավկա ավանի հրեական չքավորությա-  
նը, գնդի հրամանատարը վորոշեց հարձակումն արագացնել: Նա  
հավաքեց հեծյալ բոլոր հետախույզներին և 200 թրից բաղկա-  
ցած մի ջոկատի գլուխն անցած՝ առաջ արշավեց Ստրիմավկա-  
վիճնիցա ճանապարհով: Ստրիմավկայում բողունցիները նույն  
պատկերը տեսան, ինչ-վոր կալինովկայում: Զարգարաններին  
հետապնդելով՝ մարտի 18-ին նրանք հասան Բուգ գետի վրայի  
կամուրջին և քաղաք ներխուժեցին՝ ճանապարհին կոտորելով  
խուճապի մատնակած փախչող պետլյուրականներին:

Կայարանի կողմից լավեցին չոգեքարչերի շշակների ճայնե-  
րը: Իսկույն ուղղությունը փոխելով, ջոկատն արշավեց կայա-  
րան: Պետլյուրական գույքով բարձած եշելոնները չկարողացան  
մեկնել: Հեծյալ բողունցիները մոտեցան չոգեքարչերին: Նրանք  
չափաղանց հարուստ ավար ճեռք բերին: Չի հեծած՝ եշելոնների  
յերկայնքով անցնելով, հաշվելով դրավիլած աերոպլանները,  
հրանոթները, նրանք հանկարծ նկատեցին քաղաքին մոտեցող մի  
քանի գրեգինաներ: Դրեզինաներից մարդիկ ցատկում եյին,  
մարտական կարդ եյին ընդունում և հարձակվում եյին կայարա-  
նի վրա յերկաթուղու յերկայնքով: Առջեկից վազում եր կաշին  
կուրտկա հազար մի մարդ՝ ատրճանակը ճեռքին:

— Վա՞հ, չե՞ վոր այդ Շչորսն և, — միարեան բացական-  
չեցին մի քանի բողունցիներ:

Գնդի հրամանատարը գիվիզիայի հրամանատարին զեկուցեց և

թե Վլիննիցան բողունցիներն արդեն գրավել են, և սկսեց ավարը թվել:

Շչորսը ծիծաղեց:

— Դեհ, վոր այդպես ե՝ մեր բատկոն հանդիսաւ չի գտնի:

Այդ միջոցին ինչ-վոր մեկը գեկուցեց, վոր արևելքից Վլիննիցայի վրա յե հարձակվում մի խոշոր հեծյալ ջոկատ:

Շչորսը յերկդիտակով նայեց.

— Հենց այդպես ել կա, բատկոն ե ուանում: Հարկավոր ե նրան, վորքան կարելի յե, հանդիսավոր կերպով դիմավորել:

Յերբ Բոժենկոն քառատրոփ արշավելով մոտեցավ կայարանին, նրան ընդառաջ դուրս յեկավ բողունցիների մի խումբ: Նենգորեն ժամալով նրանցից մեկը ձեռքում բռնել եր հացի մի բոքոն և աղ:

— Բարի գալուստ, բատկո: Բողունցիները ձեզ խնդրում են վիճնիցա:

Բոժենկոն, լայն այտոսկրով, սե բեխերով, ինչպես միշտ՝ շինելի մահուղից ֆրենչ հաղած և գալիֆեյով, սուսերակալը ուսովը քցած, կրծքին յերկդիտակ և ձեռքին մտրակ, այնպես հուզվեց, վոր նույնիսկ քրանեց:

— Տղե՛րք, այստեղ արդեն բողունցիներն են, — կրկնում եր նա և այլնս վոչինչ չեր կարողանում ասել:

— Վիճնիցայում բողունցիներն են, իսկ ժմերինկայում չե՞ վոր դեռ պետլյուրականներն են, — խորամանկորեն նկատեց Շչորսը:

Բոժենկոն խկույն լոեց, նա հասկացավ, թե բանն ինչումն ե: Շչորսը կարողանում եր նրա հետ վարվել, նրան աննկատելիորեն իր ձեռքի մեջ եր պահում, խօսյում եր ծերուկի ինքնամիրությունը: Մարտի 20-ին տարաշչացիները խիզախ հարձակումով դրավեցին ժմերիկան: Շչորսը զեկուցադիր ստացավ, վորով «բատկոն» հայտնում եր հսկայական ավարի մասին:


## ՄԱՐՏԵՐ ԿՈՐՈՍՏԵՆԻ ՅԵԼ ԲԵՐԴԻՉՈՎԻ ՄՈՏ

Յերբ Շչորսի դիվիզիան ճեղքեց Պետլյուրայի ճակատը Վլիննիցայի մոտ և գրավեց ժմերինկան, այդ վորոշեց Պետլյուրավածային խմբի բախտը, վորը նահանջում եր դեպի վապնյարկա: Այն թակարդն եր ընկնում: Սակայն կտրել կոնովալեցի խմբի զորքի բարձր գորքերի հիմնական մասսայի՝ ժմերինկայից դեպի Փալիցիայի սահմանները տանող ճանապարհը — չհաջողվեց: Ճանապարհների խիստ խանգարվածությունը կասեցրեց այն հեծելագորի առաջնալացումը, վորը պիտի Բարի վրա հարձակվելով կտրեր յերկաթուղային դիմ: Պետլյուրականների եշելոնները կարողացան զուրս պրծնել դեպի Պրոսկուրով:

Առ 20-ը մարտի Շչորսի զնդերը կարմիր Բանակի ուկրաինական զորամասերի միջև ավանդարդային դիրք եյին գրավում և խիստ դուրս եյին ընկած դեպի հարավ-արևմուտք: Բայց այդ ժամանակ իրերի դրությունը փոխվեց, և վճռական մարտեր եյին սկսվում այլ ուղղությամբ: Պետլյուրան, վորն արդեն համաձայնության եր յեկել սպիտակ լեհերի հետ, վորոշել եր հարցած հասցնել կիեվին Կորոստենի և Բերդիչովի վրայով և շտագ ճակատ եր նետում Գալիցիայում կազմակերպած սեչևիկների կուլակային զնդերը: Կիեվը, վորն արևմուտքից պաշտպանված եր մի քանի մանր, շտագ կազմակերպված կարմիր զորամասերով, լուրջ սպառնալիքի տակ ընկավ: Որ որի վրա Շչորսը կիեվից ավելի և ավելի անհանդատացուցիչ տեղեկություններ եր ստանում: Ճակատը ճեղքելով ամենաթույլ տեղում՝ Ժիտոմիրի և Կորոստենի միջև պետլյուրականներն արագ մոտենում

Եյլն Կիեվին: Կորոստենի կողմից հարձակվում եյին առավելապես սեչելիները: Նրանց ուժերն այստեղ հաշվում եյին 6 դունդ: Մարտի 22-ին նրանք զորով ճեղքեցին, անցան Տետերև գետը: Կոխիները տեղի եյին ունենում Բորոդյանկա կայարանի մոտ Կիեվից 40—50 կիլոմետր հեռավորության վրա: Մայրաքաղաքի մատուցյները պաշտպանում եյին յերեք թույլ կարմիր դունդ: Այդ գնդերից յերկուսը ուժապատ եյին յեղել Կորոստենի մոտ տեղի ունեցած յերկարատև մարտերի ժամանակ, յերբորդ գունդը Փրոնտ եր ժամանել դեռ լիովին չկազմակերպված, չը-զարժված: Այդ գնդերի առանձին բարոյալքված վաշտեր անկարգ կերպով նահանջում եյին դեպի Կիեվ՝ խուճապ սերմանելով: Քաղաքում ուրիշ վոչ մի զորային ուղերվ չկար: Բոլորի չույսը Շչորսի վրա յեր: Նրա զորամասերը գտնվում եյին Վին-նիցա-ժմերինկա ռայոնում, Կիեվից մոտ 250 կիլոմետր հեռավորության վրա: Հրաման ստանալով դիվիզիան դեպի Կիեվ շպրտելու, Շչորսը իսկույն ևեթ սկսեց Վիննիցայում բեռնել և եշելոններ կազմել բոգունի անվան գնդից, իսկ տարաշչացիներին հրամայեց բեռնվել ժմերինկայում: Մարտի 22-ին ժամը 12-ին բոգունցիների առաջին գումարտակը մեկնեց Վիննիցայից Կազմատին-Կիեվ-Բորոդյանկա կայարան մարշրուտով: Յերեկվա ժամը 3-ին մեկնեց յերկրորդ եշելոնը, սրա հետևից յերրորդը: Բոգունցիների շարժման տեղեկությունն իսկույն հանդստացրեց Կիեվցիներին: Յերբ ուկրաինական ճակատի շտաբն ուղիղ հեռագրաթելով հարցում արավ. «Ասացե՛ք, թե Կիեվում տրամադրությունն ի՞նչպես է», Կիեվի խմբի շտարը պատասխանեց. «Դժվար է ասել, համենայն դեպս տրամադրությունը վատ է, բայց բոգունցիներն ամեն ինչ կուղեն, իսկ յերեկոյան դեմ նրանք այստեղ կլինեն»:

Մարտի 24-ին բոգունի անվան գունդը, Կիեվին անցնելով, իջավ Բորոդյանկա կայարանում: Հենց նույն որը բոգունցիները յերեք անգամ գրոհի դիմեցին: Յերեկոյան դեմ Պետլյուրայի սեչելիների գնդերը, վորոնք առաջ եյին նետվում դեպի Կիեվ, ստիպված յեղան մի քանի կիլոմետր նահանջել: Մարտի 25-ին Կոխիվը շարունակվում եր: Գյուղերը մի քանի անգամ ճեռք-ճեռք եյին անցնում: Վերջիվերջո բոգունցիների կատաղի գրոհ-



Սխեմա 4. Շչորսի դիվիզիայի հակահարվածը Բերդիչովի և Կորոստենի մոտ 1919 թ. մարտ:

Ները սեչեկներին ստիպեցին փախուսատի դիմել։ Նրանք շտապ նահանջեցին Տետերև գետի մյուս կողմը և կամուրջն անցնելով ամրացան գետի մյուս ափին։

Մարտի 26-ի լուսաբացին Բոգունի անվան գունդը մոտեցավ գետին։ Առաջին և յերկրորդ գումարտակները պետք ե ճակատը ճեղքելին և գետն անյնելին յերկաթուղուց աջ, յերրորդ գումարտակը հարձակվում եր ուղղակի կամուրջի վրա յերկաթուղութմբի յերկայնքով։

Մարտկոցը դուրս թռչելով, սկսեց խիել կարտեչով։ Պետայականները մաքրեցին ականած կամուրջը և վառեցին բիկ-ֆորդյան չնուրները։ Մի րոպե ևս, և կամուրջը կպայթեր։ Այս ժամանակ 3-րդ գումարտակի վաշտերը մեկը մյուսի հետեւից «ուռա» բացականչությամբ գրոհի նեստեցին։ Մի քանի առանյակ մարտիկներ գնդացրային կրակով հնձված կամուրջի վրա մնացին։ Սրանց դիմակների վրայով մնացած բոգունցիները, կամուրջի վրայով վաղեվազ՝ ճեղքեցին անցան մյուս ափը, ճանապարհին հանդցնելով բիկֆորդյան չնուրները։ Զախշախված սեչեկներն արագ դրույլում եյին դեպի արևմուտք։ Բոգունցիները զարգացնում եյին հարձակումը դեպի Կորոստեն։ Նեժինի գունդը, վոր Շչորսը նրանց ողնության եր նետել, հարձակվում եր աջ կողմից։ Կորոստենի կողմից կիելով վտանգից գերծ եր։ Բայց Պետայուրայի հարվածի յերկրորդ՝ Բերդիչովի՝ ուղղությամբ սպառնալիքն աճում եր։ Թշնամին արդեն տիրել եր Ժիտոմիրին։ Կոլիխները տեղի եյին ունենում հենց Բերդիչովի մոտ։ Այս քաղաքը պաշտպանում եյին մի քանի մասի, խայտաբղետ գորսմաներ, վորոնց մարտունակությունը շատ թույլ եր։ Ժամ առ ժամ սպասվում եր, վոր պետայուրականները կարող են դրավել Բերդիչովը։ Այստեղ, ճակատը ճեղքելով, նրանք Կիեվից կետրեյին Կիեվի խմբի կարմիր զորքերի ճախ թեր՝ այդ խմբի հիմնական ուժերը, վորոնք զբաղված եյին պետայուրականներին չըջապատելով վասպնյարկայի մոտ։ Այնինչ Շչորսն այս ուղերացիայով զբաղված լինելով՝ չկարողացավ մի անդամից դեպի Բերդիչով նետել իր բոլոր զորամասերը։ Նա ստիպված եր մաներել։ Տարաշչայի գնդի առաջին գումարտակը նետելով դեպի Բերդիչով՝ այստեղ դրությունը մի քանի որով ամրացրեց։

Մարտի 27-ին, յերբ այդ գումարտակի ուժերն ակսեցին սպառվել, Շչորսն ուղարկեց Տարաշչայի գնդի մյուս գումարտակներն ևս Բոժենկոյի գլխավորությամբ։ Դրությունն այնքան լարված եր, վոր եշելոններից բեռնաթափված առաջին դասակն ստիպված եր դիրք դրավել «վաղով» հրամանով։ Մնացած դասակները բեռնաթափվելուն պես հետեւից հասնում եյին։ Բոժենկոն եսկաղը գրոհի տարավ ուղղակի կայարանից գեղի պետայուրականների թեր, վորոնք արդեն մոտենում եյին քաղաքին։

Բեռնաթափվելով հարձակման անցավ նաև ամբողջ գունդը։

Առ 28-ն մարտի, պետայուրականները յետ եյին շպրտվել Բերդիչովից Չուղնովի ուղղությամբ, բայց այդ որը նրանց հաջողվեց ճակատը ճեղքել ժիտոմիրի ճակատամասում։ Գրավելով Կորոստիշեվը, նրանք թեային հարված ճեռնարկեցին Բերդիչովի գեմ հյուսիսից։ Միաժամանակ, ոժանդակ ուժեր ստանալով պետայուրականները նորից հարձակման անցան Չուղնովի կողմից։ Մարտի 29-ի գիշերն յետ մղելով ճախ թեր թույլ զորամասերը, նրանք մոտեցան քաղաքին։ Համառ դիմադրություն եյին ցույց տալիս միայն տարաշացիները, վորոնք դիրքեր երային դրավում Բերդիչովի հյուսիսային ծայրամասում։ Պետայուրականները նրանց չըջանցում եյին ճախից, անցնում եյին նրանց թիկունքը։

Այդ գիշերը Վիննիցայից զրահագնացքով ժամանեց Շչորսը։ Նա նշանակվել եր Բերդիչովի մարտական ճակատամասի պետ և նրա ստացած հրամանն ասում եր. «Ինչ գնով ուղում ե լինի Բերդիչովը պահել։»

Կոխին արդեն տեղի յեր ունենում քաղաքի ծայրամասերում։ Կայարանում խմբվել եր կարմիր-բանակայինների ահազին մասսա։ Լիակատար շփոթվածություն եր զգացվում։ Շչորսը վագոնից դուրս թռավ իր մշտական «Լյուիսի» հետ, խկույն բոլորին հավաքեց, շարեց, շղթա կազմեց և տարավ ողնելու կովով նահանջող տարաշացիներին։

Շչորսի ժամանումն խստ բեկում ստեղծեց։ «29-ին զրությունը հրաշալի զարձավ», հայտնում եյին Բերդիչովից Կիեվ։ Մակայն ամենաղաման մարտերը Բերդիչովի չուրջը դեռ նոր եյին սկսվում։ Պետայուրան շաբանակ իր զարամասերն ամ-

բացնում եր Գալիցիայից ժամանած թարմ ուժերով, իսկ Շչորսը կարող եր հույս դնել միայն տարաշացիների վրա: Ճակատամասի մասցած գնդերի մարտունակությունը, դնելեր, վորոնք խճողված ելին նախկին պետլյուրականներով, որըստորե ընկնում եր: Մ ՚ըսի 30-ին ճակատի հրամանատարը զեկուցում եր ուկրաինական խորհրդային կառավարությանը.

«Եերդիչովի մոտ թշնամուն համառ զիմադրում և նրան գրոհում են միայն տարաշացիները, մասցածները խուճապային կերպով են տրամադրված»: 1—2 ապրիլի տարաշացիները Շչորսի գլխավորությամբ յետ մղեցին ինն կատաղի գրոհ: Մոմենտներ կային, յերբ տարաշացիների վրա ճակատից հարձակվում եր մի քանի խիտ շղթայով Պետլյուրայի կապույտ-ժուղանավորների ընտիր հետևակը, թերերի վրա ուղանում եր հեծելազորի լավան, իսկ զեպի թիկունքն եյին շրջանցում զրահագնացքի պաշտպանությամբ յունկերների վաշտերը: Տարաշացիները չեյին դիմանում, չուռ եյին գալիս և փախչում եյին: Շչորսը սրարշալ ձին յետ պահէլով՝ փախչողների ճանապարհը կտրում եր, տարձանակն ողն եր կրակում և խոպոտ ճայնով դոռում եր.

— Վո՞չ մի քայլ զեպի յետ:

Յել տարաշացիները կանոք եյին առնում, կարդի եյին թերում իրենց, շղթա եյին կազմում և գնում եյին Շչորսի հետեից: Կային մոմենտներ, յերբ Շչորսը, հրամայելով «իմ հետեից զեպի գրո՞հ», վազում եր առջելց՝ խեղդվելով սկսված հաղից: Նրա վրա նայելը սոսկալի յեր: Վազուց չսամիրված, անքուն զիշերներից նիշարած դեմքի վրա, աճած միրուքի ու փնջից վերի տենդաղին փայլում եյին միծ աչքերը: Մոմենտներ կային, յերբ Շչորսը գործում եր վորակես շարքային մարտիկ: Յերեւմն տեսնում եյին, թե ինչպես նա սոզալով մոտենում և յերկաթուղուն՝ թիկունք անցնող զրահագնացքի ճանապարհը կտրելու համար: Տեսնում եյին, թե ինչպես նա ուելսերի վրա յե դնում սիլրոկսիլինի գլանը, ինչպես վառում եր բիկինորդյան չնուրը, և թե ինչպես այնուհետեւ պայթյունից ցնցվում և Պետլյուրայի զրահագնացքը: Մոմենտներ կային, յերբ տարաշացիների բոլոր ուժերն սպառվում եյին, նրանք նահանջում եյին, սակայն հենց քաղաքի մոտ Շչորսն անսպասելի կերպով թարմ ոժանդակ ու-

յերով եր յերեան գալիս: Նա տարաշացիների նոսրացած շարքերը լրացնում եր Բերդիչովի հրյա բանվոր յերիտասարդության ուժերով: Քայաքի յերիտասարդ բանվորներն ու ծառայողները, վորոնք ապրել եյին պետլյուրական ջարդերի կոչմարային որերը, երենք եյին զենքի դիմում ինքնապահության համար:

Ցեթե տարաշացիներին լսելիր, կարելի յեր կարծել, թե Շչորսն ամեն տեղ միաժամանակ կարող ել լինել:

— Շչորսը վազում եր մեր վաշտի առջեկց, — պատմում եր մեկը:

— Այդ չի կարող լինել, — առարկում եր մյուսը, — այդ ժամանակ Շչորսը մեղ մոտ եր:

Ցեղ մարդեկ, փրփուրը բերանին, վիճում եյին, և յուրաքանչյուրը համոզված եր, թե ինքն իրավացի յե:

«Յեղանակը ցուրտ և խոնավ եր: Զյունը նոր եր հալել, ցեխեր», գրում եր իր նամակում Բերդիչովի համար մղված պայքարի շարքային մասնակիցներից մեկը: «Մարտիկներից շատերի վոտքերը ուռել և ձեռքերը փայտացել եյին: Մեծ կորուստներ կրելով մենք նահանջում եյինք զեպի ներդիչով: Գիշերը մենք տեսնում եյինք կրակի ցորքն այն գյուղերում, վորտեղ մեղ առանձնապես ուրախ եյին ընդունել: Մեր սրտերը ճմրվում եյին, յերբ մենք նայում եյինք կարմրատակած յերկնքին: Լուսարացին մի հարյուր նահանջող մարտիկ հավաքվել եր կայարանում: Հանկարծ կարմիր գրոշով մի զրահագնացք մոտենում և տախտակամածին: Վոչ մի պլոտիկացիա չսուլասելով՝ մենք ուրախացած, խմբվին գուրս թափվեցինք զրահագնացքին ընդառաջ: Բայց վողջույնի փոխարեն մեր վրա թափվեց գնդակների ու կարտեչի տաք կարկուտ: Խուճապ առաջացավ: Յել ահա, չզիտես վորտեղից, յերեան յեկալ Շչորսը նագանը ձեռքին: Նրա խրոխտ ճայնը մեղ իսկույն ուչքի բերեց: Նա կարողացավ մեղ պահել և շղթակազմել: Յես վազում եյի՝ ուսիս «Մաքսիմ» գնդացրի իրանը: Իսկ ընկերս տանում եր հաստոցը: Մի բարձր տեղ ցույց տալով՝ Շչորսը հրամայեց մեղ գնդացրիրը սարքել և սպանիչ կրակ բաց անել: Մի բոպէ անց՝ մեր գնդացրիրն արդեն աշխատում եր՝ իսկ Շչորսը հրամայում եր «Շղթա՛, առաջ, իմ հետեկց, ուռա՛»: Ցերենք յես չեմ մոռանա այդ հանդիսավոր մոմենտը. նագանը

Ճեռքին Շչորսը ուլանում և առջեկց, և բոլորն իրենց ուժերը լարում են, վորպեսզի յետ չմնան իրենց դիվիզիայի յերիտասարդ հրամանատարից»:

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը «Կորոստենի կոմունիստ» զբահագնացքը շարքից դուրս բերեց թշնամու յերկու զբահագքը: Զրահագնացքների կորոստը թուլացրեց պետլյուրականների ճնշումը, վորոնք հարձակվում եյին յերկաթուղու յերկայնքով: Այն ժամանակ Պետլյուրան նորից փորձեց շրջանցել Շչորսի ձախ թևը, բայց Պետլյուրայի կողմից շրջանցման ուղարկած յերկու գունդ ապրիլի 2-ին անձնատուր յեղան և գերի վերցվեցին Մախոնվկայի մոտ: Ապրիլի 3-ի լուսարացին տարաշչացիները, Շչորսի և Բոժենկոյի գլխավորությամբ, վորոնք գնում եյին շղթաների առջեկց, հարձակման անցան յերկաթուղու յերկայնքով գեպի Զուդնով: Նույն օրն ել նրանք գրավեցին Դեմչին կայարանը և, հաջողությունը զարգացնելով, հարձակումը շարունակեցին մինչև գիշեր: Ապրիլի 3-ին Կիևի խմբի հրամանատարությունը հրամանով նշում եր, վոր «Կորոստենի, Ժիտոմիրի, Բերդիչովի մոտ ջախջախված թշնամին ամեն ջանք գործ և դնում մեր զորամասերի հարձակումը կասեցնելու և ոեզերվներ հասցնելու, վորպեսզի ամրանա Պրոսկուրով-Կորոստեն գծի վրա»:

Շչորսին հրաման եր տրվում հարձակվել յերկաթուղու յերկայնքով գեպի Շեպետովկա: Նրանից գեպի ձախ խմենիկ-Սեմկի ույանից Բերդիչովից նահանջող պետլյուրականների թևին հարված եյին հասցնում յերկրորդ դիվիզիայի մասերը, վորն արդեն այդ միջոցին լիկվիդացիայի յեր յենթարկել Պետլյուրայի հարվածային խմբի մնացորդները, վորոնք հանձնվել և գերի եյին վերցվել Վապնյարկայի մոտ:

Պետլյուրայի՝ ուկրաինական կարմիր ֆրոնտը Բերդիչովի և Կորոստենի ուղղությամբ ճեղքելու հուսահատ փորձը նրա համար լիակատար կրախով վերջացավ: Շչորսի մանկը, վորը կարողացավ կայծակի շեշտակիությամբ ամենախոցելի ճակատամասերը շպրտել իր հնագույն գնդերը, իսկույն ճակատի դրությունն ամրացրեց: Շչորսի դաստիարակած բողունցիներն ու

աաբաշչացիները կայունություն, արիություն, հայլենիքին նվիրված լինելու բացառիկ որինակ ցուցյա տվին: Շչորսի գնդերն Ուկրաինայի խորհրդային գնդերից ամենալավերը գուշը յեկան:

Ապրիլի 8-ի մոտերը բոգունցիներն ու նեժինցիները Կորոստենի յերկաթուղային հանգույցը մաքրեցին պետլյուրականներից: Տարաշչացիները և Շչորսի կողմից վերջին հերթին վիճնիշայի ճակատամասից հանված Նովորուպեսկերն արդեն դուրս եյին յեկել Զուդնովի ույանը և հարձակումը զարդացնում եյին գենկի Շեպետովկայի և Նովորուպեսկերնի կողմը:

\* \* \*

Իր կնոջը՝ Ֆրումա Ռոստովյային գրած ասլրիլի 11 թվակիր նամակում Շչորսն այսպիս եր պատմում Բերդիչովի մոտ տեղի ունեցած կախների մասին.

«Մեղ մոտ Բերդիչովի ճակատում գործը մի փոքր թարսվեց: Կիեվը խիստ սպառնալիքի տակ ընկալ: Բոլոր հայացքները մեղ վրա եյին գարձել: Մարտի 29-ին գալիս եմ Բերդիչով և, ո՞վ ոսրատի: Բոլոր զորքերը վազոններում են և վոչ մի իշխանություն չկա: Բանը տեղի յե ունենում գիշերված ժամի 3-ին: Լիակատար ինֆորմացիա ստանալով՝ յես գործի կազ: Յերբ ընկեր կարմիր-բանակայիներն իմացան, վոր յես յեկել եմ, վոդի առան: Յես նրանց հարձակման չպրտեցի և ինքս շղթաների միջոցով հակառակորդին յետ մղեցի Բերդիչովից 18 վերստ հեռու, վորտեղ և գիշերը կանգ առանք:

Առավոտյան Պետլյուրան ինքը զբահագնացքով մոտ բերեց գերակիություն ուժեր և մեր ձախ թևը յետ մղեց: Մեր գնդերը ցնցվեցին և վախուսատի դիմեցին: Այս դրությունը տեսնելով՝ յես խկույն գլուխ ընկա, թե այս պատմությունն ինչով կարող է վերջանալ: Զի հեծած՝ յես կանգնեցնում եմ վախչողներին և մեծ գժվարությամբ այսուամենայիվ իմ նպատակին հասնում եմ: Ուժեղ հրետանային կրակի տակ յես յերկրորդ անդամ շղթաները հարձակման տարա և նորից թշնամուն յետ մղեցի: Կոկվներն սկսվեցին հենց անմիջապես քաղաքից դուրս: Մեր կողմից մասնակցում եյին 5 զրահաղնացք և հրետանու մեկ դիվիզիոնն, իսկ թշնամու կողմից՝ 5 զրահաղնացք և 32 զանազան կալիբրի հրանոթ:

ինն որ շարունակ ուժեղ և համառ կոիվ եր առավոտից մինչև  
գիշեր։ Բայց այնուամենայիլ թշնամին ջախջախվեց, չնայած  
վոր քաղաքը ձեռքե-ձեռք եր անցում։

Դու դիտես, վոր յես գրել չեմ սիրում, բայց յեթե յես քեզ  
արդեն գրում եմ, ապա յերեալայի՛ր, թե ի՞նչ կարող եր այս-  
տեղ մինել— յես այդ կոչել եմ «բերդիչովյան կոշմար»։ Այստեղ  
իրար եյին խառնվել մերոնք և թշնամիները։ Բայց յես խորը հա-  
մոզված եյի, վոր կհաղթենք— և հաղթեցի։

Նամակի վերջում Շչորսն ի միջի այլոց հայտնում եր ի հի-  
վանդության մասին։ «Այս բոլորից հետո յես հիվանդացա, և  
լուրջ հիվանդացա։ Զկարծես, թե յես վիրավորված եմ, վո՞չ,  
յես քեզ հավատացնում եմ, վոր վո՞չ։ Բժիշկները հաղորդում են,  
վոր յես յերջանիկ մարդ եմ, վոր յես յերկաթե որդանիզմ ու-  
նեմ... ինձ լավ խնամում են, հետեւում են, կերակրում են և  
այլն։ Այժմ յես համարյա առողջ եմ»։

Շչորսի յերկաթե որդանիզմի մասին բժիշկները հաղիվ թե  
խոսեյին։ «Բերդիչովյան կոշմարի» ժամանակ նա սուր կոլիտ  
(հաստ աղիքի բորբոքում) ստացավ, և թոքերում յեղած պրո-  
ցեսից հյուծված նրա որդանիզմը դժվարությամբ եր ուայքարում  
նոր հիվանդության դեմ։ Ահա Բերդիչովի կայազորային բժշկի  
վկայությունը, վորն այդ որերը բժշկում եր Շչորսին։

«Սուր կոլիտ ստացած լինելով և շատ բարձր ջերմաստիճան  
ունենալով, նա չափազանց ծանր դրության մեջ եր, անասելի  
կերպով տանջվում եր վորի կերմարդկային ցալից։ Յես ատզել  
եյի նրա կայունության վրա։ Զնայած իր սարսափելի ասրում-  
ներին՝ նա հանգիստ, հաստատակամ, պարզ կերպով եր հրա-  
ժաններ տալիս»։

Այդ որերը Շչորսը պառկած եր իր շտարի վազոնում, շատ  
կարդում եր։ Ընկերների, իրեն բժշկող բժշկի հետ ունեցած  
զրույններում նա բազմիցս վերապանում եր կրթությունը շտ-  
րույնակելու վերաբերյալ իր նվիրական մտքին։ Բայց յեթե դեռ  
մի տարի առաջ Շչորսը յերազում եր համալսարանի մասին, ապա  
այժմ նա արդեն հաստատ վճռել եր քաղաքացիական պատերազմը  
վերջանալուց հետո ընդունվել ուղմական ակադեմիան։ Այժմ  
Շչորսի բոլոր յերազանքները կապված եյին կարմիր Բանակի

հետ։ Կարմիր Բանակի ապագայի մասին այդ խոսքի տեսակետից  
Ժլատ մարդը վարակիչ հափշտակությամբ եր խոսում։ Կարմիր  
Բանակից դուրս կյանք ու աշխատանք նա արդեն իրեն չեր պատ-  
կերացնում։

Եերդիչովի ու կորոստենի մոտ ջախջախվելուց հետո պետ-  
առուրականների դիմադրությունը թուլացավ։ Ապրիլի 15-ին վե-  
րակազմված և 3 բանակի վերածված ուկրաինական խորհրդային  
զորքերն արագորեն շարժվում եյին դեպի արևմուտք։ Առաջին  
բանակի կարմիր գնդերը, մի բանակ, վորի կազմի մեջ եյին  
մտցրել Շչորսի գիվլիղիան, արդեն կանգնած եյին Գալիցիայի  
շեմքին։ Մարտական լարումը թուլացավ։ Ոգտվելով այս բանից,  
Շչորսը մեծ կազմակերպական աշխատանք եր տանում։ Ապրիլի  
վերջին նա սկսեց իր գնդերը ծավալել և բրիդադների վերածել։  
Ժիտոմիրում, վորտեղ տեղավորվել եր դեպիղիայի շտարը,  
կազմակերպվում եր Բոգունի անվան բրիդադը, Նովոռազդ-Վո-  
լինսկում՝ Տարաշչայի բրիդադը։

\*\*\*

Հիվանդությունից հետո գեռ բոլորովին չկազդուրված  
Շչորսն ապրում և աշխատում եր շտարի վաղոնում, վորը կանգ-  
նած եր ժիտոմիր կայարանի պահեստի ուղիներում։ Այդ յերկ-  
րորդ կարգի սովորական վագոն եր, ճակատներում բավական  
մաշված, չորս տեղանի կուտեներով, վորոնցից մեկը զրադեցնում  
եր Շչորսը։ Մայիսյան որերից մեկում Շչորսի մոտ յեկավ իր  
կինը՝ ֆրումա Ռոստովին։ Հենց նույն որն ել պարետը Շչորսին  
զեկուցեց, վոր նրան հատկացված ե կայարանի մոտ չորս սենյա-  
կից բաղկացած բնակարան։ Շչորսը քըքուաց։

— Ի՞նչ, ի՞նչ։ Մեկ ել կըկնիր։

— Դիվիզիայի ընկեր Հրամանատարին հատկացված ե բնա-  
կարան, վորովհետեւ նա այժմ՝ կարծես թե ընտանիքավորի նման  
ժի բան ե։

— Լսո՞ւմ ես, Ֆրումա, — բացականչեց Շչորսը։ — Բեղ պետք  
կինի չուտով այստեղից փախչել, ապա թե վոչ սրանք իմ հոգին  
կհանեն։

Մակայն Շչորսի բարեկամները, վորոնք վորոշել եյին նրան,  
ինչ գնով ուղում ե լինի, համոզել, վորպեսի նա մարդկային

պայմաններում ասլրի թեկուղ մի քանի որով, քանի դեռ այդ  
հնարավորությունը կա, վերջիվերջո իրենց ասածն արին: Շչորսը  
տեղափոխվեց իրեն հատկացված բնակարանը, բայց գրավեց  
միայն յերկու սենյակ, իսկ մյուս յերկուսը տվեց մի ընտանիքա-  
վոր յերկաթուղայինի:

Յերեկոները Շչորսի մոտ յերբեմն հավաքվում եյին ընկեր  
հրամանատարները: Մի անդամ նրանք հայտնիցին խնձորի,  
թխվածքի, կոնֆետի փաթեթներով:

— Վո՞ց վոր յես տեսնում ՞Ի՞՞ դուք վորոշել եք կարդին  
խնձույք սարքել, — ծիծաղեց Շչորսը: — Չեմ առարկում, քեզ,  
Ֆրումա, պետք կլինի վորոշ ժամանակ տնտեսությամբ զրադվել:

Հրամանատարներից մեկը Ռոստովայի ականջին ինչ վոր բան  
չշնչաց, նա ել գլխով համաձայնության նշան արավ: Շչորսը,  
վորն իսկույն հասկացել եր բանի եյությունը, հանաքով մտրա-  
կով սպառնաց:

— Մի-մի ոյումկա (գալաթ) պորտվեյն կարելի յեր, — նկա-  
տեց հրամանատարը:

Ատլետի կազմվածք ունեցող այդ մարդը, վորը միշտ վորոտ-  
ընդուռ բասով եր խոսում, այդ այնքան կամաց և յերկշոտ կեր-  
պով ասաց, վոր բոլորը ծիծաղեց փոթկացին: Բանն այն է, վոր  
ներկա յեղողներից մի քանիսն արդեն լավ տուժել եյին Շչորսից  
դինու համար: Շչորսը հատուկ հրաման եր արձակել, վորով  
խստիվ արդերկում եր ալկոհոլի դործածությունը դիվիդիայում:

Նկատելով, վոր, չդիտես վորտեղից, մի շեշ գինի յերկան  
յեկամ, և սեղանի վրա արդեն շարված են փոքրիկ ոյումկաներ,  
Շչորսը ձեռքով հուսահատական նշան արավ.

— Սատանան ձեղ հետ, — ծիծաղեց նա, — այսոր մեկական  
ոյումկա թույլ եմ տալիս:

— Բայց դու մի վախենա, նիկոլայ, մենք քեզ չենք տա, —  
ծիծաղերով ասաց Ռոստովան:

— Վո՞չ, ներողություն կանես, յեթե դու ել նրանց հետ ես  
միացել, յես ել վշտից կխմեմ:

Շչորսն այնպիսի մոռայլ դեմք ձեացրեց, վոր բոլորը նորից  
իփոթկացին:

Մի ոյումկա պորտվեյն վերցնելով, Շչորսը այն հոտոտեց,  
մի կում խմեց և զգվանքից յերեսը ծոմռելով՝ սեղանի մոտից  
զուրս ցատկեց և սկսեց թքել:

— Զե՞, դուք այդ զզվելի և անպետք բանը խմեցեք, իսկ յես  
կաթ կխմեմ... Ֆրումա, մի աման կաթ տո՛ւը այս թույնի վրա-  
յից խմելու:

Շչորսն, ինչքան ասես, կաթ կարող Եր խմել: Ֆրուման նրա  
առաջ մի բավական մեծ ամանով կաթ գրեց, և նա բաժակ-բաժա-  
կի հետեւից խմում եր, բավականությունից շրթունքները լիզում  
և ինքն իրեն ասում:

— Խմեցե՞ք, Նիկոլայ Ալեքսանդրովիչ, կաթը, խմեցե՞ք,  
հարյուր տարի կարեք և մի այդքան ել, յեթե ավելի շուտ  
չմեռնեք:

Շուտով Ռոստովան գնաց: Շչորսը, վոր հիվանդությունից  
հետո արդեն կազզուրվել եր, թարմացել եր, յեռանդը նրա մեջ  
աղբյուրի նման հորդում եր: Դիվիդիայի ճակատը շարունակ  
լայնանում եր, գնդերը հարյուրավոր կիլոմետրեր իրարից հեռա-  
նում եյին, և Շչորսն իր վագոնից տեղափոխվելով մարդատաք  
մեքենան՝ շաբաթներով շտաբում չեր լինում, հրամաններ արձա-  
կելով, այդ շտաբի հետ կապվելով հեռախոսով, ուղիղ հե-  
ռադրաթելով:

## ԿԱՐՄԻՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ

Հարձակվելու Շչորսի դիվիզիայի գնդերը շարունակ իրենց մեջ եյին առնում մեր կողմն անցած պետլյուրական զինվորներին։ Դրանք մեծ մասամբ Պետլյուրայի կողմից խարխած խավարժարդիկ եյին՝ զյուղացիության ամենից քիչ կուլտուրական խավերից։ Սակայն այդ զինվորների մեջ քիչ չեյին նաև դիտակցորեն մեզ ուղարկված մարդկեր, վորոնք ճարպիորեն ողտագործում եյին դեռ կարմիր-բանակային գալորց չանցած մարտիկների կուլտուրական ու քաղաքական ցած մակարդակը։

Ինչպես մենք արդեն տեսանք, իր առաջին գունդը կազմակերպելով՝ Շչորսը կատարում եր կամավորների շատ խիստ ընտրություն։ Նրանցից շատերին, վորոնք չեյին բավարարում նրա խիստ պահանջներին, նա յետ եր ուղարկում։ Բայց լինելով մի դիվիզիայի հրամանատար, վորը ցրված է հարյուրավոր կիլոմետր տարածության վրա, Շչորսն իհարկե հնարավորություն չուներ անձամբ սուսպելու գունդ յեկող ամեն մի զինվորի։ Այդ գործը պետք եր լինում վատահել գնդի հրամանատարներին, իսկ նրանք ել վոչ բոլորն ունեյին Շչորսի աշալրջությունը մարդկանց նկատմամբ։ Զորամասերի մի քանի հրամանատարներ պետլյուրական փախստակներին ընդունում եյին առանց ուշադիր ընտրության։ Այս տեսակետից գործն առանձնապես անհաջող եր նեժինի զնդում, վորը զեռ վերջերս գումարտակ եր, իսկ այժմ իր թվով գերազանցում եր դիվիզիայի բոլոր գնդերը։ Այդ գունդն ուներ արդեն 4 հազար մարտիկ։ Դրանք մեծ մասամբ նախկին պետլյուրական-իհախստակներ եյին, վորոնք գնդի մեջ եյին ընդունվում ամբողջ վաշտերով։ Պատահական չեր, վոր առարխիական բռնկումները նեժինցիների մեջ առանձնապես հա-

ճախ եյին պատահում, մի հանդամանք, վորը Շչորսին ստիպեց, ինչպես հետո կտեսնենք, խիստ միջոցներ ձեռք առնելու։ Սակայն խստորեն պատճելով դիսցիպլինայի խախտման, թալանի, անտիսեմիտիզմի համար, Շչորսը շատ լավ հասկանում եր, վոր միայն պատիժները գործին չեն ոդնի, յեթե նա իր զորամասերի հրամանատարական կազմը չամրացնի վատահելի կադրերով, վորոնք ընդունակ լինեն սահմանարելու անարխիական տարեքը, պաշտոններու գնդերն այդ տարեքի քայլքայիչ ալիքներից, վորոնք գալիս են թշնամու բանակից։ Ամեն անդամ պարտիզանականությունը բանկելիս, Շչորսի ուշադրությունը դառնում էր համարական կազման կազմական կատարելու վրա, վորպիսի կաղըրերը բոլոր զորամասերում ել պակասում եյին և վորոնք իրենց ուղղմական և քաղաքական պատրաստականությամբ նրա պահանջներին չեյին համապատասխանում։ Պրոլետարական հեղափոխության գործին նվիրված հրամանատարական կազմին Շչորսը վճռական նշանակություն եր տալիս։

Մի անդամ հունիսի սկզբներին, այս առթիվ զրուցելով քաղաքամի աշխատողների հետ, Շչորսն ասաց.

— Ապասել, վոր մեզ մարդկել կուղարկեն, չի կարելի։ Մենք ինքներս այդ մարդկանց պիտի պատրաստենք։

Յեկ նա առաջին անդամ արտահայտեց այն միտքը, վորի մասին, ըստ յերեսությին, վաղուց և համառ կերպով մտածում եր։

— Հարկավոր և դիվիզիայում ստեղծել կարմիր հրամանատարների սեփական գպրոց։ Կյանքը ցույց է տալիս, վոր յես առանց այդպիսի գպրոցի չեմ կարող կառավարուել։ Յես չեմ կարող մարդկանց կանոնավոր զորամասի կարգ ու կանոն սովորեցնել, յեթե չունենամ պատրաստված կրտսեր և միջին հրամակմ։

Մեկը նկատեց, թե դիվիզիան իր ուժերով հաղիվ թե կարողանա այդպիսի գպրոց ստեղծել։ Շչորսը խստիվ ընդհատեց.

— Յեթե մյուսները չեն հասկանում, թե անդործությունը հանցագործություն է հեղափոխության առաջ, ապա մեզ չարժեն որինակին հետեւել։ Յես վորոշել եմ գպրոց ստեղծել և, ուրեմն կստեղծեմ։

Մյուս որն եեթ աշխատանքը յեռաց։ Շչորսը յերբեք միտքը

չեր արտահայտում՝ նախքան վերջնականապես կհամոզվեր, թե այդ միտքը ճիշտ է, թե այդ միտքը կարող է և պետք է կենացործվի: Բայց յեթե նա վորոշում եր ընդունում, ապա այդ վորոշման կենսագործմանը ձեռնամուխ եր լինում իսկույն:

Վորոշելով ստեղծել կարմիր հրամանատարների սեփական դպրոց՝ նա այդ գործով տարվեց իր դյուրաբորբոք խառնվածքի ամբողջ ուժով: Այդ գործը Շչորսի համար պատահական չեղ. այդ գործը կապված եր աշխարհիս ամենահզոր բանակը՝ Բանվորաց-դյուրացիական կարմիր Բանակ ստեղծելու նրա նվիրական ժամկերի հետ: Դեռ գերմանական ոկուղանտների դեմ մղած պարտիզանական իր պայքարի ժամանակամիջոցում, յերբ խորհրդային յերկիրը Ենինի-Ստալինի կուսակցության դեկտվարությամբ դեռ նոր եր ձեռնամուխ յեղել կարմիր Բանակի շինարարությանը, Շչորսը հասկանում եր, թե վո՛րքան հարկավոր կլինեն այդ բանակին կուսակցությանը նվիրված հրամանատարական կաղըեր: Յեվ պատահական չե, վոր Շչորսի լավագույն ուղականներն առաջին խորհրդային ուկրաինական գնդի կազմակերպման ժամանակ դարձան ապստամբ մասսաների միջից նրա առաջ քաշած հրամանատարները: Զեռնամուխ լինելով դիվիզիոնի դպրոցի ստեղծմանը, Շչորսը կանչեց փորձված շարային հրամանատարներից մեկին: Նրանց միջև տեղի ունեցավ հետեւյալ բնուական կուսակցությունը:

Շչորս. — Դու գիտե՞ս տղաների թերությունները:

Հրամանատար (մտածելով). — Իմ կարծիքով՝ վաս են կրակում:

Շչորս. — Ճիշտ է, բայց բանն այդ չե միայն: Յես ուզում եմ ստեղծել կարմիր հրամանատարների դպրոց, մեզ հարկավոր են մարդիկ, վորոնք գիտեն վո՛չ միայն լավ կուլել, այլև մարտիկներին կոմունիստական վոգով դաստիարակել: Դպրոցը պիտի իմ պարծանքը լինի: Մենք դեռ ունենք չզգեստավորված, վոտնաման չհագած մարտիկներ: Դպրոցը պետք է ցույց տա, թե ինչպիսի բանակ կլինի շուտով կարմիր Բանակը: Յես ուզում եմ, վոր բուրժուազիայի բերանը բաց մնա, յերբ իմ կուսանաները կմեն փողոցներով քայլել:

Հրամանատար. — Հասկանալի յե:

Շչորս. — Դու կոմունիստ ես, չե՞:

Հրամանատար. — Այո՛:

Շչորս. — Իսկ ի՞նչպես կակաս կու այդ գործով զբաղվել, յեթե յես քեզ հանձնարարեմ դպրոցի համար մարդիկ ընտրել:

Հրամանատար. — Ակներեաբար պետք ե հրաման տալ, վորպեպի մարդիկ ջոկեն, և մարդկանց կջոկեն:

Շչորս. — Վո՛չ մի հրաման: Ինքդ վիճակի՞ր:

Յեվ Շչորսը հենց ինքն ել սկսեց թվել, թե ում պետք ե ընդունել դպրոց: Նա զեմքից ճանաչում եր իր դիվիզիոնի գորամասերի վոչ միայն հրամանատարներին, այլև հին մարտիկների մեծ մասին: Գիտեր յուրաքանչյուրի թերություններն ու առավելությունները:

Հունիսի 6-ին Ժիտոմիրի «Վոլինի կոմունիստ» լրագրում ծանուցում յեղալ, վոր առաջին ուկրաինական դիվիզիոնում բացվում ե կարմիր հրամանատարների դպրոց: Ծանուցման մեջ մատնանշվում եր, վոր դպրոց «ընդունվում են կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության անդամները, համակրողները և առհասարակ խորհրդային իշխանության նվիրված մարդիկ կուսակցական և բանվորական կազմակերպությունների, խորհուրդների, գնդի կոմիսարների կամ կոմունիստական կուսակցության յերկու անդամների համապատասխան հանձնարարականներով, այնպիսի անդամների, վորոնք կուսակցության մեջ են առնվազն վեց ամիս: Այս պայմանը պարտադիր ե նաև զորամասերից գործուղվող կարմիր-բանակայինների համար»:

Ժիտոմիրի նախկին թեմական դպրոցի հին շենքը, վորը հատկացվել եր կարմիր հրամանատարների դպրոցին, վերանորոգվեց: Շչորսը խորամուխ եր լինում բոլոր մանրունքներին: Նա պահանջում եր, վոր կուսանաների համար արվի այն ամենը, ինչ հասրավոր է: Նրա հրամանով Ժիտոմիրի խոչըր տնատերերը պարտավոր եին մեկ որվա ընթացքում դպրոց ներկայացնել նրան հարկավոր սարքավորումը: Քաղաքում սկավել եր անսովոր աշխուժություն. բոլոր կառապաններն զբաղված եյին մահճակալների, ներքնակների, վերմակների, սպիտակեղենի փոխարժությամբ: Կուրսանտների հանրակացարանը սարքավորված եր այն ժամանակացարանը համար զարմանալի խնամքով: Դոլրոցի ակումբը զարդարված եր կանաչով, փափուկ կահ-կարասիքով, գորգերով:

Տաս որ անց այն որից, յերք Շչորսը վորոշեց դպրոց ստեղծել հրապարակում քաղաքային թատրոնի դիմաց շարվել եյին 300 կուրսանունու նոր գդեստավորումով, սալառնորդական դլսարկներով: Շչորսը, վորը յեկել եր չնորհավորելու կուրսանուների ուսման սկզբը, նրանց տեսաքից գոհ մնաց: Այդ որը նա շատ աշխույժ եր, տոնական տրամադրությամբ եր համակված:

Դպրոցում ուղմական և քաղաքական ուսուցումն սկսվեց Շչորսի իր կողմից մշակած ծրագրով: Կուրսանուներն ամեն որ դուրս եյին գալիս դաշտ հրաձգային և տակտիկական զբաղմունքների համար: Սոլորաբար դաշտ եյին դնում և յետ եյին գալիս նվազախմբի ուղեկցությամբ: Անցորդների խմբերը դպրոցի վաշտերն ուղեկցում եյին և հիանում եյին Շչորսի սաների կեցվածքով, հաստատուն և հստակ քայլով: Քաղաքի բոլոր բնակչության կուրսանուների սիրած յերդը՝

„Կрасное знамя собой означает

Идею рабочего люда...“\*

Շչորսը զարմանալի սիրով եր վերաբերվում դեպի դպրոցը, նա դպրոցին եր նվիրում մարտական աշխատանքից աղան ամբողջ ժամանակը: Մարտական ճակատամասից վերադառնալով՝ նա սովորաբար ամենից առաջ մտնում եր դպրոցը: Հաճախ այդ վնում եր գիշերը: Վոտի մատների վրա, անաղմուկ քայլելով, նա անցնում եր մահճականների չարքերի մոտից, կանգ եր առնում, վոր ուղղի ընկած վերմակը, և շատ անդամ ականջ եր դնում վորեկ կուրսանուի անհամաշափ չնչառությանը: Յեկ այն ժամանակ վո՞րքան ընկերական հոգատարություն և ջերմություն եր զգացվում Շչորսի խիստ և թուխ աչքերում: Բայց յեթե Շչորսը նկատում եր վորեկ անկարգություն, թեկուզ պահարանի վրա վատ դասավորված գդեստ, չեր կարելի սպասել, վոր մեղավորն անպատիժ կմնա:

Որապահն խկույն հրաման եր ստանում Շչորսի նկատած անկարգության մասին զեկուցելու դասակի հրամանատարին: «Ենր խստանիրտ ու սիրալիր Շչորսը», հպարտությամբ ու սիրով առում եյին նրա մասին կուրսանանները:

\*) «Արմիր գրոցը նշանակում և

Բանվոր մարդկանց գաղափարը...»

Մի անգամ Շչորսը մեկնեց մարտական ճակատամաս և յերեք որ նրա մասին վոչ մի լուր չկար: Ամբողջ դպրոցը վոտքի յելավ: Կուրսանուները խմբերով վնասուելու դուրս յեկան: Կարելի յեր յերկուուզ կրել, թե Շչորսը կարող է ընկած լինել ժիտոմիրի ուսյունում գործող բանդաներից մեկի ձեռքը: Իսկապես այդպես ել պատահել եր: Բայց մեքենայով գնացող Շչորսը հրաձգությամբ պաշտպանվելով կարողացել եր խույս տալ: Շոփերը մեքենային հնարավոր չափով մեծ արագություն եր հաղորդել: Կուրսանուները գիշիվայի իրենց հրամանատարին դիմավորեցին, յերբ նա, փոշուց սկացած, արդեն վտանգից զերծ եր:

— Ընկերներ, մեր մեջ զառան մորթով գայլ կա, — կուրսանուներին հավաքելով ասաց Շչորսը: — Բանդիխները գիտեն այն ամենը, ինչ վոր մեղ մոտ կատարվում է: Գեռ քաղաքից նոր դուրս յեկած՝ քեզ արդեն դնդակութում են: Հարկավոր է հետեւ, թե այդ ո՛վ է, և առհասարակ գդույշ և աչալուրջ յեղեք:

Մի քանի որից հետո դաշնանը մերկացվեց: Դուրս յեկավ, վոր դա մի նախկին յունկեր է, վորը ճարպկորեն մինչև այժմ թագցնում եր իր խկական գեմքը: Նա կապ ուներ մի լրտեսի հետ, վորը ցարական բանակի կապիտան եր և քաղաքում աշխատում եր վորպես թե ղոնազան:

Հաճախ կուրսանուներն ստիպված եյին լինում տաքնապի ժամանակ դպրոցի սեղանները թողնել և վարժական փամփուշտները մարտական փամփուշտների փոխել: Սոկոլովսկու, Կոլեսնիչենկոյի և կուլակային այլ պարագլուխների գեմ մղած պայքարում կուրսանուները Շչորսի զեկալարությամբ անց եյին կացնում իրենց տակտիկական պարագմունքները: Նրանք ասում եյին: «Շչորսին մենք գննություն ենք տալիս մարտի ժամանակ»: Պատահում եր, վոր դպրոցը բանդիխների գեմ ուղարկելով՝ Շչորսը թագուն հետեւում եր նրան ձիով կամ ավտոյով, հեռվից դիտելով նրա գործողությունները: Բայց վճռական մոմենտին նա միշտ անսպասելի կերպով հայտնվում եր շղթայում և կուրսանուներին գրոհի յեր գրավում:

Մի կոլից հետո Շչորսը գերի վերցրածներից մի քանի մարդ առանձնացրեց և հրամայեց նրանց վարպետ:

— Ընդունեցե՞ք նրանց վորպես հյուրեր, — ասաց Շչորսը: ինչպես հարկին են նրանց բացատրեցե՞ք, թե ինչի համար են պայ-

քարում բոլէկիկները, ապա թողեք դնան տուն։ Դրանք չքալոր դյուղցիներ են, վորոնք իրենց խավարամտության հետևանքով են բանդա ընկել։

Քերիները գպրոցում ապրեցին հինգ որ։ Ամեն որ նրանց հետ քաղաքապմունքներ ելին անցկացվում։ Այդ պարապմունքներից ժեկը ղեկավարում եր ինքը Շչորս։

— Ձեր համազյուղացիներին պատմեցեք, թե ինչ եք լսել և տեսել մեղ մոտ, — ասաց նա գերիներին հրաժեշտ տալիս։

Պարտիզանական անարխիական տարերի դեմ մղած պայքարում դպրոցի կուրսանտները Շչորսի ամենահուսալի հենարանն էին։ Յերբ նեժինի գունդը, վորը Պետլյուրայի գործակալները վերջնականապես կազմալուծել ելին, հրաժարվեց կատարել հրաժանատարության հրամանը, Շչորսը նրան հանեց մարտական ճակատամասից և կանչեց Ժիտոմիր։ Այդ դնդի գումարտակներից ժեկին, վորն առաջինն եր քաղաք յեկել, դիմավորեց Շչորսը շիվիղիայի կարմիր հրամանատարների դպրոցի մի դասակի դրուխն անցած։ Նեժինցիների գումարտակները շարվեց։ Նրա դիմացը շարվեց դպրոցի դասակը։

— Զենքը վայր դրե՞ք, — հրամայեց Շչորսը գումարտակին։ Նեժինցիները հրամանը կատարեցին։ Շչորսն անցավ ճակատի յերկայնքով, լուսության մեջ սակած շարքերի մոտով։ Նա դանդաղ եր գուում։ Մի քանի կարմիր-բանակայիններ շփոթված՝ յերեսները թեքում ելին դիվիղիայի հրամանատարից, վորը սկսուն հայացքով, ուշադրությամբ և չոր-չոր նայում եր նրանց յերեսին։

— Այս ի՞նչ բան ե, — հանկարծ բարձրածայն ասաց Շչորսը՝ ցույց տալով նեժինցիներից մեկի դեւրս ցցված գրպանը։

Նա չեր շարժվում։ Շչորսն ինքը նրա դրպանից հանեց կանացի արծաթե մի պայտուսակ և գումարտակին ցույց տալով՝ այն՝ հարցըց։

— Կարո՞ղ ե արդյոք այս մարդը մեր շարքերում լինել։

— Վո՞չ, — խուլ կերպով պատասխանեց գումարտակը։

Թալանչին հենց տեղն ու տեղը գնդակահարվեց։ Նեժինի գնդի մնացած գումարտակները, իմանալով Ժիտոմիրում պատահածի մասին, եւելոններից բեռնաթափվեցին քաղաքից

20 կելումետր հեռավորության վրա և հրաժարվեցին Շչորսին յենթարկվելու։

Շչորսն ուղեռորդեց նրանց մոտ՝ մի վաշտ կուրսանտների գլուխն անցած։ Հանդիպումը տեղի ունեցավ Ժիտոմիրից մի քանի կիլոմետր հեռավորության վրա։ Կուրսանտները բացազատված ճակատով շարվեցին նեժինցիների խառնաշփոթ կույտի վերածված գումարտակների դիմաց։ Շչորսն առաջ անցավ և խոռվարներին հրամայեց զենքը վայր դնել։ Նեժինցիներն սկսեցին ազմկել։ Մի քանի մարդ Շչորսին նշան բռնեցին։ Նա մոտ յեկալ, աչքերը սևեռեց նրանց վրա և ասաց։

— Հապա, ինչո՞ւ չեք կրակում։

Վոչվոք սիրա չեր անում։ Մեկը, վոր նոնակը բարձրացրել եր խփելու համար, հանդիպելով Շչորսի բաց, հանդիստ հայացքին, ձեռքը իջեցրեց։

— Հաշվում եմ մինչեւ յերեքը, — ասաց այն ժամանակ Շչորսը և կուրսանտներին հրամայեց զնդացիրները պատրաստել։

Շչորսը համրում եր արագ՝ մեկ, յերկու, յերեք։ Յերեք հաշվելիս նեժինցիներն սկսեցին զենքը վայր դնել։ Մի քանի որից հետո Շչորսն ուղիղ հեռավրաթերով զեկուցում եր բանակի հրաժանատարին։


«Յես զինաթափ արի նեժինի գունդը, առաջինը — վերցրեց վեղած ամբողջ զենքը մինչեւ վերջին փամփուշտը։ յերկրորդը — վերցրեց բոլոր փաստաթղթերը։ յերրորդը — բոլոր ապաշարայիններին ու հրամանատարական կազմը ջոկեցի, ջոկեցի բոլոր բանովիներին և կառկածելիներին։ չորրորդը — մյուս բոլորին փողոցում յերկտողան շարեցի, «զգաստ» հրամանը տվեցի և սկսեցի հաշվել ըստ դասակների, ջոկերի, վաշտում լրիվ 120-ական մարդեկումարտակում 360-ական։ Այստեղ ել հենց բոլորին ցուցակափրել տվի և խմբավորեցի ըստ հասակի։ Այսպիսով յես ունեմ մի կանոնավոր գունդ՝ շտատով հատկացված գումարտակով, մարդկանցով և ձիերով, վորը պարապում ե խորհրդային կարմիր Բանակի կանոնադրության բոլոր կանոնների համաձայն։

Կարգը և մաքրությունը իդեալական են։ Հրամանների կատարումը՝ առանց առարկությունների»։

## ԹԵՎԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ ՊՐՈՍԿՈՒՐՈՎԻՆ

Դիվլիպիայի գոլրոցը կազմակերպելու ժամանակաշրջանը միաժամանակ Շչորսի մարտահան գործունեյության ամենալարված ժամանակամիջոցներից մեկն է յեղել: Պետլյուրան ինտերվենտների ողնությամբ Գալիցիայում սեչելիների իր դնդերը կարգի բերեց և այդ գնդերը հարվաքելով ու մի բուռնցք դարձնելով՝ հունիսի սկզբներին ճեղքեց կարմիր Փրոնտը Պրոսկուրովի ուղղությամբ: Պետլյուրականներն արագ չարժվում եյին գեղի Ժմերինկա: Շչորսն առաջարանք և ստանում ճեղքվածքին վերջ տալ թևային հարվածով գեղի Պրոսկուրով: Նրա գնդերն այդ ժամանակ ցրված եյին ճակատում մոտավորապես 200 կիլոմետր տարածության վրա: Աջ թևում նովգորոդ-սևերցիները դիվլիպիան պաշտպանում եյին սպիտակ լեհերից: Տարաշչայի բրիդադը կանգնած եր Գալիցիայի սահմանում Ռաձիվիլովի և Կրեմենեցի ռայոնում: Զախ թևը գրավում եր Բողունի անվան բրիդադը, վոր նոր եր Եշելոններից իջել և գործում եր Ստարոկոնստանտինովի ուղղությամբ:

Թևային հարված պատրաստելով՝ Շչորսը հունիսի 8-ին Թաձիվիլով-Վերբի ճակատամասից վերցնում և Տարաշչայի առաջին գունդը, Դուբնո-Զդոլբունովոյի վրայով գեղի Ռոտրոդ, Կունե և ուղղում ե գեղի Լյախովցի, Յամպոլ: Տարաշչայի յերկրորդ գունդը Կրեմենեցից խփում ե Կատերուրդի վրայով Լանովցիի ուղղությամբ: Բողունի անվան բրիդադը հարձակվում ե Ստարոկոնստանտինովի և Բազալիայի վրա: Այսպիսով պետլյուրականներին, վթրոնք գրավել եյին Ստարոկոնստանտինով-Պրոսկուրովի ռայոնը, Շչորսը հարված եր հասցնում յերեք կողմից: Վճռական ուղղությունը Ստարոկոնստանտինովի ուղ-



Ցենտա 5. Շչորսի դիվլիպիայի թևային հարվածը  
Պրոսկուրովի ուղղությամբ: 1910 թ. հունիս:

զությունն եր, վորակը բողոքիները պետք ե ճեղքելին անցնելին Սլուչ գետը:

\*\*\*

Բողոքինի անվան Յ-րդ գունդը, վորը Շչորսը նոր եր կազմակերպել Ժիտոմիլում, Անտոնինա կայարանում Եջելսից բնուաթափելով՝ հենց նույն տեղում դիրք եր գրավել: Բողոքինի անվան առաջին և յերկրորդ գնդերը, վորոնք ավելի առաջ ելին բնուաթափել, յերկաթուղուց ավելի աջ ելին հարձակվում՝ խնդիր ունենալով կովով անցնել Ալուչ գետը Ստարոկոնստանտինովից արևմուտք: Այսուհետեւ գեղի Բաղալիա գնում ելին նեժինցիները: Հյուսիսից Տեռֆիովովի ուստինն ելին իջնում տարաշացիները: Շչորսի գիլիկիայի հավաքված և մի բուռնցք դարձած զորամասերը պատրաստվում ելին հարված հասցնելու:

Բողոքինի անվան Յ-րդ գունդը, շարժվելով յերկաթուղու պետքով, պետք ե գրոհեր Ստարոկոնստանտինովը գրավող պետյուրականներին ճակատից:

Անտոնինա կայարանի մոտ կարմիր զրահազնացքը հրաձություն եր կատարում Պետյուրայի զրահազնացքի հետ: Արկերը պայթում ելին սեմաֆորի մոտ: Վրա յեր հասնում քաղաքի համար մղվելիք մարտի գիշերը: Թշնամու գործակալները կարմիրքանակայինների մեջ լուր ելին տարածել, թե Պետյուրան Ստարոկոնստանտինովի մոտ յերկու կորսուս ընտիր գորքեր ե կենտրոնացրել: և վոր կարմիրներն այս գիշեր կըրջապատվեն և կկոտորվեն: Բնուունի անվան Յ-րդ գնդի կազմում կային բազմաթիվ նախկին պետյուրականներ: Թշնամական լուրերը բարենպատ հող ելին դտել: Խուճապային տրամադրությունն ոկսեց ընդգրկել յերիտասարդ, գեռ մարտերում չկումիւած դունդը: Հրամանատարական կազմը, վորը մեծ մասամբ անկուսակցական եր, գլուխը կորցրել եր: Գնուում միայն ինն կոմունիստ կար: Նրանց դրությունը շատ գժվար եր: Յեվ հանկարծ, կարծես այս նախագուշակելով, մեքենայով գալիս ե Շչորսը:

Նա միշտ գնդերում հայտնվում եր անսպասելիորեն, ամենադժվարին բռպեներին, այսուղ, վորտեղ թշնամու դիմադրությունն ամենից ավելի ուժեղ եր լինում: Նորից, ինչպես կիեվի

վրա հարձակվելիս, նա ինչ-վոր միջոցներով ճակատի վրայով կամ եր հաստատում ընդհատակյա բոլցեկիլյան կազմակերպությունների հետ, վորոնք ապստամբ վաշտեր, գումարտակներ ելին կազմակերպում և նրանք հաճախ մտնում ելին դիմիկայի զորամասերի մեջ և մարտի ժամանակ դրավում ելին նախորոք իրենց ցույց տված ճակատամասերը թերուում:

— Իսկույն և թ հավաքել բոլոր կոմունիստներին, — Հրաժայեց Շչորսը գնդի կոլեկտիվի նախադահին և ավելացրեց.

— Իսկ մի ժամ հետո ել՝ հրամկազմին:

Կայարանի բուժետի չենքում, վորը լուսավորված եր աղուալամպով, հավաքվեց ինն մարդ:

Մտավ Շչորսը:

— Հը՛, վախեցե՞լ եք, — Հարցրեց նա:

Մեկը խուլ ձայնով արձադանքեց.

— Մենք վախկուներ չենք:

— Յես ծիծակում եմ, — ասաց Շչորսը: — Դուք բողոքների եք, իսկ բողոքների, ինչպես յես գիտեմ, հարցնում են վոչթե այն, թե վորքան ե թշնամին, այլ վո՛րտեղ ե նա:

Շչորսը նստեց սեղանի մոտ:

— Հապա, մոտեցե՞ք ինձ: Ով դպրոցական նստարանին նըստած չի յեղել, թող հիմա սովորի... Այո՛, բայց ինչո՞ւ դուք ընդդամենը ինն մարդ եք:

Գնդի կոլեկտիվի նախադահին մի լավ ամոթանք տվեց Շչորսը կուսկազմակերպության թույլ աճման համար:

— Նկատի ունեցե՞ք, յես ձեզ վոչ մի կուսակցական չեմ տաղուք ինքներդ պիտի աճեցնեք: Հատուկ ուշադրություն դարձրե՞ք հրետավորների և գնդացրորդների վրա: Նրանց մեջ մենք շատ բարակորներ ունենք: Յես գիտեմ, վոր դրանք համերաշխ, ամուր տղաներ են:

Շչորսը մանրամասն սկսեց պատմել, թե ինչպես պետք ե անհատական քաղաշխատանք տանել կարմիր-բանակայինների հետ: Բոլորն իսկույն մի տեսակ ուրախացան, բոլորը միանդամից իրենց ավելի վստահ զգացին: Թվում եր, թե դժվարություններն արդեն անցել են:

Շչորսը մի օիրած նախադասություն ուներ. «Մի գրոշ չար-

Հե այն կոմունիստը, վորը մարտիկներին կոմունիստական վոգով չի դաստիարակում»:

— Իսկ այժմ ահա թե ինչ, — ասաց Շչորսը: — Այս գիշեր դուք, իհարկե, չպետք է քննեք: Հարկավոր է խոկույն մարտիկներին բացատրել իրերի դրությունն ու քաղաքական մոմենտը: Նկատի ունեցեք, վոր Ստարոկոնստանտինովում՝ Պետլյուրայի թիկունքում յես արդեն հեղկոմ եմ ստեղծել: Այնտեղ ուզարկվել էն կուսակցության անդամներ: Նրանք պարտիզանական ջոկատներից գումարուակ են կազմակերպում, վորը հենց վոր դուք քաղաք մտաք, ճակատամաս կդրավի մեր աջ թեռում: Թշնամու ուժերն իհարկե չափազանցված են, բայց դաժան կոխվ կլինի... Դուք հարձակվում եք յերկաթուղու ձախ կողմից: Յես ձեղ հետ ևմ: Ուեղերվ ունենք: Հեծելազոր նույնպես շատ ունենք... Կոմիսարը մնում է, իսկ դուք անցե՞ք ձեր տեղերը:

Կայարանի յերրորդ կարդի շենքում հավաքվել եյին կանչ-ըմած հրամանատարները: Շչորսն անցավ նրանց մոտ, իսկ վաշտերում, գումարտակներում բերնե-բերան հաղորդվում եյին նրա խոսքերը:

— Քանի վոր Շչորսը մեղ հետ և՝ Պետլյուրայի բանը բուրդ է, — ուրախացած ասում եյին կարմիր-բանակայինները:

Ռւշ գիշերով յերկինք թուավ հրթիռը: Կոխվն սկսմեց: Շչորսն առաջալոր շղթայի մեջ եր գնում: Առավոտյան քաղաքը վերցվեց: Էնդհատակյա հեղկոմը, վորի մասին ասում եր Շչորսը, իսկապես նոր գումարտակ եր կազմակերպել և այդ գումարտակը գնդի աջ թեռում ճակատամաս դրավեց: Թեև պետլյուրականները Սլուչ գետի այն կողմն եյին անցել, բայց քաղաքի համար դեռ նոր պիտի մարտ սկսվեր: Պրոսկուրովի կողմից Պետլյուրան ուժեղ ոժանդակ ուժեր եր մոտեցնում, իմուլզով շտապում եյին ծանր մարտկոցները: Բողունի անշան առաջին գունդը, վորն առաջ եր անցել, կովով անցավ Սլուչ գետը կրասիլովի և Բաղալիայի միջև, բայց ստիպված յեղալ յետ նահանջել: Յետ նահանջեց նաև բրիդադի 2-րդ գունդը, վորը հարձակվում եր կրասիլովի վրա: Ուժերը հավաքելով՝ պետլյուրականներն անցան հակադրուհի Ստարոկոնստանտինովի վրա: Կարճ դադարից հե-

ոո մեծ մասամբ 6 դուրմանոց 40 հրանոթի կրակը թափվեց 3-րդ գնդի վրա:

Կոհվը տեսց մի քանի օր: Պետլյուրայի հրետանին քաղաքը քար ու քանդ եր անում, ավերել եր կայարանը, ջրհանը, մայր յեկեղեցին: Բողունի անվան յերրորդ դաշտը միայն մի թեթև մարտկոց ուներ: Տեղից-տեղ անցնելով, այդ մարտկոցը յետ եր մղում պետլյուրական հետեակի և հեծելազորի գրոհները, թշնամու վրա կարտեչ կրակելով: Չնայած պետլյուրականների հսկայական թվական գերակշռության, 3-րդ գնդի բողունցիները, վոգեչնչված Շչորսի ներկայությամբ, պինդ եյին կենում:

Գունդը հսկայական կորուստներ եր կրում: Վաշտերից մի քանիսում արգեն մնում եր 30—40 մարտիկ: Հրամանատարական կազմի կեսը շարքից գուրս եր յեկել: Բազմական կոմիսարը սպանվել եր: Գնդի կոնսուլյիա ստացած հրամանատարը վուրքի վքա հազիվ եր կանգնում: Պետլյուրականներն արգեն քաղաք եյին ներխուժել: Կոխվը տեղի յեր ունենում փողոցներում: Գնդի շտարը պաշտպանող զորախումբը պաշտպանվում եր ձեռքի նունակներով:

Քրությունն անհուսալի յեր թվում: Բողունցիների ուժերն սպառվում եյին: Բայց հանկարծ ձախ թեռում վորոտացին «ուռայի» ձայներ: Այդ Շչորսը հակադրուհի յեր տանում չորրորդ՝ ամենից ուժեղ վաշտը: Միաժամանակ գնդի մի քանի տասնյակ թրից բաղկացած հեծյալ հետախուզությունը նրա հրամանով սկսեց շրջանցել պետլյուրականների աջ թեռը: Հետախուզության հետ թեանցում եր կատարում նաև զրահապատ գնացքը: Թշնամին նկատել եր շրջանցի շարժումը: Պետլյուրայի՝ 500 թրից բաղկացած հեծյալ գունդը գրոհի դիմեց: Թվում եր, թե այդ գունդը խոկույն ևեթ կորրի, կվոչնչացնի բողունցի հեծյալների չնչին խումբը, բայց Շչորսի պատրաստած մարտկոցը գործը փրկեց: Կայծակի արագությամբ դուրս թուշելով բաց դիրքեր՝ նա իր կրակով խափանեց Պետլյուրայի հեծելազորի լավան: Նրա մնացորդները թագնվեցին բլուրների հետեւ:

Այդ ժամանակ առաջին գնդի բողունցիները նորից կովով անցան Սլուչ գետը, գրավեցին կրասիլով ավանը, վորը գտնվում եր 25 կիլոմետր հեռավորության վրա Ստարոկոնստանտինովից:

Պետլյուրականները, յերկյուղ կրելով շրջապատռումից, սկսեցին  
արագ կերպով նահանջել Բուժով գետի այն կողմը: Շչորսը դար-  
գացնում եր Պրոսկուրովի դեմ ուղղված թևային հարվածը: Տա-  
րաշացինները դուրս դարձի Կուտել ավանի ուայոնը՝ հարձակվում  
եյին Զորնի Աստրովի վրայով, բողունցինները՝ Զապաղինցայի  
վրայով: Հավաքելով Պրոսկուրովի մոտ իր բուրու ուժերը, Պետ-  
լյուրան մի քանի անգամ հակադրուհների միջոցով փորձում եր  
յետ մղել Շչորսի հարվածները, սակայն հունիսի վերջերին բո-  
գունցինները գրավեցին Պրոսկուրովը: Պետլյուրայի ջախչախած  
բանդանները նորից յետ դարձան Դալիցիա:

### ԻՆՍՊԵԿՑԻԱՅԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ

Վագոնից դուրս չեկող պետլյուրական գիրեկտորիայի իշխա-  
նության տակ մնում եր ուկրաինական հողի միայն մի փոքր կտոր  
Կամենեց-Պուլուկի ուայոնում: Բողունցիններն ու տարաշացինները  
ծիծաղում եյին, թէ «Վագոնում գիրեկտորիան ե, իսկ վագոնի  
տակ՝ տերիստորիան»:

Շչորսի գիվելիան փայլուն կերպով կատարեց իր առաջ դըր-  
ված մարտական խնդիրները: Սակայն բանակի շտաբում մի քանի  
ուազմական մասնագետներ հանկարծ սկսեցին լուրեր տարածել,  
թէ Շչորսը հաշվի չի առնում բարձրագույն հրամանատարության  
ողերատիվ պլանները, պարտիզանալարի յե դործում և այն:  
Շչորսին հաղվածյուտ գեղքում կարելի յեր հուզված տեսնել,  
բայց այսպիսի խոսակցությունները նրան համբերությունից հա-  
նում եյին: Մի անգամ նա ուղիղ հեռագրաթելով բանակի հրա-  
մանատարին կանչեց և նրան հայտարարեց.

— Ընկե՛ր հրամանատար, չգիտեմ թէ դուք ինչ կասեք, բայց  
բանակի շտաբում ինձ բազմիցս պատահել ե լսել, վոր չըլիտեմ  
թէ ինչու՝ գտնում են, թէ յես բանակի հրամանատարությանը  
չեմ յենթարկվում Յես ձեզ հայտարարում եմ, վոր ամենեին  
այլպես չե: Յես վոչ մի պարտիզանականություն թույլ չեմ  
տա: Այդպիսի բանի մեջ նկատված մարդիկ կձերբակալվեն և  
կդիտվեն վորպես պլուզոկատորներ: Անպայման, յեթե յես հեղա-  
փոխության ընդհանուր գործին ընդդիմագրող հրաման ստանայի,  
այդ հրամանը չեյի կատարի, ով ել ինձ հրամայեր, ինչ ել վոր  
ինձ սպառնար այդպիսի հրամանը չկատարելու համար: Բայց այդ  
գեղքում յես կզեկուցեյի այն ինստանցիային, վորից հրամանը  
ստացել եմ: Անդրկուլիսյան ինտրիդներ յես չեմ անում:

Բանակի հրամանաւարը Շչորսին հանդսատացնելով հաղորդեց .

— Այստեղ խոր թյուրիմացություն կա : Բանակի Հեղ . Ռազմ . Խորհուրդը ձեզ համարում է գլխավոր և ամենավասահելի պատվարն արևմուտքում : Քանի դուք արթուն եք՝ մենք հանդիսու ենք : Վոչ մի ժամի մասին խոսք չի կարող լինել :

Սակայն ինչ-վոր մեկը դավեր սարբում եր :

Մի մեղաղբանքը չհաջողլից , ուրիշները սկսեցին տեղայ :

Խոսակցություններ սկսեցին , թե Շչորսի զիվիվայում ոտղմական մասնագետներին շատ դժվար է աշխատելը , վորը Շչորսը նրանց վաճառքում է , անխոտիր բոլորին չի վստահում : Վորքան եր Շչորսն աշխատում եր այդ խոսակցություններին ուշադրություն չդարձնել , բայց և այնպիս դրանք նրան վրդովեցնում , ջղայնացնում ելին :

Ճիշտ ե՞ դեսպեր ելին լինում , յերբ նա յետ եր ուղարկում ցարտկան հին սպաներին , վորոնք դալիս ելին իրենց «գումարտակի հրամանաւարից վոչ ցած» պաշտոնի նշանակելու առաջարկով : Դեպքեր ելին լինում , յերբ նա իր զորամասերն ուղարկելով հրամանաւարական պաշտոնի՝ իր կողմից բավականաչափ չըստուգված ցարական նախկին սպաների , նախազգուշացնում եր գնդի հրամանաւարին ու կոմիսարին , թե «դրան լավ հսկեցե՞ք» : Սակայն այն ուղղմական մասնագետներին , վորոնք ազնվորեն ելին աշխատում , վորոնց նվիրվածությունը նրա մեջ կասկած չեր հարցուցում , Շչորսը վերաբերում եր ընկերաբար , զգայուն կերպով : Սպեցակերության մեղաղբանքները Շչորսի նկատմամբ զրաբարություն ելին : Յեկ Շչորսը զգում եր , թե այդ վորտեղից և դալիս : Հենց այդ ժամանակներն եր , վոր կենտրոնից հաճախակի նրա մոտ ելին դալիս Տրոցկու մանդատներով զինված տեսուշներ , արտաքինից դատելով՝ ցարական նախկին սպաներ : Զգտելով վարկաբեկ Շչորսին և նրա ամենամոտ ողնականներին , նրանք բծախնդրաբար պատրվածներ ելին վորոնում այդ ուղղությամբ : Շչորսը տեսուչներին քաղաքավարի ընդունելով պատասխանում եր նրանց հարցերին , սակայն ամենեին վոչ բոլորին : Յերբ խոսք եր բացվում այնպիսի խնդիրների մասին , վոր Շչորսն տռանձնապես կարեւոր ուղղմական գաղտնիք եր համարում , նա խոսքը փոխում եր ուրիշ թեմայի : Նա բնազդաբար ինչ-վոր անվատահություն եր

տածում այդ մարդկանց նկատմամբ , վորոնք ձականի թիկունքում ճանապարհորդում ելին առանձին վագոններով Տրոցկու մանգամաներով ու լիազորություններով հանդերձ : Շչորսի զգուշությունը ստիպում եր նրանց արագ հրաժեշտ տալ նրան , սիրալիր կերպով վատի խոտին լինելով , կոմպլիմենտներ շռայլելով , հայտարարելով , թե այստեղ նրանք անելու բան չունեն , վոր նրանք կդնան ուղղակի բրիգադները :

Ժիտոմիրում մի այսպիսի դեպք պատահեց :

Մարտական ոպերացիայի նախապատրաստությամբ զբաղված Շչորսը Բերդիչովից՝ ինսպեկցիայից շոգեքարշի պահանջ պարունակող հեռագիր ստացավ :

— Պարզեցե՞ք ինսպեկցիայի կազմը և ինձ գեկուցե՞ք , — հրաժայեց Շչորսն իր շտաբի պետին :

Պարզվեց , վոր ինսպեկցիան գալիս և յերեք մարդատար վագոնով , բազկացած և ցարական 18 նախկին սպաներից՝ Շչորսին հայտնի ցարական նախկին գեներալի գլխավորությամբ :

— Կոմունիստներ կա՞ն , — հարցը Եղ Շչորսը :

— Մեկը , — զեկուցեց շտաբի պետը , վորը Բերդիչովի հետ խոսում եր ուղիղ հեռագրաթելի միջոցով :

Շչորսը ցարականդրություն ծիծաղեց :

— Գեներալին առընթեր մի կոմունիստ : Ի մեջն այլոց այդ նրա քաղաքականությունն է , նա նրանց ավելի յե վստահում , քան մեզ :

Բոլորը գիտելին , վոր «նրա քաղաքականությունն» ասելով Շչորսը հասկանում է Տրոցկու քաղաքականությունը , Տրոցկու վորի անունը նրան ատելի յեր :

— Ի՞նչ անենք , — հարցը շտաբի պետը :

— Հեռագիր ուղարկեցե՞ք , թե «Շոգեքարշերը հարկավոր են ժարտական ոպերացիա կատարելու համար : Ազատ շոգեքարշեր չկան» :

## ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՀԸ

Պրոսկոռումի գրավումից հետո Շչորսի դիվիզիան հասավ գլանիցիական հին սահմանին Վոլոչիսկի մոտ և, Սջափնյա Ուկրաինայից դուրս մղելով պետլյուրականների մնացորդները, հարձակում եր դեպի հարավ՝ կամենեց-Պոդոլսկի վրա։ Հուլիսին բողոքները, տարաշչացիները, նեժինցիները գրավում եյին արդեն Գուսյատին-Ֆրանկոլ-Սոլոդկովցի ճակատը։ Թվում եր, թե Սջափնյա Ուկրաինայում պայքարը մոտենում է հաղթական վախճանին։ Մինչդեռ վճռողական դոտեմարտը դեռ նոր պիտի տեղի ունենար։ Սկզբում եր Անտանտի յերկրորդ արշավանքը ելորդութների յերկրի դեմ։ Դենիկինը տիրել եր Խարկովին և հայտարարել եր վճռական հարձակում՝ «վերջնական նպատակ ունենալով Ուստաստանի սիրաը—Մոսկվան գրավելը»։ Անինի-Մտալինի կուսակցությունը յերկրի բոլոր ուժերը մորիլիզացիատի յեր յենթարկել դենիկինչչինայի դեմ պայքարելու համար։

Հարավային, վճռողական ճակատում հավաքվում եյին Կարսիր Բանակի լավագույն զորամասերը։ Նշված եր նաև Շչորսի դիվիզիայի տեղափոխումը, այն դիվիզիայի, վորը ուկրաինական ճակատի, հունիսի սկզբներին տեղի ունեցած վերակազմությունից հետո մտել եր 12-րդ Կարմիր Բանակի կազմի մեջ։ Հունիսի 17-ին 12-րդ բանակի հեղափ. ուազմ. խորհուրդը վորոշում ընդունեց։ «Ուկրաինական առաջին դիվիզիան Պրոսկոռովի սայոնում ուղերացիան վերջանալուց հետո փոխարինել նոր դիվիզիայի գորամասերով և ամբողջությամբ ուղարկել հարավային ճակատը»։

Սակայն այդ վորոշումն իրագործել չհաջողվեց։ Իրերի գրությունը թույլ չեր տալիս ֆրոնտից դուրս հանել մարտերով

զրադաշտ դիվիզիան։ Մինչև հուլիսի վերջը Գալիցիայի սահմանում կանգնած այդ դիվիզիան մնում եր խորհրդային ամենավստահելի պանովարն արեմուտքում։

\*\*\*

Հուլիսի վերջին Շչորսի դիվիզիայի ճակատը, վորը ձգված էր Սարնից մինչև Վոլոչիսկ, ցնցվեց։ Դրությունը խիստ փոխվեց։ Հարավ-արևեմուտքից հարձակման անցան Գալիցիայում վերակազմված պետլյուրական զորքերը։ Կուլակային բանդաների հետ միանալով՝ նրանք ճեղքեցին կարմիր Փրոնտը Ստանիսլավ-շիկից մինչև Պոպովյուխա և աբագ շարժվում եյին դեպի Ռւմանիա Վինիացանից առաջարկում 12-րդ Կարմիր Բանակի գորամասներից, վորոնք գործում եյին Սջափնյա Ուկրաինայի հարավային ուայոններում։ Սրբամուտքից Սարնիի կողմից սպառնում եյին դիվիզիայի թիկունքն անցնել սպիտակ լեհերի հեծյալ գորամասներ։ Իսկ այդ ժամանակ արևելքից կիեվի վրա եյին հարձակվում դենիկինցիները, վորոնք ոգոստոսի 1-ին գրավեցին Պոլտավան։ Շչորսի դիվիզիան հակահեղափոխական զորքերի ողակման մեջ եր ընկնում։

Բողոքնի անլան բրիգադը, վորը հուլիսի վերջերին գիրք եր գրավել Պրոսկոռությունի սայոնում, ստիպված եր նահանջել Գալիցիայի սահմաններից։ Պետլյուրան այդ բրիգադի գեմ կենտրոնացրել եր մինչև 15 հազար սպին։ Կասեցնելով պետլյուրականների հարձակումը հաճախակի հակագրուներով, բողոքները նահանջում եյին դեպի Ստարոկոնստանտինով։ Ոգոստոսի սկզբներին նրանք բանակն նահանջում էր անցնում գրավում համար 17-ին 12-րդ բանակի հեղափ. ուազմ. խորհուրդը վորոշում ընդունեց։ «Ուկրաինական առաջին դիվիզիան Պրոսկոռովի սայոնում ուղերացիան վերջանալուց հետո փոխարինել նոր դիվիզիայի գորամասերով և ամբողջությամբ ուղարկել հարավային ճակատը»։ Տայց ոգութելով թիվական հսկայական գերակշռությունից, պետլյուրականները համառ կերպով անցնում եյին բրիգադի աջ թեկի թիվունքը, բրիգադը կտրելով տարաշչացիներից։ Կոիվներում հյուծված, վաղուց արգեն մատակարարումից զուրկ, իրենց բրիգադի սիրելի հրամանատարը Բոժենկոյին կորցրած տարաշչացիները նահանջում եյին Գորին գետի այն կողմը։ Տարաշչայի 2-րդ գնդի հրամանատարը Շչորսին զեկուցում եր։ «Պունդը

միանդամայն քաղցում ե , յերեմն նույնիսկ մի կտոր հաց չի տեսնում , կարմիր-բանակայինները բորիկ ե մերկ են» : Եռվգու-  
րող-սեերցիները , վորոնք նույնպես կորցրել եյին իրենց բրիգա-  
դի հրամանատար ընկ . Զերնյակին , վորոն սալանվել եր թշնամու-  
դործակալների ձեռքով , նահանջում եյին դեպի նովոգրադ-Վո-  
լինսկ : Բոգունցիները , վորոնք Ստարոկոնստանտինովի մոտ  
շրջափակման մեջ եյին ընկել , այդ շրջափակումից դուրս եյին  
պրօել և նահանջում եյին՝ առանց կապ ունենալու գիլիկիայի  
շտարի հետ , գեղի Յերդիչովլ : Բայց Յերդիչովն արդեն գրավել  
եյին պետլյուրականները : Այն ժամանակ բոգունցիներն արա-  
գորեն շուռ յեկան դեպի Ժիտոմիր-Կորսոտեն : Այդ արդեն սկսո-  
ւուսի 20-ի մոտերն եր : Դենիկինցիները մոտենում եյին Պիեվին .

Շչորսը նախապատրաստում եր Կորոստենի պլացդարձի  
պաշտպանությունը , մի պլացդարձ , վորը պաշտպանում եր Կիե-  
վից գեղի Խորհրդային Ռուսաստան տաճող միակ ազատ յերկա-  
թուղին : Հեռագրական ժապավենի վրա պահպանվել ե այն խո-  
սակցությունը , վոր տեղի յե ունեցել Շչորսի և բանակի հրա-  
մանատարի միջև սկսուսուի 25-ին : Այդ խոսակցությունը շատ  
ցայտուն կերպով բնութագրում ե այն լարված իրադրությունը ,  
վոր կար Շչորսի այդ վերջին որերում :

Բանակի հրամանատար .— Ի՞նչ ուղերդվեր կան ուկրաինա-  
կան առաջին դիլիկիայում :

Շչորս .— Բացի գինաթափակած Նեժինի գնդից , յես ուրիշ  
փոչինչ չունեմ :

Բանակի հրամանատար .— Զեղ համար շատ լավ ուղերդի կա-  
րող են լինել կուրսանտները :

Շչորս .— Մեր առջեւ գեռ շատ գործ կա : Այդ մի լիցք չի  
լինի : Յես կդնամ կուրսանտների հետ , բայց այն ժամանակ այլին  
վոչ կուրսանտները կլինեն , վոչ յես : Յեթե գրությունն այդ  
պահանջում ե յեթե գուք վորոշել եք այս բոլորը զոհաբերել ,  
հրաման ավելիք :

Բանակի հրամանատար .— Բացի կուրսանտներից , վորոնք  
կողնեն նահանջողներին կարգի բերելու և իրենց պարտի կա-  
տարմանը վերադարձնելու , ուղերդի են բոլոր նրանք , վորոնք  
հրացաներ են կրում Ժիտոմիրում և վոլինի , Կիեվի նահանգի

այլ կետերում . պաշտպանության խորհուրդը վորոշել ե , վոր  
նահանդական և գասլառային կոմիտեների բոլոր անդամները  
պետք ե հրացան վերցնեն : Այժմ քարտեղը կվերցնեմ և ձեզ հետ  
խոսակցությունը կշարունակեմ : Վո՞րաել են գանլում յերրորդ  
բրիգադի զորամասերը :

Շչորս .— Նահանջում են նովոգրադ-Վոլինսկ :

Բանակի հրամանատար .— Վո՞րաել պիտի գրանց հավաքեք  
և պահեք :

Շչորս .— Հենց այնուկ նրանց կպահենք , Սլուչ գետի վրա :

Բանակի հրամանատար .— Նովոգրադ-Վոլինսկից յերկու  
ուղղություն կա : Հետեաբար , ամենից առաջ մենք պետք ե նշա-  
նակենք յերկու վստահելի զորամաս , թեկուզ յերկու վաշտ , վո-  
րոնք նովոգրադ-Վոլինսկն ընկնելու գեղեցում հակառակորդին  
պետք ե կասեցնեն կորոստենի և Ժիտոմիրի վրա հարձակվելիս :  
Այդ մինմումըն ե : Մաքսիմումն ե հավաքել այն բոլորը , ինչ վոր  
կա ձեր և նահանդական ռազմական կոմիտարի տրամադրության  
տակ և տեղավորել Սլուչ գետի մոտ : Մենք պետք ե ժամանակ-  
շահենք մինչև Պենզայի բրիգադի ժամանելը : Վո՞րաել ե յերկ-  
րորդ բրիգադը :

Շչորս .— Պոլոննոյե գյուղի և Շեպետովկայի միջև , հոգնած  
ե և խնդրում ե փոխարինել հանուն իր հեղափոխական զոհու-  
թյունների և ծառայությունների :

Բանակի հրամանատար .— Հանուն հեղափոխության հարկա-  
վոր ե հրամայել բրիգադին , վոր հակառակորդի արագ առաջ-  
խաղացման գեմն առնի այն մոմենտին , յերբ հանրապետության-  
բոլոր զորքերը հարձակում են սկսում կարեռագույն հակա-  
տում : Գլխավոր ճակատամարտի բախտն այստեղ չի վորոշվում :  
Պետք ե անսանելի ջանք գործադրել և թշնամուն կասեցնել : Ի՞նչ  
ուժեր են հարձակում յերրորդ բրիգադի վրա :

Շչորս .— Լիճերը հարձակվում են բացառապես հեծելազորով ,  
վորը կանգնած է Սարնիի մոտ , վերջացնելով Բուղնոյով և ավելի  
աջ :

Բանակի հրամանատար .— Այն վայրը , վորաել գուք գոր-  
ծում եք , հեծելազորի համար ամենահարմարն ե : Մի վաշտ ան-  
տառներում կարող ե կասեցնել հեծյալ գնդերը : Ակներեաբար

ձեզ պետք կլինի ամբողջ պաշտպանությունը կազմակերպել Սլուշ գետի մոս, ձեռք առնելով բոլոր միջոցները, վորպեսդի թշնամու առաջնաղացումը դեպի այդ գետը դանդաղի: Կրկնում եմ՝ մեր շահած ամեն մի որը մեզ համար թանգ է:


Նշորա.— Իուլոր միջոցները ձեռք կառնվեն:

\*\*\*

Դեպի Կորոստեն նահանջող ուկրաինական խորհրդային բուլը գորամաերը վերածվեցին մեկ 44-րդ դիվիզիայի: Ոգոստոսի 25-ին Շչորսն անցավ այդ դիվիզիայի հրամանատարությանը: Դիվիզիան խնդիր եր ստացել պահպանել Կորոստենի յերկաթուղային հանգույցը՝ ինչ գնով ուղում ե լինի: Դիվիզիայի շտաբն անցավ Կորոստեն: Շչորսը բրիդադներին հրամայեց պաշտպանել պաշտպանության իրենց հատկացված ճակատամասերը «մինչև վերջին սվինը»: Բողունի անվան առաջին բրիդալը, վորը Կորոստենը պաշտպանում եր ժիտողիրի կողմից, վորտեղից սպասվում եր գալիցիական-պետյուրական դորքերի գլխավոր հարվածը, գրավում եր պաշտպանության առաջին գծի դիրքերը, այն և Կրայեշինո-Կրապիվինկա-Տուրչինկա գյուղերը: Պաշտպանության յերկրորդ գիծը բողունցիները պատրաստում եյին Ուշոմիր-Զեպովիչի ռայոնում: Տարաշչայի յերկրորդ բրիդալը Կորոստենի պլացդարմը պաշտպանում եր Նովոգրադ-Վոլինսկի կողմից, Նովգորոդ-Սևերսկի Յ-րդ բրիդալը՝ Սարնիի կողմից: Այդտեղից հարձակվում եյին սպիտակ լեհերը:

Ինչ գնով ուղում ե լինի՝ պահեն Կորոստենի պլացդրամը—ահա Շչորսի առաջ դրված խնդիրը: Այդ խնդրի կատարումից եր կախված Աջափնյա Ուկրաինայում մնացող խորհրդային բոլոր զորքերի բախտը: Ինչպես միշտ պատասխանատու մոմենտներին, Շչորսը ինչ-վոր ապկեցուցիչ անխոնջությամբ եր աշխատում, որ ու գիշեր, անքուն, բայց բոլորովին հանդիսա, սառցե սառնասրատությամբ:

Կարգի բերելով, վերակազմելով դիվիզիայի գնդերը, վորոնք իսկույն գրավում եյին պաշտպանության ճակատամասերը, Շչորսը հնարավորություն եր գտնում այնպիսի՝ «մանրունքի» մասին մտածելու, ինչպես իր կուրսանտների զգեստավորման գույնը: Այդ որերը, մի անդամ՝ դիրքերից վերադառնալիս,



Սխեմա 6. 44-րդ դիվիզիան ու պաշտպանում ե Կորոստենի պլացդրամը: Խ Ձ թ. ոգոստոս

Շչորսը հրամայեց «կուրսանտների համար իմ գլխարկի գույնի պղեսավորում կարել»: Զնայած ծայրահեղորնն լարված մարտական իրակրությանը, Շչորսը պահանջում էր, վոր գլորոցի պարագմունքները շարունակվեն նորմալ կերպով: Կարմիր հրամանատարների՝ դիվիզիայի շտաբի հետ կորոստեն վոխադրված գլորոցը պատրաստվում էր առաջին շրջանավարտները տալուն: Կուրսանտները պարագում եյին ինչ-վոր աշխուսի լքված գործարնի չարգախի տակ: Դպրոցի համար լեփ-լեցուն Կորոստենում ավելի հարմար շենք Շչորսը չկարողացավ գտնել:

\*\*\*

Ողոստոսի 30-ին բողունցիները նահանջեցին պաշտպանության յերկրորդ դիմը: Պետլյուրականներն անցնում եյին նեժինի գնդի թիկունքը, մի գունդ, վորը գրավում էր ձախ թևում յեղած ճակատամասերից մեկը, Կիեվ-Կորոստեն յերկաթուղարձի ժոտ: Պետլյուրայի հարվածի ուղղությամբ շարժելով Բողունի անվան 2-րդ գունդը և պատրաստելով հակածարվածի համար իր վերջին ուղերվները— կարմիր հրամանատարների գլորոցը, Շչորսն ուղևորվեց պաշտպանության գծի ամենապատասխանառու ճակատամասը: Ողոստոսի 30-ի որվա յերկրորդ կեսին նա ժամանեց Բելոչիցա, վորտեղ գտնվում էր Բողունի անվան առաջին գնդի շտաբը: Գյուղի ծայրում, մարտկոցի մոտ, նրան դիմավորեց գնդի հրամանատարը:

— Առաջնորդի՛ր գեպի դիրքերը,— ասաց Շչորսը:

— Վայրն ամեն կողմից գնդակոծվում է, — նկատեց զնդի հրամանատարը, բայց Շչորսն ուշադրություն չդարձրեց դրան:

Հենց անմիջապես գյուղի մոտ կանաչին եր տալիս մի պուրակ: Այստեղ անդամական գնդի ուղերվ— 3-րդ գումարտակը: Շչորսն իր ուղեկցիների հետ նրա մոտից անցավ՝ ուղըղվելով դեպի յերկրորդ գումարտակը, վորը գրավում էր պաշտպանության գծի առջևի յեղը:

Դաշտում տեղաբեր գեռ գտնվում էր չհավաքված հացահատիկ: Առջեռում խրամատներից մի 800 մետր հեռու, փոքրիկ խուռորի այն կողմը, նկատելի յեր պետլյուրականների շարժումը:

Խրամատների յերկայնքով անցնելով՝ Շչորսը բարեւում էր ծանոթ բողունցիներին, մի քանիսի հետ զրուցում էր: Թեեւ նրա

գեմքը հոգնածությունից, անքուն գիշերներից կանաչել եր, բայց, ինչպես միշտ, Շչորսն առույգ տեսք ուներ, կատակներ եր անում:

Կարմիր բանակայիններն առում եյին.

— Լավ կլիներ, ընկեր դիվիզիայի հրամանատարը, վոր գույնույշ լինեցիք: Այստեղ այժմ գնդակները մեղքի նման եյին բզեցում:

Շչորսը ծիծաղում էր:

— Մի՞թե գնդակն ինձ կլպչի: Իմ հախից միայն արկը կդա:

Շչորսը ճանապարհը շարունակում էր, իսկ կարմիր-բանակայիններն իրար եյին հաղորդում Շչորսի կատակները:

Մի կարմիր-բանակայինն, Շչորսի ուշադրությունը դարձնելով առջեր գտնվող խուռորի վրա, ասաց:

— Սողունները շարժվում են: Կուտակվում են:

Շչորսը յերկդիտակով նայեց:

Հանկարծ ճաճռաց գնդացիքը: Գնդակները փոշու բաշեր բարձրացնելով՝ պառկում եյին Շչորսից մի քանի քայլ հեռու: Նա իսկույն պատկեց:

— Լավ են խիտում, սողունները,— ասաց նա յերկդիտակով նայելով:

Պետլյուրայի գնդացրորդը կրակում էր խուռորի ծայրին գտնվող մառանի կտուրից: Յերկդիտակով յերեւում էր կրակի պլացը:

— Քանի՛ արկ է հարկավոր՝ նրան վերցնելու համար,— հարցրեց Շչորսը կողքին պառկած մարտկոցի հրամանատարին և պատասխանին չսպասելով՝ ասաց:

— Համար մի խիլի՛ր, տեսնենք:

Մարտկոցի հրամանատարը կուղեկուղ վաղեց գեպի հրետանու դիտակենար:

Շչորսն առանց աչքը յերկդիտակից պոկելու՝ զրուցում էր կողքը պառկած մարտիկների հետ: Արեն արդեն սառչում էր, կարմրում և խոնարհում էր դեպի հորիզոնը:

Ամեն ինչ հեռու և պարզ յերեւում էր:

Զախ թերում հրամակությունը քանի զնում ուժեղանում էր:

— Նեֆինցիններին զոռում են, հա՛,— ասաց մարտիկներից մեկը:



44-րդ գիշեակա, „Կрасная правда“ լրագիր 1919թ. սեպտեմբերի 4-ի  
ընկ. Շնորհի հիշատակին նվազված համարը:

Եշորսը նայեց դեպի ձախ, բայց այդ բողեջին բովունցի-  
ների մարտկոցը կրակ լացից:

Մի քանի արկեր ընկան մասնի մոտ: Եշորսը հաշվում էր:  
«մեկ, յերկու, յիրեք, չորս»— և հանկարծ լսեց, զրուխը խո-  
նարհեց գեղի վայր, կարծես հողածովք լունից նեցի: Մեկը  
դաւաց:

— Ինկեր Եշորս:

Եշորսը չպատասխանեց: Մարտիկներից մեկը նրա գլխարկը  
չանց: Զախ բունքից միրուքի վրա արյան մի շիթ էր հսում: Ծոծրակի վրա մակերը նույնպես արյունոտ էրին: Գնդակը գրախը  
ծակել անցել էր:

«Այն ժամանակ չոր ամպային սրբ էրին,— պատմում ե-  
րովունի անվան 2-րդ գնդի նախկին կոմիտարը: Մեզնից շա-  
տերը բորիկ էրին ման զախի: Դժվար ժամանակներ էրին, թենի  
բազմաթիվ ամար և զերբներ ունենինը: Մենք աղակում երինք՝  
«Կեցը! ընկեր Լինինը», «Կեցը! որոշվիկինը», «Համուն Կո-  
մունիստկան ինսերնացիոնալի»— ուսո՞— և այս խստերով  
մարտ էրինք գնում: Մի գրահից հետո հանկարծ զեկուցագրով մի  
ձիավոր լրատար և զախի: Գնդի զրամանատարը ծրարը վերցնում  
է կարգում և: Կարգաց, զոհատվեց և ձեռքերն իջեցից: Յես  
ծրարը վերցրի, կարգացի, և իմ սիրա և կծկվեց: Գնդի հրա-  
մանատարը լուս նստած էր, հետ ասաց: «Ինկեր Եշորսն այլին  
չկա, մեռավ ընկեր Եշորսը»: Յեմ այնպես լաց յիշավ այդ հին  
մարտիկը, արտասուրները կարկտի նման թափվեցին, բայց վոչ  
թե այն պատճառով, վոր վախեցավ, այլ վորավչեան մենք սի-  
րում էրինք մեր 24 տարեկան հերոսին: Այդ որը մենք զեռ յիրեք  
անգամ հակագրածի գնացինը և այնուամենայինի ջախջախնեցինք  
թշնամուն, վորը ձգում էր Կորոստենի վերցնել»:

Այս պատմեցին 15 տարի հետո, 44-րդ զիվեկիայի կիեվի  
հայրենակցական միության ժողովում, վորը նվիրված էր Եշոր-  
սին վերաբերող հիշողությունների: Աւետիսինայի բոլշևիկներն  
ընկեր Ստալինի նախաճենությամբ, վորն առաջարկել է Եշորսի  
մասին Փիլմ ստեղծել, դպուչաբար հավաքում էրին իրենց ժո-  
ղովրդական հերոսի, Աւետիսինայի կանոնավոր Կարմիր Բանակն

ստեղծողներից մեկի, անվեհեր գորավարի և կուսակցությանն անսահման նվիրված բոլշևիկի մասին յեղած հիշողությունների ամեն մի նշույլն անդամ :

\*\*\*

Եչորսը մեռավ քաղաքացիական պատերազմի ամենակրիտիկական որերում : Համարյա նրա հետ միաժամանակ սեպտեմբերի 5-ին Ռուբալում Լիթշէնսկի մոտ սպանվեց Զապայեվը : Եչորսի մահից յերկու շաբաթ հետո Կորոստենից Սամարա ժամանեց սպոդացքը, և «Ռուկրախնտկան Զապայեվի» աճյունը հողին հանձնվեց :

Եչորսի ստացած վերջին մարտական հրամանը կատարվեց : Դիվիդիան սպահանեց Կորոստենի պլացդրամը :

Հեղափոխության ճակատներում այդ ժամանակ վճռական բեկում սկսվեց : Հարավային ճակատի կարմիր զորքերը ձեռնաժուխ եյին յեղել մեծ Ստալինի տված՝ Դենիկինի սովորակ բանակների ջախջախման վերաբերյալ պլանը կենսագործելուն : Ռոյոլի մոտ սկսվում եր այն գլխավոր ճակատամարտը, վորը վճռեց հակահեղափոխության բախտը : Լենինի-Ստալինի մեծ կուսակցության կողմից սոցիալիզմի համար, ԽՍՀՄ-ի ժողովուրդների յերջանիկ ապագայի համար մղվող պայքարում անեցրած Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի բոլոր զորամասերի հետ միասին հարձակման անցավ նաև Եչորսի դաստիարակած դիվիդիան :



## ՑԱՆԿ

Մեքենավարի վորդին	7
Ռադայի դաշտանությունը	19
Սեմյոնովկայի ջոկատի հրամանատարը	25
Առաջին մարտերը	31
Լենինի մոտ	39
Ժողովրդական ասպատամբություն	44
Գնդի կազմակերպումը	56
Բրուտների գումակներով	69
Հեղափոխությունը Գերմանիայում	75
Գերմանական հավատակիչների հետքերով	83
Հարձակում Կիեվի վրա	91
Պատասխան Պետլյուրային	106
Վիննիցայի գրավումը	114
Մարտեր Կորոստենի և Բերդիչևի մոտ	121
Կարմիր հրամանատարների դպրոցը	134
Թւային հարգած Պրոսկուրովին	142
Ինսպեկցիայի գրում տակ	149
Դիվիդիայի հրամանատարի մահը	152





